

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ
«ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ**

**«Գյուլմրիի անտառտնտեսություն» մասնաճյուղի
2023-2032 թթ.
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**



Բովանդակություն

| | |
|--|-----------|
| Աղյուսակների ցանկ | 5 |
| Քարտեզների ցանկ | 8 |
| ԱՄՓՈՓ ՆԱԽԱԲԱՆ | 9 |
| Բաժին 1. ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՏԱՌԱՃՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ | 11 |
| 1.1. Անտառտնտեսության տեղադրություն | 11 |
| 1.2. Տարածքի կազմավորումը | 13 |
| 1.3. Անտառտնտեսության սահմանները | 13 |
| 1.4. Անտառտնտեսության կառուցվածքը | 14 |
| 1.5. Անտառտնտեսության տարածքի փոփոխությունը | 14 |
| 1.6. Լեռնագրության, ռելիեֆի և հողերի բնութագրերը | 18 |
| 1.7. Կլիման | 25 |
| 1.8. Ջրագրությունը | 27 |
| 1.9. Բուսական և կենդանական աշխարհ | 29 |
| 1.10. Լանդշաֆտները | 31 |
| 1.11. Անտառաճման պայմանները | 32 |
| Բաժին 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈՂԻԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ | 33 |
| 2.1. Անտառի կատեգորիաներ | 33 |
| 2.2. Անտառների գնահատման մեթոդը | 34 |
| 2.3. Անտառտնտեսության հողերի դասակարգում | 36 |
| 2.4. Գույքագրման տվյալների ծրագրային ապահովում | 37 |
| 2.5. Քարտեզագրական աշխատանքներ | 37 |
| 2.6. Արբանյակային և աերո պատկերներ | 38 |
| 2.7. Քառակուսիների տեղաբաշխման սխեմա | 39 |
| 2.8. Կոլեկտիվ ուսուցում | 40 |
| 2.9. Անտառկառավարման պլանավորման մասնակցային մոտեցում | 42 |
| Բաժին 3. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ | 43 |
| 3.1. Անտառտնտեսության ընդհանուր տարածքի բաժանումն ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի | 43 |
| 3.2. Անտառային հողերի փոփոխությունն ըստ հողատեսքերի | 46 |
| 3.3. Անտառաձածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունը ըստ անտառկազմող ծառատեսակների... 48 | |
| 3.4. Անտառաձածկ տարածքի և պաշարի բաշխվածությունը ըստ ծովի մակերևույթից բարձրության... 50 | |
| 3.5. Անտառաձածկ մակերեսի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի..... 51 | |
| 3.6. Անտառաձածկ մակերեսի բաշխվածությունն ըստ լանջի թեքության և տարիքային խմբերի..... 53 | |
| 3.7. Անտառաձածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի | 55 |
| 3.8. Անտառաձածկ մակերեսի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության | 56 |
| 3.9. Անտառաձածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ հասակային դասերի | 58 |
| 3.10. Անտառի տիպը | 60 |
| 3.11. Անտառաճման պայմանների տիպ | 61 |
| 3.12. Հիմնական անտառկազմող ծառատեսակների գնահատման միջին ցուցանիշները | 62 |
| 3.13. Անտառի ներկա վիճակի վերլուծություն | 64 |
| Բաժին 4. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ | 66 |
| 4.1. Ընդհանուր տեղեկություններ | 66 |
| 4.2. Բնակչության սեռատարիքային բաշխվածքը | 69 |
| 4.3. Աշխատանքային միգրացիա..... | 70 |

| | |
|---|------------|
| 4.4. Սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների առկայությունը | 70 |
| 4.4.1. Տրանսպորտային ծառայություններ | 72 |
| 4.4.2. Այլ ենթակառուցվածքներ..... | 72 |
| 4.5. Աշխատուժ, զբաղվածություն և եկամուտներ..... | 72 |
| 4.6. Գյուղատնտեսություն | 73 |
| 4.7. Անտառամերձ համայնքների փայտանյութի պահանջարկ և թափուկ բնափայտի հաշվարկ | 73 |
| Բաժին 5. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ..... | 74 |
| 5.1. Ֆլորա..... | 75 |
| 5.2. Ֆաունա | 79 |
| 5.2.1. Անողնաշար կենդանիներ | 79 |
| 5.2.2. Ողնաշարավոր կենդանիներ | 81 |
| 5.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ և կենսաբազմազանության կարևոր տարածքներ..... | 91 |
| Բաժին 6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱՆՏԱՌՆԵՐ | 96 |
| 6.1. ԲԲԱԱ 1 Անտառային տարածքներ, որտեղ ներկայացված է միջազգային, տարածաշրջանային կամ ազգային նշանակություն ունեցող կենսաբազմազանություն | 96 |
| 6.2. ԲԲԱԱ 2. Միջազգային, տարածաշրջանային կամ ազգային նշանակություն ունեցող խոշոր անտառային լանդշաֆտներ | 97 |
| 6.3. ԲԲԱԱ 3. Անտառային տարածքներ, որոնք ներառում են հազվագյուտ կամ անհետացման վտանգի տակ գտնվող էկոհամակարգեր..... | 97 |
| 6.4. ԲԲԱԱ 4. Անտառային տարածքներ, որոնք իրականացնում են պաշտպանական հատուկ գործառույթներ..... | 98 |
| 6.5. ԲԲԱԱ 5 Անտառային տարածքներ, որոնք անհրաժեշտ են տեղական բնակչության կենսապահովման համար..... | 99 |
| 6.6 ԲԲԱԱ 6. անտառային տարածքներ, որոնք անհրաժեշտ են տեղական բնակչության մշակութային ավանդույթների պահպանման համար | 100 |
| Բաժին 7. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ..... | 101 |
| 7.1. Անտառաշահագործման և փայտամշակման բնութագիրը..... | 101 |
| 7.2. Բնափայտային անտառօգտագործում..... | 102 |
| 7.2.1. Անտառվերականգնման հատումներ | 102 |
| 7.2.2. Խնամքի հատումներ | 102 |
| 7.2.3. Անտառպաշտպանական միջոցառումներ | 107 |
| 7.3. Ոչ բնափայտային անտառօգտագործում..... | 108 |
| Բաժին 8. ԷԿՈԿԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ | 116 |
| 8.1. Ածխաթթու գազի կլանման ծառայության գնահատում..... | 117 |
| Աղյուսակ 36ա. Հողում (30սմ) ածխածնի կուտակման հաշվարկը (հազ. տոննա)..... | 119 |
| Աղյուսակ 36բ. Անտառային թափվածքում ածխածնի կուտակման հաշվարկը (հազ. տոննա) | 119 |
| 8.2. Ջրակարգավորող ծառայություններ | 120 |
| 8.3. Սննդի տրամադրման ծառայության գնահատում | 121 |
| 8.4. Էկոտուրիզմ..... | 122 |
| Բաժին 9. ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | 128 |
| 9.1. Անտառաճեցման պիտանելիության դասակարգում | 130 |
| 9.2 Անտառապատման և անտառվերականգնման եղանակներ | 130 |
| 9.3. Անտառմշակույթների հիմնման ժամանակ նախատեսվող սխեմաները | 131 |
| 9.4 Տնկանյութի աճեցում | 142 |
| 9.5 Նախատեսվող միջոցառումների արդյունքում անտառային տարածքների արդյունավետության բարձրացում..... | 146 |
| Բաժին 10. ԱՆՏԱՌԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ..... | 150 |

| | |
|---|------------|
| 10.1. Անտառպահպանության խնդիրներն ու պահաբաժինների առանձնացումը | 150 |
| 10.2 Ճանապարհային ցանց | 152 |
| 10.3. Պահպանություն անտառային հրդեհներից | 155 |
| Բաժին 11. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ | 158 |
| 11.1. Անտառի և կենսաբազմազանության պահպանություն | 159 |
| 11.2. Մոնիթորինգ և գիտական ուսումնասիրություններ..... | 159 |
| 11.2.1 Մոնիթորինգի ծրագիր | 160 |
| 11.2.2 Գիտական ուսումնասիրություններ..... | 161 |
| Բաժին 12. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ..... | 163 |
| Բաժին 13. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ | |
| ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 165 |
| 13.1. Եզրակացություն նախորդ անտառտնտեսվարման վերաբերյալ..... | 165 |
| 13.2. Առաջարկություններ | 165 |

Աղյուսակների ցանկ

| | |
|--|----|
| Աղյուսակ 1. Անտառտնտեսության կառուցվածքը | 14 |
| Աղյուսակ 2. Գյումրիի անտառտնտեսության քառակուսիների համարակալման ամփոփ տեղեկագիր ըստ անտառպետությունների | 16 |
| Աղյուսակ 3. ՀՀ Շիրակի մարզի ջրամբարների հիմնական ցուցանիշները..... | 28 |
| Աղյուսակ 4. Օդի ջերմաստիճանի ամսական ու տարեկան բազմամյա միջին ցուցանիշները, °C | 32 |
| Աղյուսակ 5. Մթնոլորտային տեղումների ամսական և տարեկան բազմամյա միջին ցուցանիշները, մմ | 33 |
| Աղյուսակ 6. Գնահատման հատվածների նվազագույն մակերեսը..... | 37 |
| Աղյուսակ 7. Արբանյակային պատկերների տեսակն ու օդալուսանկարները և դրանցով ապահովված մակերեսներն ըստ անտառպետությունների..... | 39 |
| Աղյուսակ 8. Անտառտնտեսության կազմակերպման հիմնական տարրերը..... | 40 |
| Աղյուսակ 9. Անտառտնտեսության հողատեսքերի բաշխվածությունն ըստ հիմնական նպատակային նշանակության կատեգորիաների..... | 44 |
| Աղյուսակ 10. Անտառպետությունների բաշխվածությունը ըստ հիմնական նպատակային նշանակության և անտառաձածկի | 45 |
| Աղյուսակ 11. Անտառտնտեսության հողատեսքերի բաշխվածությունն ըստ անտառպետությունների..... | 48 |
| Աղյուսակ 12. Անտառաձածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ անտառկազմող ծառատեսակների | 50 |
| Աղյուսակ 13. Անտառաձածկ մակերեսի և ընդհանուր պաշարի բաշխվածությունն ըստ ծովի մակերևույթից բարձրության | 50 |
| Աղյուսակ 14. Անտառաձածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ գերակշռող ծառատեսակների տարիքային խմբերի | 52 |
| Աղյուսակ 15. Անտառաձածկ ընդհանուր մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ լանջի թեքության աստիճանի և տարիքային խմբերի | 54 |
| Աղյուսակ 16. Գերակշռող հիմնական ծառատեսակների մակերեսների և պաշարների բաշխվածությունն ըստ լանջերի թեքության աստիճանի..... | 55 |
| Աղյուսակ 17. Անտառաձածկ մակերեսի բաշխվածությունն ըստ բոնիտետային դասերի..... | 55 |
| Աղյուսակ 18. Անտառաձածկ մակերեսի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության..... | 57 |
| Աղյուսակ 19. Անտառաձածկ մակերեսը և պաշարն ըստ գերակշռող ծառատեսակների ու հասակային դասերի | 59 |
| Աղյուսակ 20. Անտառաձածկ մակերեսի բաշխվածությունն ըստ անտառի տիպերի | 61 |
| Աղյուսակ 21. Անտառաձածկ մակերեսի բաշխվածությունն ըստ անտառաճման պայմանների տիպերի..... | 62 |
| Աղյուսակ 22. Անտառզնահատման միջին ցուցանիշներն ըստ գերակշռող ծառատեսակների..... | 63 |
| Աղյուսակ 23. Ընդհանուր տվյալներ հարակից բնակավայրերի վերաբերյալ..... | 66 |
| Աղյուսակ 24. Գյումրիի անտառտնտեսության տարածքում աճող ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները..... | 75 |
| Աղյուսակ 25. ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի տարածվածությունը Գյումրիի անտառտնտեսության սահմաններում ըստ քառակուսիների և անտառամասերի | 76 |
| Աղյուսակ 26. Գյումրիի անտառտնտեսության տարածքից հայտնի` ՀՀ Կարմիր գրքում գրանցված անողնաշար կենդանիների տեսակները | 80 |
| Աղյուսակ 27. Գյումրիի անտառտնտեսության տարածքից հայտնի ՀՀ Կարմիր գրքում գրանցված սողունների տեսակները..... | 85 |

| | |
|--|-----|
| Աղյուսակ 28. Գյումրիի անտառտնտեսության տարածքից հայտնի ՀՀ Կարմիր գրքում գրանցված թռչնատեսակները..... | 86 |
| Աղյուսակ 29. Գյումրիի անտառտնտեսության տարածքից հայտնի ՀՀ Կարմիր գրքում գրանցված կաթնասունների տեսակները..... | 88 |
| Աղյուսակ 30. ՀՀ Շիրակի մարզի բնության հուշարձանների ցանկը..... | 91 |
| Աղյուսակ 31. Անտառի պաշտպանական կատեգորիաները և ըստ գերակշռող ծառատեսակների հատման տարիքները | 101 |
| Աղյուսակ 32. Ամփոփագիր խնամքի հատումների հաշվարկային ծավալների ըստ հատման եղանակների և անտառպետությունների | 103 |
| Աղյուսակ 33. Ամփոփագիր խնամքի հատումների հաշվարկային ծավալների ըստ հատման եղանակների և հատվածների..... | 104 |
| Աղյուսակ 34. Անտառտնտեսությունում պտուղ-հատապտուղների մակերեսների և պաշարի (հաշվարկային տնտեսական բերք) բաշխվածությունն ըստ անտառպետությունների..... | 109 |
| Աղյուսակ 35. Անտառտնտեսությունում պտուղ-հատապտուղների մակերեսների և պաշարի բաշխվածությունն ըստ անտառզնահատման հատվածների | 109 |
| Աղյուսակ 36. Գյումրիի անտառտնտեսության տարածքների բնակչության կողմից հիմնականում օգտագործվող խոտաբույսերի և սնկերի պաշարները..... | 115 |
| Աղյուսակ 37. Անտառտնտեսության կենսազանգվածը ըստ գերակշռող ծառատեսակների (2022թ.)..... | 118 |
| Աղյուսակ 38. Կենդանի և անկենդան կենսազանգվածում կուտակված ածխածնի հաշվարկը.... | 119 |
| Աղյուսակ 39. Անտառներում կուտակված ածխածինը (2022թ.)..... | 119 |
| Աղյուսակ 40. Տարեկան միջին աճն ըստ ծառատեսակների | 120 |
| Աղյուսակ 41. Գյումրիի անտառտնտեսության պտուղ-հատապտուղային տեսակների հաշվարկային մոտավոր պաշարները և ընդհանուր շուկայական արժեքը..... | 121 |
| Աղյուսակ 42. Գյումրիի անտառտնտեսության տարածքների ուտելի խոտաբույսերի բերքի ծավալները և տնտեսական գնահատականը..... | 121 |
| Աղյուսակ 43. Պատմամշակութային հուշարձաններ | 123 |
| Աղյուսակ 44. Անտառմշակույթների վիճակն ըստ անտառպետությունների..... | 129 |
| Աղյուսակ 45. Ոչ անտառածածկ մակերեսների տեղաբաշխումն ըստ լանջի թեքության աստիճանի..... | 130 |
| Աղյուսակ 46. Ամփոփ հաշվեցուցակ Գյումրիի անտառտնտեսության անտառպատման և անտառվերականգնման միջոցառումների | 134 |
| Աղյուսակ 47. Անտառվերականգնման նախատեսվող տարածքների սերմերի և սերմնաբուսակտնկիների պահանջն ըստ անտառպետությունների | 142 |
| Աղյուսակ 48. Անհրաժեշտ տնկանյութի աճեցման հաշվարկ | 143 |
| Աղյուսակ 49. Տեղեկագիր անտառսերմնային մշտական տեղամասերի | 144 |
| Աղյուսակ 50. 2023-32թթ. ընթացքում նախատեսված միջոցառումներ | 146 |
| Աղյուսակ 51. 2023-32թթ. ժամանակաշրջանում հիմնման նախատեսված անտառմշակույթների աճի ցուցանիշները | 147 |
| Աղյուսակ 52. Տեղեկագիր անտառտնտեսության հողատեսքերում նախատեսվող փոփոխությունների | 148 |
| Աղյուսակ 53. Անտառածածկ մակերեսի տեսակային կազմի փոփոխությունն ըստ գերակշռող ծառատեսակների | 149 |
| Աղյուսակ 54. Գյումրիի անտառտնտեսության պահաբաժինները..... | 151 |
| Աղյուսակ 55. Անտառտնտեսության տարածքներն իրար կապող ավոճանապարհները..... | 154 |
| Աղյուսակ 56. Տեղեկագիր անտառային հողերի տեղաբաշխման ըստ հրդեհավտանգության դասերի | 156 |

| | |
|---|-----|
| Աղյուսակ 57. Տեղեկագիր հակահրդեհային միջոցառումների | 157 |
| Աղյուսակ 58. Պահպանության և մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ | 162 |
| Աղյուսակ 59. Գյումրիի անտառտնտեսության հաստիքային ցուցակ առ 01.12.2022թ. | 163 |
| Աղյուսակ 60. Ամփոփագիր Գյումրիի անտառտնտեսության բնափայտային արտադրանքների ծավալների..... | 164 |
| Աղյուսակ 61. Տեղեկագիր 2020-21 թվականներին իրականացված հիմնական աշխատանքների և ծախսերի ծավալների..... | 164 |

Քարտեզների ցանկ

| | |
|---|-----|
| Քարտեզ 1. Անտառտնտեսության տեղադրությունը | 12 |
| Քարտեզ 2. Անտառտնտեսության անտառպետությունները..... | 15 |
| Քարտեզ 3. Անտառտնտեսության լեռնագրությունը..... | 21 |
| Քարտեզ 4. Անտառտնտեսության տարածքի բարձրությունները ծովի մակարդակից..... | 22 |
| Քարտեզ 5. Անտառտնտեսության տարածքն ըստ լանջերի թեքությունների..... | 23 |
| Քարտեզ 6. Անտառտնտեսության տարածքն ըստ լանջերի կողմնադրությունների | 24 |
| Քարտեզ 7. Անտառտնտեսության ջրագրությունը | 29 |
| Քարտեզ 8. Անտառտնտեսության քառակուսային ցանցը..... | 40 |
| Քարտեզ 9. Անտառտնտեսության տարածքն ըստ հիմնական նպատակային նշանակության | 46 |
| Քարտեզ 10 Անտառհատվածների գերակշռող ծառատեսակները | 49 |
| Քարտեզ 11. Անտառհատվածներն ըստ տարիքային խմբերի | 53 |
| Քարտեզ 12. Անտառհատվածներն ըստ բունիտետային դասերի..... | 56 |
| Քարտեզ 13. Անտառհատվածներն ըստ ծառուտի լրիվության..... | 58 |
| Քարտեզ 14. Անտառհատվածներն ըստ հասակային դասերի..... | 60 |
| Քարտեզ 15. Անտառտնտեսության 5կմ-ոց գոտու հարակից բնակավայրերը | 68 |
| Քարտեզ 16. Անտառտնտեսության տարածքում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները | 77 |
| Քարտեզ 17. Անտառտնտեսության տարածքում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները | 90 |
| Քարտեզ 18. Շիրակի մարզի ԲՀՊՏ-ը..... | 93 |
| Քարտեզ 19. «Դողդոջուն կաղամախու ծառուտներ» կենսաբանական հուշարձանը..... | 94 |
| Քարտեզ 20. Շիրակի մարզի կենսաբազմազանության տեսանկյունից կարևոր տարածքները... | 95 |
| Քարտեզ 21. Անտառտնտեսության բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառները | 100 |
| Քարտեզ 22. Անտառտնտեսության տարածքում հանդիպող պտուղ-հատապտուղների տարածվածությունը..... | 114 |
| Քարտեզ 23. Անտառտնտեսությունում տարածքում հանդիպող ուտելի խոտաբույսերի և սնկերի տարածվածությունը..... | 116 |
| Քարտեզ 24. Անտառտնտեսության և հարակից տարածքի պատմամշակութային հուշարձանները | 125 |
| Քարտեզ 25. Առաջարկվող տուրիստական երթուղիները | 128 |
| Քարտեզ 26. Անտառտնտեսության պահաբաժինները | 152 |
| Քարտեզ 27. Անտառտնտեսության և հարակից տարածքների ճանապարհները..... | 155 |
| Քարտեզ 28. Անտառտնտեսության տարածքն ըստ հրդեհավտանգության դասերի | 158 |

ԱՄՓՈՓ ՆԱԽԱԲԱՆ

Շիրակի մարզի անտառներում անտառշինական աշխատանքներ իրականացվել են 1973 և 1983 թվականներին:

ՀՀ ՇՄՆ Անտառային կոմիտեի պատվերով 2022 թվականի փետրվարի 3-ից մեկնարկեցին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գյումրիի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառների և անտառային հողերի անտառաշինական նախագծերի (անտառակառավարման պլանների) նախագծահետազոտական աշխատանքները, ավարտը՝ դեկտեմբեր 2022թ.:

Համաձայն ծրագրի իրականացման պահանջների և տեխնիկական առաջադրանքի իրականացվել են.

- Գյումրիի անտառտնտեսության նախորդ անտառակառավարման պլանների գույքագրման և քարտեզագրական նյութերի ուսումնասիրություններ,
- կլիմայի, լանդշաֆտի, ռելիեֆի և անտառային հողերի տիպերի բնութագրում,
- անտառտնտեսության տարածքում ջրահավաք ավազանի, գետերի, լճերի և ջրամբարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- անտառտնտեսության տարածքի կենսաբազմազանության ուսումնասիրություն
- ծրագրի տարածքում բնակչության զբաղվածության, անտառանյութի տեղական սպառման շուկաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- ոչ բնափայտային անտառային պաշարների օգտագործման ուսումնասիրություն,
- նախորդ անտառշինության պլանշետների, անտառճառուտային պլանների և քարտեզ սխեմաների ուսումնասիրություն և դրանց թվայնացում,
- Շիրակի մարզի հողային ֆոնդի և սեփականության սուբյեկտների քարտեզագրական նյութերի ձեռք բերում և ուսումնասիրություն,
- անտառտնտեսության և հարակից հողօգտագործողների սահմանների վերաբերյալ իրավաբանական ձևակերպումների ուսումնասիրություն,
- հարակից համայնքների հետ անտառաշինական և համայնքների կադաստրային քարտեզներում առկա անտառային հողատեսքերի անհամապատասխանությունների ճշտման աշխատանքներ:

Անտառգույքագրման մեթոդների և դաշտային գործողությունների ուսուցման նպատակով ծրագրի հիմնական և օժանդակ (տեխնիկական) անձնակազմի համար կազմակերպվել է գործնական ուսուցում:

Իրականացվել են նաև կենսաբազմազանության գույքագրման և գնահատման, բարձրարժեք բնապահպանական անտառների որոշման և քարտեզագրման, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների գնահատման աշխատանքներ:

Դաշտային գույքագրման արդյունքները մշակվել են СОЛИ (система обработки лесоустроительной информации) համակարգչային ծրագրի հենքի վրա՝ արդիականացված СОЛИ-3 ծրագրային ապահովմամբ:

Քարտեզագրական նյութերը մշակվել են օգտագործելով ArcGIS ծրագրային ապահովումը, որը հնարավորություն է ընձեռնել դաշտային գույքագրման նյութերի հիման վրա ստեղծել բազմանպատակային ԱՏՀ տվյալների բազա, ինչի շնորհիվ էլ պատրաստվել են անտառառուտային և միջոցառումների պլաններն ու թեմատիկ քարտեզները: Թեմատիկ քարտեզների կազմման նպատակով թվայնացված (վեկտորիզացված) անտառային հատվածների քարտեզագրական բազան լրացվել է անտառգնահատման ցուցանիշներով՝ աղյուսակների կցման ճանապարհով, ընդ որում, թեմատիկ քարտեզներ հնարավոր է կազմել ցանկացած ցուցանիշի համար, որն առկա է COPII-3 անտառային հատվածային բնութագրերի բազայում:

Գույքագրման և անտառտնտեսության հարակից համայնքների վարչական սահմաններում անտառային հողերի կադաստրային քարտեզագրական նյութերի համադրությունն ի հայտ է բերել անտառային հողերի սահմանների և մակերեսների անհամապատասխանություններ, դրանք ճշտվել ու քարտեզները համաձայնեցվել են անտառտնտեսության և համայնքների հետ:

Համաձայն Հայաստանի անտառներում անտառաշինության և անտառկառավարման պլանների պատրաստման հրահանգի (2005թ.), սահմանված կարգով իրականացվել են տեխնիկական և անտառաշինական խորհրդակցությունները:

1-ին տեխնիկական խորհրդակցությունը կազմակերպվել է Գյումրիի անտառտնտեսության կողմից 22.05.2022թ. անտառտնտեսության գրասենյակում, քննարկվել են նախապատրաստական փուլի աշխատանքները, կայացվել են համապատասխան որոշումներ:

Անտառաշինական առաջին խորհրդակցությունը ևս կազմակերպվել է անտառտնտեսության գրասենյակում 29.03.2022թ: Քննարկվել են անտառկառավարման պլանի պատրաստման դաշտային փուլում իրականացվող գործողությունները, խնդիրները, անտառտնտեսության, համայնքների և անտառաշինական աշխատանքները իրականացնող կազմակերպության միջև համագործակցությունն ու այլ հարցեր:

13.09.2022թ. անց է կացվել երկրորդ տեխնիկական խորհրդակցությունը, որի ընթացքում քննարկվել են անտառաշինական դաշտային աշխատանքների կատարման արդյունքները, անտառների վիճակի և անտառտնտեսության վարման նախնական վերլուծությունը, տեղամասերի ցանկը, որտեղ նշանակվել են հիմնական անտառտնտեսական միջոցառումները և այլ խնդիրներ:

Երկրորդ անտառաշինական խորհրդակցությունը իրականացվել է անտառկառավարման ծրագրի հիմնական բաժինների մշակման ավարտից հետո 2022թ. դեկտեմբերի 21-ին, որի ընթացքում քննարկվել են՝

- անտառային ֆոնդի գնահատման հիմնական ցուցանիշները, առկա փոփոխությունների բնույթը և պատճառները նախորդ ժամանակաշրջանի համար,


- անտառային տնտեսության վարման վերլուծության արդյունքները,
- անտառօգտագործման ծավալները, վայրը, իրականացման եղանակները և մեթոդները, հատումների տնտեսական և անտառագիտական և բնապահպանական հիմնավորումները,
- անտառօգտագործման և անտառվերականգնման միջոցառումների ծավալները,
- անտառների հակահրդեհային և անտառպաշտպանական միջոցառումների ծրագիրը,
- կողմնարդյունքի (ոչ բնափայտային հումքի պաշարների) գնահատումը:

Բաժին 1. ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՏԱՌԱՃՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.1. Անտառտնտեսության տեղադրություն

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գյումրիի անտառտնտեսություն» մասնաճյուղը գտնվում է ՀՀ Շիրակի մարզում՝ Գյումրի, Ախուրյան, Ամասիա, Անի, Աշոցք և Արթիկ խոշորացված համայնքների վարչական սահմաններում, Ախուրյան գետի ջրհավաք ավազանում: Ընկած է 40°30'40" - 41°02'28" հյուսիսային լայնությունների և 43°46'34"- 44°06'02" արևելյան երկայնությունների միջև: Անտառտնտեսության ամենաերկար ձգվածությունը հյուսիսից դեպի հարավ է և կազմում է 59 կմ: Արևելքում սահմանակցում է ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղին, հյուսիսային հատվածում «Արփի լիճ» ազգային պարկն է (քարտեզ 1):

Քարտեզ 1. Անտառտնտեսության տեղադրությունը



1.2. Տարածքի կազմավորումը

1958թ. Լենինականի (այժմ՝ Գյումրի) քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն որոշում է ընդունում «Սևերսկի» տեղամասի 24հա երիտասարդ անտառտնկարկներից, զինվորական տնօրինության տակ գտնվող 248.3հա քաղաքի ենթակայության հողերից և «Մսի կոմբինատ» տեղամասի 39.5հա տնկարկներից՝ Լենինական քաղաքի շուրջը, կազմավորել 311.8հա-ի վրա կանաչ գոտի: Հենց այս տարածքի բազայի վրա Հայկական ՍՍՀ մինիստրների խորհրդի 01.04.1958թ. թիվ 204 որոշմամբ կազմակերպվել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) անտառտնտեսությունը: Սկզբում այն ուներ 3 անտառապետություն՝ Ջաջուռի, Լենինականի և Արթիկի: Հետագայում՝ 1963թ. կազմավորվել է 4-րդ՝ Արփիի անտառապետությունը, որի հիմնական խնդիրը հանդիսանում էր Արփի լճի ափամերձ տարածքների անտառապատումը:

Անտառտնտեսությունում առաջին անտառշինական աշխատանքներն իրականացվել են 1973թ., որի տվյալներով անտառտնտեսությունն ուներ 4 անտառապետություն՝ Լենինականի (992հա), Ջաջուռի (1268հա), Արթիկի (650հա) և Արփիի (309հա), ընդհանուր 3219հա տարածքով: Գյումրիի անտառտնտեսությունում, երբ 1983թ. երկրորդ անգամ կատարվեցին անտառշինական աշխատանքներ անտառտնտեսությունն ուներ 6 անտառապետություն՝ Արփիի (309հա), Ղուկասյանի (966հա), Ջաջուռի (1240հա), Լենինականի (354հա), Կառնուտի (488հա) և Արթիկի (768հա), ընդհանուր 4125հա տարածքով: Հետագայում Արթիկի անտառապետության և Արթիկի տարածաշրջանի համայնքային հողերի բազայի հիման վրա 1994թ. կազմավորվում է Արթիկի անտառտնտեսությունը, որը 1998թ. կրկին վերամիավորվում է Գյումրիի անտառտնտեսությանը:

Հետագայում ՀՀ կառավարության 16 ապրիլի 2009 թվականի N 405-Ն որոշման համաձայն ստեղծվում է «Արփի լիճ» ազգային պարկը, որի հիման վրա 21 հուլիսի 2011 թվականի N 1151-Ն կառավարության որոշման համաձայն հաստատվում են ազգային պարկի սահմաններն, ըստ որի «Գյումրիի անտառտնտեսություն» մասնաճյուղի Արփիի անտառապետության տարածքն ամբողջությամբ և Ղուկասյանի (ներկայիս Աշոցք) 1-ից-5-րդ քառակուսիները 227հա մակերեսով տարածքներն անցնում են ազգային պարկին: Բացի այդ նախկին Լենինականի և Կառնուտի անտառապետությունների միավորման արդյունքում ձևավորվում է Գյումրիի անտառապետությունը, իսկ Ղուկասյանի անտառապետությունը վերանվանվում է Աշոցքի անտառապետության:

1.3. Անտառտնտեսության սահմանները

Անտառտնտեսության սահմանները որոշվել են ռելիեֆային առանձնահատկություններով (ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր,

ճանապարհներ և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահման, ինչպես նաև խոշորամասշտաբ տեղագրական քարտեզների և արբանակային պատկերների վերձանման արդյունքների հիման վրա՝ հաշվի առնելով «Գյումրիի անտառտնտեսություն» մասնաճյուղի նախորդ կառավարման պլանի և համայնքների կադաստրային քարտեզները:

1.4. Անտառտնտեսության կառուցվածքը

«Գյումրիի անտառտնտեսություն» մասնաճյուղի կազմում ներկայումս ընդգրկված են չորս՝ Գյումրիի՝ 1042հա, Աշոցքի՝ 1069հա, Ջաջուռի՝ 1368հա և Արթիկի՝ 1042հա մակերեսով անտառպետությունները: «Գյումրիի անտառտնտեսություն» մասնաճյուղի ընդհանուր տարածքը կազմում է 4521հա (քարտեզ 2):


1.5. Անտառտնտեսության տարածքի փոփոխությունը

Անտառտնտեսության կազմավորումից ի վեր անտառտնտեսությունում տեղի են ունեցել մի շարք կառուցվածքային և մակերեսային փոփոխություններ, եթե 1973թ. անտառչինության արդյունքներով այն ունեցել է 4 անտառպետություն՝ 3219հա ընդհանուր մակերեսով, ապա 1983թ. անտառչինությամբ այն կազմված է եղել 6 անտառպետություններից՝ 4125հա ընդհանուր մակերեսով: Իսկ արդեն 2022թ. անտառչինության արդյունքներով անտառտնտեսությունը կազմված է 4 անտառպետություններից՝ ընդհանուր 4521հա մակերես տարածքով: 2022թ-ի՝ 1983թ. համեմատությամբ անտառտնտեսության մակերեսի ավելացումը 396 հեկտարով բացատրվում է Շիրակի մարզի համայնքների հողային ֆոնդի կադաստրային քարտեզների և անտառտնտեսության ընթացիկ գույքագրմամբ անտառային հողատեսքերի ու սահմանների ճշգրտման հանգամանքով, բացի այդ քարտեզագրական նորագույն տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում իրականացնել են առավել ճշգրիտ քարտեզագրում (աղյուսակ 1, 2):

Աղյուսակ 1. Անտառտնտեսության կառուցվածքը

| 1973թ. | | 1983թ. | | 2022թ. | |
|--------------------------|--------------|--------------------------|--------------|--------------------------|--------------|
| Անտառպետության անվանումը | Մակերեսը, հա | Անտառպետության անվանումը | Մակերեսը, հա | Անտառպետության անվանումը | Մակերեսը, հա |
| Լենինականի | 992 | Լենինականի | 354 | Գյումրիի | 1042 |
| | | Կառնուտի | 488 | | |
| - | - | Ղուկասյանի | 966 | Աշոցքի | 1069 |
| Ջաջուռի | 1268 | Ջաջուռի | 1240 | Ջաջուռի | 1368 |
| Արթիկի | 650 | Արթիկի | 768 | Արթիկի | 1042 |
| Արփիի | 309 | Արփիի | 309 | - | - |
| Ընդամենը | 3219 | Ընդամենը | 4125 | Ընդամենը | 4521 |

Քարտեզ 2. Անտառտնտեսության անտառպետությունները



Համաձայն 1983թ. անտառշինության անտառտնտեսությունը կազմված է եղել 6 անտառապետությունից, որոնք էլ իրենց հերթին բաժանված են եղել 72 քառակուսիների, որոնց ընդհանուր տարածքը կազմել է 4125հա, իսկ համաձայն 2022թ. անտառշինության անտառապետությունները չորսն են, քառակուսիների քանակը մնացել է անփոփոխ՝ 72, ընդհանուր մակերեսը 4521հա: Ստորև ներկայացվում է անտառտնտեսության 1983 և 2022թթ. անտառշինությունների քառակուսիների համարակալման և զբաղեցրած մակերեսների ամփոփ համեմատական ըստ անտառապետությունների (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Գյումրիի անտառտնտեսության քառակուսիների համարակալման ամփոփ տեղեկագիր ըստ անտառապետությունների

| Անտառապետություն | Քառակուսու համարը 2022թ. | Մակերեսը, հա | Անտառապետությունը և քառակուսու համարը 1983թ. | Մակերեսը, հա | Տարբերությունը, հա | Բացատրություն |
|------------------|--------------------------|----------------|--|--------------|--|--|
| Գյումրիի | 1 | 182 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի և համապատասխան ճշգրտումների |
| | 2 | 35 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի և համապատասխան ճշգրտումների |
| | 3 | 21 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի և համապատասխան ճշգրտումների, ինչպես նաև կադամախու ծառուտների ներառում |
| | 4 | 24 | - | - | - | Կադամախու ծառուտների ներառում |
| | 5 | 83 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի և համապատասխան ճշգրտումների |
| | 6 | 54 | Լենինականի 2 | 46 | 8 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 7 | 54 | Լենինականի 1 | 63 | -9 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 8 | 61 | Լենինականի 4 | 57 | 4 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 9 | 5 | Լենինականի 3 և 7 | 28 | -23 | Համապատասխանեցում Գյումրի քաղաքի կադաստրային քարտեզին |
| | 10 | 22 | Կառնուտի 1 | 35 | -13 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 11 | 75 | Կառնուտի 2 և 3 | 74 | 1 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 12 | 15 | Կառնուտի 5 | 21 | -6 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 13 | 70 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի և համապատասխան ճշգրտումների |
| | 14 | 79 | Կառնուտի 7 | 62 | 17 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 15 | 68 | Կառնուտի 6 | 72 | -4 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 16 | 20 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի և համապատասխան ճշգրտումների |
| | 17 | 130 | Կառնուտի 9 | 92 | 38 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 18 | 44 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի և համապատասխան ճշգրտումների |
| | - | - | Լենինականի 5 և 6 | 160 | - | Մասամբ անտառային հողեր, որոնք ներառվել են Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծում, որպես համայնքային սեփականություն |
| - | - | Կառնուտի 4 և 8 | 132 | - | Ոչ անտառային հողեր, որոնք ներառվել են Ախուրյան համայնքի Կառնուտ և Բասեն բնակավայրերի հողային ֆոնդում, որպես համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողեր | |
| Ընդամենը | | 1042 | | 842 | 255 | |

| Անտառապետություն | Քառակուսու համարը 2022թ. | Մ ավերեւը, հա | Անտառապետությունը և քառակուսու համարը 1983թ. | Մ ավերեւը, հա | Տարբերությունը, հա | Բացատրություն |
|------------------|--------------------------|----------------|--|---------------|--|---|
| Աշոցքի | 1 | 22 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի |
| | 2 | 49 | - | - | - | Նոր տարածքի այդ թվում անտառածածկ տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի և համապատասխան ճշգրտումների |
| | 3 | 57 | Ղուկասյանի 6 | 19 | 38 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 4 | 37 | Ղուկասյանի 7 | 44 | -7 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 5 | 46 | Ղուկասյանի 9 | 40 | 6 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 6 | 94 | Ղուկասյանի 10և11 | 116 | -22 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 7 | 12 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի և համապատասխան ճշգրտումների |
| | 8 | 59 | Ղուկասյանի 12 | 59 | 0 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 9 | 67 | Ղուկասյանի 13 | 35 | 32 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 10 | 44 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի և համապատասխան ճշգրտումների |
| | 11 | 129 | Ղուկասյանի 14 | 64 | 65 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 12 | 23 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ անտառածածկ տարածք |
| | 13 | 41 | Ղուկասյանի 15 | 63 | -22 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 14 | 25 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ անտառածածկ տարածք |
| | 15 | 137 | Ղուկասյանի 16 | 40 | 97 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 16 | 32 | Ղուկասյանի 17 | 44 | -1254 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 17 | 26 | Ղուկասյանի 18 (հատված 1) | 24 | 2 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 18 | 54 | Ղուկասյանի 18 (առանց հատված 1-ի) և 19 | 127 | -73 | |
| | 19 | 38 | Ղուկասյանի 20 | 52 | -14 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 20 | 30 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ անտառածածկ տարածք |
| | 21 | 16 | Ղուկասյանի 21 | 33 | -17 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 22 | 31 | Ղուկասյանի 22 | 25 | 6 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| - | - | Ղուկասյանի 1-5 | 227 | - | Ներառվել է Արփի լիճ ազգային պարկի կազմ | |
| - | - | Ղուկասյանի 8 | 6 | - | Պաշտպանական անտառաշերտի տարածք, որը չի ներառվել ներկայիս անտառային ֆոնդում | |
| Ընդամենը | | 1069 | | 966 | 117 | |
| Ջաջուռի | 1 | 33 | Ջաջուռի 1 | 36 | -3 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 2 | 59 | Ջաջուռի 2 | 57 | 2 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 3 | 58 | Ջաջուռի 3 | 63 | -5 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 4 | 55 | Ջաջուռի 4 | 50 | 5 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 5 | 56 | Ջաջուռի 5 | 76 | -20 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 6 | 57 | Ջաջուռի 6 | 54 | 3 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 7 | 75 | Ջաջուռի 7 | 76 | -1 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 8 | 100 | Ջաջուռի 8 | 89 | 11 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 9 | 134 | Ջաջուռի 9 | 90 | 44 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 10 | 78 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի |
| | 11 | 135 | Ջաջուռի 12 | 55 | 80 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |

| Անտառապետություն | Քառակուսու համարը 2022թ. | Մ ավերեւը, հա | Անտառապետությունը և քառակուսու համարը 1983թ. | Մ ավերեւը, հա | Տարբերությունը, հա | Բացատրություն |
|------------------|--------------------------|---------------|--|---------------|--------------------|--|
| | 12 | 32 | - | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի |
| | 13 | 99 | Ջաջուտի 13 | 57 | 42 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 14 | 48 | Ջաջուտի 14 | 51 | -3 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 15 | 63 | Ջաջուտի 15 | 50 | 13 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 16 | 43 | Ջաջուտի 16 | 36 | 7 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 17 | 58 | Ջաջուտի 17 | 54 | 4 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 18 | 59 | Ջաջուտի 18 | 68 | -9 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 19 | 89 | Ջաջուտի 19 | 75 | 14 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 20 | 37 | Ջաջուտի 20 | 37 | 0 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | - | - | Ջաջուտի 10 և 11 | 166 | - | Ոչ անտառային հողեր, որոնք ներառվել են Ախուրյան համայնքի Լեռնուտ բնակավայրի հողային ֆոնդում, որպես համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հող |
| Ընդամենը | | 1368 | | 1240 | | |
| Արթիկի | 1 | 65 | Արթիկի 1 | 65 | 0 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 2 | 99 | Արթիկի 2 | 88 | 11 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 3 | 134 | Արթիկի 3 | 133 | 1 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 4 | 99 | Արթիկի 4 | 102 | -3 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 5 | 48 | Արթիկի 5 | 46 | 2 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 6 | 84 | Արթիկի 6 | 79 | 5 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 7 | 84 | Արթիկի 7 | 104 | -20 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 8 | 83 | Արթիկի 8 | 71 | 12 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 9 | 82 | Արթիկի 9 | 80 | 2 | Համապատասխան ճշգրտումների արդյունք |
| | 10 | 62 | Արթիկի 10 | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի |
| | 11 | 152 | Արթիկի 11 | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի |
| | 12 | 50 | Արթիկի 12 | - | - | Նոր տարածքի ներառում՝ համաձայն կադաստրային քարտեզի |
| Ընդամենը | | 1042 | | 768 | | |
| Արփի | - | - | Արփի 1-ից-8 | 309 | | Ներառվել է Արփի լիճ ազգային պարկի կազմ |
| Ամբողջը | | 4521 | | 4125 | | |

1.6. Լեռնագրության, ռելիեֆի և հողերի բնութագրերը

Երկրաբանական կառուցվածքի տեսակետից Շիրակի մարզն ունի համեմատաբար երիտասարդ հասակ և միատարր հրաբխային կազմություն: Մարզի ռելիեֆի ձևավորման գործում գլխավոր դերը պատկանում է ալպյան լեռնակազմությանը, երբ տարածքը բարձրացել է ծովի հատակից և անցել ցամաքային զարգացման փուլ՝ վերընթաց տեկտոնական շարժումներ, ձևավորել են միջին բարձրության լեռներ: Նեոգենի ժամանակաշրջանի կեսերին տեղի ունեցած հզոր լեռնակազմական գործընթացների հետևանքով տարածքի հարակից լեռները դարձել են ավելի բարձր, իսկ հովիտները՝ ավելի խորը: Այդ ժամանակաշրջանում այստեղ գոյանում են երկրակեղևի տարբեր ուղղություններով ձգվող Սևան-Շիրակի, Ջավախք-Արագած-

Մասիսի և Աշոցքի բեկվածքները: Տեկտոնական շարժումներն ուղեկցվել են ակտիվ հրաբխականությամբ, որն ընդգրկել է մարզի ամբողջ տարածքը՝ սկսած Եղնախաղից, Աշոցքից մինչև Արագած: Հրաբխային արտաժայթույթները ծածկել են մեծ տարածություններ՝ իրենց տակ թողնելով ծալքավոր և ծալքաբեկորավոր լեռների խզման գծերի զգալի մասը՝ դրանց վրա առաջացնելով՝ Արագած լեռնազանգվածը, Ջավախքի, Աշոցքի, Եղնախաղի լեռնավահանները, Աշոցքի և Շիրակի սարահարթերը: Մի քանի փուլով հանդես եկած սառցապատումների ներգործությամբ Արագածի, Ջավախքի, Եղնախաղի լեռների բարձր մասերում առաջացել են կրկեսանման գոգավորություններ, տաշտականման լայն հովիտներ: Սառցադաշտերը լեռների լանջերին և ստորոտներին գոյացրել են մորենային կուտակումներ:

Շիրակի մարզում հյուսիսից հարավ առանձնացվում են Աշոցքի սարահարթը, Շիրակի գոգավորությունը և Արագածի հյուսիս-արևմտյան լեռնալանջերը: Ֆիզիկաաշխարհագրական տեսակետից մարզի տարածքը Շիրակի լեռներով բաժանված է երկու մասի՝ հարավում՝ Ախուրյանի միջին հոսանքի շրջանում, Շիրակի դաշտն է, իսկ հյուսիսում՝ Ախուրյանի վերին հոսանքի շրջանում, Աշոցքի համեմատաբար բարձրադիր սարահարթն է: Շիրակի լեռնաշղթան տարածվում է Ախուրյան գետի հովտից մինչև Փամբակ գետի վտակ Չիչկան գետի հովիտ (36 կմ), որի առավելագույն բարձրությունը Յուլասար գագաթն է 2556 մ: Շիրակի լեռնաշղթայի հարավային լանջերը զառիթափ են և խիստ քայքայված, իսկ հյուսիսային լանջերը փոքրաթեք են և թույլ քայքայված:

Շիրակի դաշտն ունի 1500-1600 մ բացարձակ բարձրություն, և սահմանակցում է արևելքում՝ Փամբակի, հյուսիսում՝ Շիրակի լեռնաշղթաներին, հարավում և հարավ-արևելքում՝ Արագածի լեռնազանգվածին ու Շարայի լեռանը, իսկ արևմուտքում՝ Կարսի սարահարթին: Շիրակի դաշտի մակերևույթը հարթ է, գրեթե ամբողջությամբ ծածկված հրաբխային ու լճագետային նստվածքներով, որի պատճառով խիստ աղքատ է մակերևույթային ջրերով: Զգալի տարածություններ ծածկված են տուֆային լավաներով: Շիրակի դաշտը եզրերում ունի դարավանդավորված, թույլ բլրոտ մակերևույթ, որը մեծ մասամբ կտրտված է սելավային հուններով: Այդ առումով աչքի է ընկնում սարահարթի հյուսիս-արևելյան մասում գտնվող Ջաջուռի թեք հարթությունը և Արագածի նախալեռներում՝ Մարալիկ-Պեմզաշենի ու Արթիկ-Մանթաշի դարատափերը: Դաշտի հարավային մասի մակերևույթը կազմված է անդեզիտաբազալտային լավաներից և գրեթե զուրկ է մակերևույթային հոսքից՝ միակ գետը Կարկաշանն է:

Աշոցքի սարահարթը ծովի մակերևույթից ունի 1800-2200 մ բարձրություն: Սարահարթը բաղկացած է փոքր բլրաթմբերով միմյանցից առանձնացող մի շարք գոգավորություններից: Բլրաթմբերը մեծ մասամբ անդեզիտաբազալտային լավային հոսքերի առաջացրած պատվարներ են, որոնք առանձին դեպքերում փակելով գետակների ընթացքը ձևավորել են փոքր լճակներ: Աշոցքի սարահարթի հյուսիս-

արևելքում՝ միջօրեականի ուղղությամբ, տարածվում է Ջավախքի լեռնաշղթայի հարավային մասը, հարավ-արևելքում՝ Բազումի լեռնաշղթայի ճյուղավորումներն են, որոնք Ջավախքի լեռնաշղթայից բաժանվում են Քարախաչի (2273 մ) լեռնանցքով, արևմտյան մասում՝ Եղնախաղի լեռնաշղթան է, հյուսիսում՝ Ջարիշատի, իսկ հարավում՝ Շիրակի լեռները: Սարահարթի առանձին տեղամասեր ներկայացված են բազալտային լավաներով, որոնց ճեղքերով Ախուրյան գետը առաջացրել է մինչև 130 մ խորությամբ կիրճ: Աշոցքի սարահարթում է գտնվում Արփի լիճ-ջրամբարը:


Ջավախքի լեռներն ունեն հրաբխային ծագում և առաջացել են նեոգենի և անթրոպոգենի ակտիվ հրաբխականության հետևանքով: Նրա ջրբաժանային հատվածում վեր են բարձրանում բազմաթիվ հրաբխային հանգած կոներ, որոնցից ամենաբարձրը՝ Աչքասարն է (3196 մ): Ջավախքի լեռներից դեպի արևմուտք՝ Վրաստանի սահմանով ձգվում են Ջարիշատի լեռները, որոնք աստիճանաբար ցածրանալով ձուլվում են կից հարթություններին: Եղնախաղի լեռները միջօրեականի ուղղությամբ ձգվում են Թուրքիայի և Վրաստանի սահմանով՝ մոտ 60 կմ երկարությամբ: Լեռնալանջերն աչքի են ընկնում կարճ, զառիթափ և էրոզիոն խոր մասնատվածությամբ: Առավելագույն բարձրության է հասնում Մեծ Եղնախաղ գագաթում (3042մ):

Շիրակի մարզում իր ֆիզիկաաշխարհագրական ինքնատիպությամբ առանձնանում է Արագած լեռնազանգվածը: Մարզի սահմանում է գտնվում Արագածի հյուսիսային, հյուսիսարևմտյան և մասամբ արևմտյան լանջերը, ընդհուպ մինչև գագաթը: Արագածի լանջերը մերձգագաթային և գագաթային մասերում զառիթափ են: Այստեղ պահպանվում են հնագույն սառցապատման հետքեր՝ կրկեսաձև գոգավորություններ: Արագածի լեռնավահանի ռելիեֆը բաժանվում է երեք մասի՝ գագաթային, մերձգագաթային սարավանդի և փոքրաթեք լանջերի:

Գյումրիի անտառտնտեսության տարածքի ռելիեֆը բազմաբնույթ է՝ առկա են համեմատաբար հարթ և լեռնոտ տեղամասեր: Գյումրիի անտառտնտեսությունը՝ տնկարկների և շատ քիչ տարածք զբաղեցնող բնական անտառների (հիմնականում կաղամախու ծառուտներ) փոքր կղզյակներով սփռված է Շիրակի դաշտում, Աշոցքի սարահարթում և դրանց հարակից Շիրակի, Ջավախքի ու Բազումի լեռնաշղթաների առանձին լեռնաբազուկների վրա: Գյումրիի անտառպետությունն ընկած է Շիրակի դաշտում և Աշոցքի սարահարթում, հետևաբար յուրահատուկ է համեմատաբար հարթ ռելիեֆը՝ առավելապես հարավահայաց կողմնադրությամբ: Ջաջուռի և Աշոցքի անտառպետությունների ռելիեֆն ունի լեռնային բնութագիր: Ջաջուռի անտառպետությունն ընկած է Շիրակի ու Փամբակի լեռնաշղթաների հիմնականում հարավ-արևմտահայաց ու արևմտահայաց լանջերին: Աշոցքի անտառպետությունն ընկած է գլխավորապես Շիրակի լեռնաշղթայի հյուսիսահայաց, Ջավախքի ու Բազումի լեռնաշղթաների հարավահայաց ու հարավ-արևմտահայաց լանջերին: Այս լեռնաբազուկներն աչքի են ընկնում բարձր էրոզայնությամբ ու կտրտված ձորակներով: Լեռնալանջերին հատուկ է մակերևութային քարքարոտությունն ու


մերկ քարաժայռերը: Արթիկի անտառապետությունում լեռնալանջերի մեծ թեքությունների ու ռելիեֆի մեծ կտրտվածության հետ կան նաև տեղամասեր, որոնց յուրահատուկ է հարթ ռելիեֆն ու փոքր էրոզացվածությամբ տարածքները (քարտեզ 3):

Քարտեզ 3. Անտառտնտեսության լեռնագրությունը




Անտառտնտեսություն տարածքը տարածվում է 1490-2500 մետր բարձրությունների վրա, իսկ անտառածածկ տարածքների շուրջ 96%-ը տեղաբաշխված են ծովի մակերևույթից 1800-2200 մետր բարձրություններում (քարտեզ 4):

Քարտեզ 4. Անտառտնտեսության տարածքի բարձրությունները ծովի մակարդակից




Անտառային հողերն ըստ լանջերի թեքության ընդունված է բաժանել հարթ մինչև 10°, թեթև զառիվայր՝ 10.1-20°, զառիվայր՝ 20.1-30° և կտրուկ զառիվայր՝ 30.1°-ից բարձր: Գյումրիի անտառոտնտեսության տարածքի լանջերի թեքությունները տեղ-տեղ անցնում են 45°-ը, իսկ ընդհանուր առմամբ գերակշռում են թեթև զառիվայր լանջերը՝ տարածքի շուրջ 40%-ը, ապա զառիվայր և հարթ լանջերը, որոնցից յուրաքանչյուրը հավասարապես զբաղեցնում են տարածքի 27%-ը, իսկ մնացած 6%-ը՝ կտրուկ զառիվայր լանջերն են: Լանջերի մինչև 10° թեքությունների վրա գտնվում է անտառածածկի 21,4%-ը (222,2հա), 11-20°-44,3%-ը (459,3հա), 21-30°-29,5%-ը (306,6հա), իսկ 4,8%-ը (50,0հա) գտնվում է 30°-ից բարձր թեքությունների վրա (քարտեզ 5):

Քարտեզ 5. Անտառոտնտեսության տարածքն ըստ լանջերի թեքությունների



Անտառտնտեսության տարածքի լանջերի կողմնադրություններում գերակշռում են հյուսիսայաց՝ այդ թվում հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան լանջերը, որոնք միասին կազմում են տարածքի շուրջ 50%-ը, հաջորդը հարավայաց՝ այդ թվում հարավարևելյան և հարավարևմտյան լանջերն են, որոնք զբաղեցնում են տարածքի 30%-ը, իսկ արևելյան և արևմտյան կողմնադրության լանջերը զբաղեցնում են անտառտնտեսության տարածքի համապատասխանաբար 6 և 14%-ը: Անտառտնտեսության անտառածածկ տարածքների լանջերի կողմնադրություններում գերակշռում են հյուսիսայաց լանջերը՝ 67%, հարավայացը կազմում է 19%, արևմտյանը՝ 11%, իսկ արևելյան լանջերը զբաղեցնում են անտառածածկ տարածքի ընդամենը 3%-ը (քարտեզ 6):

Քարտեզ 6. Անտառտնտեսության տարածքն ըստ լանջերի կողմնադրությունների



Գյուճարի անտառտնտեսության տարածքի հողածածկույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են ունեցել ռելիեֆն ու մայրական ապարները: Հանդիսանալով աշխարհագրական միջավայրի արդյունք՝ հողերի բնութագիրը փոխվում է, կախված վերլնթաց գոտիականությունից: Անտառտնտեսության տարածքին բնորոշ է լեռնային սևահողային գոտին, որը տարածվում է ծովի մակերևույթից 1500-2200 մ բարձրությունների վրա: Այս հողերն առանձնացվում են ծագումնաբանական հորիզոնների լավ զատորոշմամբ, կնձիկահատիկային կառուցվածքով, հզոր պրոֆիլով, վերին շերտերի ուժեղ հումուսացվածությամբ (4-11%): Ունեն չեզոք, կամ չեզոքին մոտ ակտիվ ռեակցիա, միջին և ավելի մեծ կլանունակություն, ծանր մեխանիկական կազմ: Հողերի գերակշիռ մասն ունեն փոքր ծավալային կշիռ, բարձր ծակոտկենություն և խոնավունակություն: Լեռնային սևահողերի ենթատիպերից են կարբոնատային, թույլ կարբոնատային և տարալվացված հողերը: Նախալեռների մատուցներում լեռնային սևահողերը հանդիպում են տուֆի շերտի վրա, որի հզորությունը կազմում է 36-85 սմ: Լեռնամարգագետնային հողերը հիմնականում տարածված են Զավախքի, Փամբակի, Արագածի լեռնալանջերի վրա, ծովի մակերևույթից 2200 մ և ավելի բարձրությունների վրա: Այստեղ հողագրությունների ուժեղ խոնավացումը և ցածր ջերմաստիճանը նպաստել են գաճաճ, ուժեղ ճիմ առաջացնող հացազգի տարախոտային և ընդհանուր բուսական խմբավորումների զարգացմանը, որտեղ բուսական մնացորդների թույլ հանքայնացումը նպաստել է ոչ հզոր տորֆացված շերտի և թույլ խտացված հումուսանյութերի ուժեղ կուտակմանը (13-25%): Տվյալ հողատիպի սահմաններում առանձնացվել են դարչնագույն, ճմատորֆային, մարգագետնային ենթատիպեր, որոնք նկատելի են Արփի լճի մերձակայքում:

1.7. Կլիման

Շիրակի մարզի կլիման, ընդհանուր առմամբ, բարեխառն է, բայց աչքի է ընկնում ցամաքայնությամբ և ըստ բարձրության դառնում ավելի խիստ: Մարզի տարածքի հարավային և հյուսիսային մասերի միջև կլիմայական մեծ տարբերություններ կան: Ամառը մարզի հարավում տաք է ու չոր ($+22^{\circ}\text{C}$), իսկ հյուսիսում՝ զով ($+15^{\circ}\text{C}$): Ձմեռը ցուրտ է և ձյունառատ, հյուսիսում՝ -10°C , հարավում՝ -5°C : Հյուսիսում լինում են սառնամանիքներ (-30° -ից -40°C): Աշոցքի սարահարթում՝ Պաղակն բնակավայրում, գրանցվել է օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը Հայաստանում -46°C : Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը Շիրակի դաշտում 500-550 մմ է, Աշոցքի սարահարթում և դրա շրջակա լեռներում՝ 700 մմ, իսկ Արագածի մերձգագաթային մասում՝ 900-1100 մմ: Մարզի լեռների բարձրադիր վայրերը տարվա մեծ մասը ծածկված են ձյունով: Վերլնթաց գոտիականության շնորհիվ Շիրակի մարզում ձևավորվում են հետևյալ կլիմայական տիպերը.

- Բարեխառն, համեմատաբար տաք ամառով և չափավոր ցուրտ ձմեռով կլիմայի տիպը բնորոշ է Շիրակի մարզի հարավարևմտյան համեմատաբար

ցածրադիր հատվածին: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը այստեղ կազմում է 6.0-6.5°C: Տեղումների տարեկան քանակը հասնում է 350-400 մմ: Ամռանը բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 37-38°C, քամու միջին արագությունը հասնում է մինչև 2.5-3.0 մ/վ, երեկոյան ժամերին կարող է հասնել մինչև 5 մ/վ և ավելի: Աշնան առաջին օրերին օդի ջերմաստիճանը 15°C-ից իջնում է ցած, դադարում են խորշակային եղանակները: Աշնան առաջին կեսին գերակշռում են արևոտ, իսկ երկրորդ կեսին թխպամած և անձրևային օրերը: Ձմռանը հունվարյան միջին ջերմաստիճանը -6-ից -7°C է, իսկ բացարձակ նվազագույնը կարող է հասնել -30-ից -32°C: 15-30 սմ հզորությամբ կայուն ձնածածկույթ առաջանում է գրեթե ամեն տարի, որը ձևավորվում է դեկտեմբերի երկրորդ տասնօրյակում: Ձմռան ընթացքում ձնաբուքը հազվադեպ երևույթ է, այն տևում է ընդամենը 4-5 օր: Գարունը տևական է և մեղմ, համեմատաբար խոնավ, տեղումներն ունեն հորդառատ բնույթ հաճախ ուղեկցվում են ամպրոպներով և կարկուտներով:

- Բարեխառն՝ մեղմ ամառներով և ցուրտ ձմեռներով կլիմայի տիպը բնորոշ է Շիրակի դաշտին և Արագածի հյուսիսարևմտյան լանջերին՝ մինչև 1800 մ բարձրությունները: Այս գոտում միջին տարեկան ջերմաստիճանը 5-ից 6°C է: Մայիսի վերջում, իսկ երբեմն նաև հունիսի առաջին կեսում այստեղ հնարավոր են վտանգավոր ցրտահարություններ: Ամենատաք ամսվա միջին ջերմաստիճանը Շիրակի դաշտում հասնում է 20°C-ի, իսկ Արթիկում՝ մոտ 19°C: Ձմեռն առանձնապես ցուրտ է Շիրակի գոգավորության հատակում, որտեղ հունվարյան միջին ջերմաստիճանը -10°C է: Ձմռան տևողությունը Գյումրիում կազմում է 110-130 օր, իսկ Արթիկում միջինը մոտ 110 օր: Ինվերսիոն երևույթների հետևանքով Գյումրիում օդի ամասական միջին ջերմաստիճանը հունվարին և փետրվարին ավելի ցածր է, քան ավելի բարձրում գտնվող Ամասիա, Ջաջուռ, Արթիկ բնակավայրերում: Ձնածածկույթի միջին տասնօրյակային հզորությունը Գյումրիում կազմում է 20 սմ, իսկ Արթիկում՝ 16 սմ: Մթնոլորտային տեղումների քանակը տարվա ընթացքում կազմում է 500-600 մմ, որից ամռանն ընդամենը 40-50 մմ:

- Չափավոր ցուրտ, կարճատև զով ամառներով և ցուրտ ձմեռներով կլիմայի տիպը հատուկ է մարզի հյուսիսային շրջաններին և Արագածի արևմտյան լանջերին: Ամառը զով է ու կարճ: Այս գոտու միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է մոտ 2°C: Ամռան բոլոր ամիսներին հնարավոր են ցրտահարություններ (բացասական ջերմաստիճանները կարող են հասնել -2-ից -3°C): Հուլիս և օգոստոս ամիսներին միջին ջերմաստիճանը մոտ 14°C է, իսկ բացարձակ առավելագույնը հասնում է 31-ից 33°C: Կայուն ձնածածկույթը պահպանվում է դեկտեմբերից մինչև ապրիլի կեսերը: Ձնածածկույթի առավելագույն միջին տասնօրյակային հզորությունը կազմում է մոտ 60 սմ, իսկ բացարձակ առավելագույնը՝ շուրջ 140 սմ: Հունվար և փետրվար ամիսներին միջին ջերմաստիճանը -11-ից -12°C է, իսկ բացարձակ նվազագույնը՝ -31°C, Աշոցքում այն հասնում է -42°C (Պաղակն), որի պատճառը ինվերսիան է:

Ձմռան ընթացքում ձնաբուքով օրերի թիվը միջինը 25 օր է, առանձին տարիներին այն հասնում է մինչև 40-ից 45 օր: Ձմռանը հաճախակի են մառախուղները՝ Պաղակնում միջինը կազմում է 15 օր, իսկ Արթիկում՝ 30 օր: Տարվա ընթացքում տեղումների քանակը կազմում է 600-700 մմ: Գերակշռում են հյուսիսային քամիները, որոնց միջին տարեկան արագությունները 2-3 մ/վ է:

- Բարձրալեռնային ցուրտ կլիման ձևավորվում է մարզի հյուսիսային շրջանների և Արագածի լեռնազանգվածի 2400-3000 մ բարձրություններից վեր: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կարող է բարձրանալ մինչև 20°C, ընդ որում ամռան բոլոր ամիսներին կարող են դիտվել օդի ջերմաստիճանի 0°C-ից ցածր իջնելու դեպքեր: Այստեղ ամռանը պակասում է ամպամած օրերի թիվը և տեղումների քանակը (սակայն մոտ 50 մմ-ից ոչ պակաս): Կայուն ձնածածկույթը մնում է մոտ 250 օր: Ամենացուրտ ամսվա միջին ջերմաստիճանը -13-ից -14°C է, իսկ բացարձակ նվազագույնը մոտ -39°C: Տեղումների քանակը այս գոտում 800 մմ-ից ավելի է: Քամու արագությունը ամբողջ տարվա ընթացքում միջինը 5-7 մ/վ է: Այստեղ հաճախակի են դիտվում 15մ/վ-ից ավելի ուժեղ քամիներ:

Անտառտնտեսության տարածքին բնորոշ են՝ բարեխառն՝ մեղմ ամառներով և ցուրտ ձմեռներով և չափավոր ցուրտ, կարճատև զով ամառներով և ցուրտ ձմեռներով կլիմայի տիպերը:

1.8. Զրագրությունը

Ռելիեֆի, կլիմայի և ջրատերակրամանական կառուցվածքի առանձնահատկությունների շնորհիվ Շիրակի մարզն ունի համեմատաբար թույլ զարգացած ջրագրական ցանց: Մարզի գետային ցանցը գրեթե ամբողջությամբ պատկանում է Արաքս գետի ավազանին: Գետային ցանցի խտության գործակցի միջին արժեքը կազմում է 0.53 կմ/կմ²: Զրային պաշարների հաշվեկշռում կարևոր է Շիրակի արտեզյան ավազանի դերը:

Շիրակի մարզի, ինչպես նաև Գյումրիի անտառտնտեսության միակ խոշոր գետը Ախուրյանն է՝ Արաքսի ձախակողմյան վտակը, որը սկիզբ է առնում Արփի լճից՝ 2017 մ բարձրությունից: Գետի ակունքում կառուցվել է ամբարտակ, և բնական լիճը վերածվել է ջրամբարի: Վերին հոսանքում հոսում է ՀՀ տարածքով, միջին և ստորին հոսանքներում սահմանային գետ է Հայաստանի և Թուրքիայի Հանրապետությունների միջև: Երկարությունը 186 կմ է, ավազանը 9700 կմ²: Լեռնային գետ է՝ 1071 մ ընդհանուր, և 5.8 մ միջին անկումով: Գետի ընդհանուր երկարությունը Շիրակի մարզում մոտ 105 կմ է: Սնումը խառն է. գերակշռում է ստորերկրյան (59%), վարարում է գարնանը, որի ընթացքում ձևավորվում է տարեկան հոսքի 57%-ը: Տարեկան միջին ծախսը 34.4 մ³/վրկ է: Ախուրյանի վտակներից են՝ Կարախանը, Կումայրին, Կարկաչանը, Աշոցքը, Զաջուռը, Մանթաշը, Գեղածորը, որոնք ամռանը գրեթե ցամաքում են: Առավել սելավաբեր են Կումայրի, Հացիկ, Զաջուռ, Մուսայեյան, Կամո, Հովիտ վտակները, որոնք որպես սելավներ գործում են

հատկապես ամառային հորդառատ, հաճախ կարկտախառն անձրևների պատճառով: Սելավաբեր է նաև Կարկաչան գետի Արթիկջուր վտակը:

Աշոցք գետը սկիզբ է առնում Ջավախքի լեռնաշղթայի Քարախաչի լեռնանցքի մոտակայքից՝ 2350 մ բարձրությունից: Երկարությունը 20 կմ է, ջրհավաք ավազանը՝ 197 կմ²: Գետահովիտը վերին հոսանքում կիրճանման է, տեղ-տեղ՝ ճահճապատ, ստորինում առաջացնում է բազմաթիվ գալարներ: Սնումը հիմնականում ստորերկրյա (85 %) և հալոցքային (14%) է, վարարումը՝ մայիս-հունիսին: Տարեկան միջին ծախսը 4,1 մ³/վ է:


Անտառտնտեսության տարածքը հարուստ է սառնորակ աղբյուրներով և ստորերկրյա ջրերով: Վերջինիս պաշարները հասնում են 4 մլն. մ³: Աշոցքի սարահարթում կան ճահճուտներ:

Թուրքիայի հետ սահմանին՝ Ախուրյան գետի վրա կառուցվել է Ախուրյանի ջրամբարը, որն իր 525 մլն մ³ ծավալով խոշորագույնն է: Մարզի տարածքում՝ Ախուրյան գետի ձախակողմյա վտակների վրա կառուցվել են նաև՝ Կառնուտի, Մանթաշի, Սառնաղբյուրի, Վարդաքարի, Թավշուտի ջրամբարները, ինչպես նաև Շիրակի ջրանցքը, Գյումրիի ՋրէԿ-ը: Մարզում դեռևս անավարտ է Կապսի ջրամբարը (աղյուսակ 3, քարտեզ 7):

Աղյուսակ 3. ՀՀ Շիրակի մարզի ջրամբարների հիմնական ցուցանիշները

| Ջրամբար | Մակերեսը, կմ ² | Ծավալը, մլն. մ ³ | Նպատակը |
|--------------|---------------------------|-----------------------------|---------|
| Ախուրյանի | 41.8 | 525,0 | ռոռզման |
| Արփիի լճի | 22.0 | 105,0 | ռոռզման |
| Թավշուտի | 0.6 | 6,0 | ռոռզման |
| Սարալճի N1 | 0.03 | 0,056 | ռոռզման |
| Սարալճի N2 | 0.025 | 0,21 | ռոռզման |
| Ջաջուտի | 0.08 | 0,22 | ռոռզման |
| Կառնուտի | 2.15 | 23.9 | ռոռզման |
| Վարդաքարի | 0.86 | 5,0 | ռոռզման |
| Մարալիկի | 0.024 | 0,23 | ռոռզման |
| Սառնաղբյուրի | 0,56 | 5,0 | ռոռզման |
| Մանթաշի | 0.764 | 8.2 | ռոռզման |

Քարտեզ 7. Անտառնտեսության ջրագրությունը



1.9. Բուսական և կենդանական աշխարհ

Շիրակի մարզն աչքի է ընկնում հարուստ բուսական ու կենդանական աշխարհով, որը պայմանավորված է բնական պայմանների առանձնահատկություններով: Մարզում, ըստ վերընթաց գոտիականության իրար են հաջորդում բուսականության հետևյալ տիպերը.

- Լեռնատափաստանային բուսականությունը ձևավորվում է բարեխառն և չոր կլիմայի պայմաններում, զբաղեցնում է ընդարձակ մակերես՝ տարածվելով մարզի ցածրադիր շրջաններից մինչև 2300-2400 մ բարձրությունները: Այն ունի հարուստ տեսակային կազմ: Տարածված են տարատեսակ խոտաբույսեր՝ փետրախոտը, սեզը, շուղախոտը, կծմախոտը, թիթեռնածաղիկը, լրբազգիները, ինչպես նաև օշինդրը, դաշտավուկը, անթառամը և այլն: Փետրախոտային տափաստաններից ավելի բարձր՝ տափաստանային բուսականության մի առանձին տիպ են կազմում հացազգատարախոտային բույսերը, որոնք հաճախ կոչում են տարախոտային տափաստաններ:
- Մարգագետնատափաստանային բուսականությունը տարածվում է 2300 մ-ից վեր, համեմատաբար խոնավ վայրերում, որի շնորհիվ հարուստ է փարթամ և հյութեղ խոտերով: Այն բաժանվում է երկու ենթագոտու՝ ստորին կամ մերձալպյան և վերին կամ ալպյան: Մերձալպյան մարգագետինները միջանցիկ դեր են կատարում և կազմված են բարձր խոտերից: Այս ենթագոտին զբաղեցնում է 2800-2900 մ բարձրությունները: Մերձալպյան գոտում տարածվում են ցորենազգիները, լրբազգիները և տարախոտերի այլ տեսակներ՝ ցորնուկ, դաշտավուկ, ինչպես նաև երեքնուկ, խատուտիկ, մեխակ և այլն: Ալպյան բուսականությունը տարածվում է 2800-2900 մ-ից վեր և ծածկված է խոշոր ու վառ գույնի ծաղիկներով:

Կենդանական աշխարհի բազմազանությունը կապված է բուսականության բազմազանությամբ: Որոշ կենդանիներ, իրենց շարժունականության շնորհիվ, հանդիպում են գրեթե բոլոր գոտիներում: Դրանցից են նապաստակը, գայլը, աղվեսը, աքիսը, դաշտամուկը և այլն: Կենդանիների որոշ տեսակներ էլ փոփոխվում են ըստ վերընթաց գոտիների: Լեռնատափաստանային գոտին բնորոշ է կրծողներով: Տարածված են դաշտամուկը, ճագարամուկը, գետնասկյուռը, փոքրասիական համստերը, կույր մուկը և այլն: Մերձալպյան և ալպյան գոտում տարածված են թռչունների մի քանի տեսակ՝ արծիվ, գառնանգղ, եղջերավոր արտույտ, լեռնային հնդկահավ, ճնճղուկ և այլն: Շատ են միջատներն ու թիթեռները: Անտառտնտեսության տարածքում վայրի կենդանիներից հանդիպում են գայլը, աղվեսը, նապաստակը, խայտաքիսը, կզաքիսը, աքիսը, հնարավոր է լուսանը և այլն: Թռչուններից լայն տարածվածություն ունեն՝ ճնճղուկը, լորը, կաքավը, արտույտը, սոխակը, ծիծեռնակը, կաչաղակը, ագռավը, բազեն, արծվիկը և այլն: Կրծողներից հանդիպում են՝ դաշտամուկը, ճագարամուկը, գետնասկյուռը,

փոքրասիական համստերը և այլն: Ջրամբարներում ու գետերում կան ձկների մի քանի տեսակներ՝ ծածանը, խրամուլը և այլն: Մարզում սողուններից հետաքրքրություն է ներկայացնում Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում գրանցված Դարևակու իժը, որի արեալը Ջավախքի լեռնաշղթայի հարավային լանջերն են:

Անտառտնտեսության և հարակից տարածքները ևս առանձնանում են կենսաբազմազանության բարձր պոտենցիալով, որը մանրամասն ներկայացված է «կենսաբազմազանության պահպանություն» բաժնում:

1.10. Լանդշաֆտները

Շիրակի մարզի բնական լանդշաֆտները միատարր են: Բնական անտառները գրեթե բացակայում են: Լեռնալանջերի ձորակների ստվերոտ հատվածներում շատ փոքր կղզյակներով հանդիպում են կաղամախու ծառուտներ, որոնցից Ամասիա գյուղից 3 կմ դեպի արևմուտք հանդիպողները ընդգրկված են ՀՀ կառավարության կողմից հաստատված բնության հուշարձանների ցանկում «Դողդոջուն կաղամախու ծառուտներ» անվանումով՝ որպես կենսաբանական հուշարձան: Համաձայն բնության հուշարձանների հաստատված ցանկի՝ մեկ այլ կենսաբանական հուշարձան՝ «Փետրախոտային տափաստան» անվանումով, տարածվում է Ամասիա գյուղից 3 կմ հյուսիս-արևմուտք:

Մարզում տիրապետողը լեռնային տափաստաններն են՝ հումուսով հարուստ սևահողերով և խոտային բուսականությամբ: Բարձրադիր գոտում ընդարձակ տարածություններ են զբաղեցնում մերձալպյան ու ալպյան մարգագետինները: Լեռնային ռելիեֆի շնորհիվ տափաստանային գոտու բնական պայմանները բազմազան են, հետևաբար այստեղ ձևավորվում են չոր լեռնատափաստանային և լեռնատափաստանային լանդշաֆտները: Չոր լեռնատափաստանային լանդշաֆտները մարզի տարածքում զբաղեցնում են նախալեռնային գոտու 1450-1600 մ բարձրությունների սահմանները՝ Ախուրյան գետի հովտից մինչև Արագածի ցածրադիր լանջերը, որտեղ տեղումների քանակը կազմում է 350-400 մմ: Այստեղ տարածված են լեռնաշագանակագույն հողերը:

Լեռնային տափաստանները տարածվում են Շիրակի դաշտում և Աշոցքի սարահարթում, որտեղ տեղումների քանակը կազմում է 600-700 մմ: Ալպյան լանդշաֆտները տարածվում են լեռնալանջերում և սարավանդներում՝ Եղնախաղի և Ջավախքի լեռնավահանների լանջերին մինչև 2700-2800 մ բարձրությունները տարածված են ստորին ալպյան, իսկ ավելի բարձր՝ ալպյան մարգագետինները: Ստորին ալպյան մարգագետինների լանդշաֆտները լավ զարգացած են նաև Արագածի լեռնավահանում: Ձնամերձ լանդշաֆտները ձևավորվում են Շիրակի մարզը եզերող լեռնաշղթաների մերձգագաթային մասերում: Այն գրավում է 3200-3300 մ-ից բարձր գտնվող տարածությունները: Խիստ կլիմայով պայմանավորված հողաձածկույթ չի առաջանում:

1.11. Անտառածման պայմանները

Շիրակի սարահարթը քամիներից պաշտպանելու, լեռնալանջերի հողի էրոզիան կանխելու նպատակով, Գյումրիի անտառտնտեսության հիմնադրումից ի վեր, անցած ավելի քան 60 տարիների ընթացքում հիմնվել են արհեստական անտառմշակույթներ, հիմնականում սոճու, հացենու, թխկու, թեղու, բարդու և այլ ծառատեսակների տնկարկներ: Հարկ է նշել, որ անտառմշակույթները հիմնականում հիմնվել են փոքր մակերես զբաղեցնող, իրարից տարանջատված և աճման համար նպաստավոր պայմաններ ունեցող տեղամասերում:

Գյումրիի անտառտնտեսության տարածքում առանձնանում են չափավոր-խոնավ և չափավոր-ցամաքային անտառածման գոտիները: Չափավոր-խոնավ անտառածման գոտին առանձնանում է ոչ այդքան բարենպաստ անտառածման պայմաններով: Կլիման չափավոր ցուրտ է, զով ամառներով ու երկարատև ցուրտ ձմեռներով: Միջին տարեկան ջերմաստիճանը 5.8°C է: Գարունը չափավոր ցուրտ է, տևական, ձմեռային եղանակների հաճախակի վերադարձով: Աշունը բավականին ցուրտ է, ոչ երկարատև: Չափավոր-ցամաքային անտառածման գոտում ձմեռը ցուրտ է, ձյունառատ ու երկարատև: Ձնածածկով օրերի թիվը 94 է: Ոչ սառնամանիքային օրերով թիվը միջին հաշվով 146 է: Գարունը ցուրտ է, վերջին ցրտահարությունները նկատվում են մայիսի առաջին տասնօրյակում: Ամառը չափավոր շոգ է, իսկ աշունը՝ տաք և տևական: Կլիմայական այս առանձնահատկությունները բացատրվում են Գյումրիի անտառտնտեսության աշխարհագրական դիրքով, լեռնագրությամբ, ռելիեֆի բազմազանությամբ և վերընթաց գոտիականությամբ: Ստորև բերվում են Գյումրիի անտառտնտեսության տարածքի բազմամյա միջին կլիմայական հիմնական ցուցանիշներն ըստ օդերևութաբանական կայանների տվյալների (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Օդի ջերմաստիճանի ամսական ու տարեկան բազմամյա միջին ցուցանիշները, $^{\circ}\text{C}$

| Օդկայան | ԲԾՄ, մ | Հ | Փ | Մ | Ա | Մ | Հ | Հ | Օ | Ս | Հ | Ն | Դ | Տ |
|------------|--------|-------|-------|------|-----|------|------|------|------|------|-----|------|------|-----|
| Գառնահովիտ | 2166 | -7.8 | -6.7 | -3.3 | 2.9 | 8.3 | 11.9 | 15.8 | 16.4 | 12.4 | 6.7 | 0.3 | -4.7 | 4.4 |
| Աշոցք | 2009 | -11.6 | -10.9 | -6.5 | 1.9 | 7.7 | 11.1 | 14.6 | 14.8 | 10.4 | 4.8 | -1.2 | -7.9 | 2.3 |
| Պաղակն | 2004 | -12.7 | -11.1 | -6.6 | 1.2 | 7.8 | 10.7 | 13.9 | 14.1 | 10.1 | 4.5 | -1.6 | -9.2 | 1.8 |
| Ամասիա | 1876 | -9.5 | -7.9 | -3.4 | 3.2 | 8.8 | 12.4 | 15.8 | 16.1 | 12.3 | 6.9 | 0.2 | -6.2 | 4.1 |
| Ջաջուռ | 1792 | -8.4 | -6.9 | -2.3 | 4.5 | 9.9 | 13.3 | 16.7 | 17.0 | 13.3 | 7.7 | 0.9 | -5.2 | 5.0 |
| Արթիկ | 1750 | -8.2 | -6.3 | -1.8 | 5.3 | 10.6 | 14.1 | 17.6 | 18.2 | 14.1 | 8.5 | 1.6 | -4.6 | 5.8 |
| Մարալիկ | 1706 | -8.7 | -7.1 | -2.6 | 5.2 | 10.1 | 13.3 | 17.1 | 17.9 | 13.9 | 8.3 | 1.4 | -5.1 | 5.3 |
| Գյումրի | 1529 | -9.7 | -7.3 | -1.3 | 5.9 | 11.9 | 16.0 | 19.7 | 20.2 | 15.7 | 9.5 | 2.2 | -4.9 | 6.5 |

Միջին ջերմաստիճաններն ըստ տարվա եղանակների կազմում են. ձմեռ՝ -7.0°C , գարուն $+7.9^{\circ}\text{C}$, ամառ՝ $+17.1^{\circ}\text{C}$, աշուն՝ $+8.5^{\circ}\text{C}$: Ոչ սառնամանիքային շրջանի միջին տևողությունը 156 օր է: Վաղ աշնանային և ուշ գարնանային ցրտահարությունները կրճատում են վեգետացիոն ժամանակաշրջանի

տևողությունը, որը կարևոր նշանակություն ունի անտառահիմնման ժամանակ անտառտնկիների տեսականիների ընտրության ժամանակ:

Տեղումների միջին քանակն ըստ տարվա եղանակների կազմում է. ձմեռ՝ 62 մմ, գարուն՝ 177 մմ, ամառ՝ 148 մմ, և աշուն՝ 87 մմ: Տարվա տաք ժամանակաշրջանին հատուկ են հորդառատ անձրևները, որոնք հաճախ ուղեկցվում են կարկուտներով: Քամու ուղղությունն ըստ տարվա եղանակների հետևյալն է՝ ձմռանը, գարնանը և աշնանը՝ հյուսիս-արևելյան, իսկ ամռանը՝ հյուսիսային: Քամոտ օրերի թիվն առավելապես շատ են մարտ-օգոստոս ամիսներին (աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Մթնոլորտային տեղումների ամսական և տարեկան բազմամյա միջին ցուցանիշները, մմ

| Օղկայան | ԲԾՄ, մ | Հ | Փ | Մ | Ա | Մ | Հ | Հ | Օ | Ս | Հ | Ն | Դ | Տ |
|------------|--------|----|----|----|----|-----|----|----|----|----|----|----|----|-----|
| Գառնահովիտ | 2166 | 18 | 21 | 35 | 65 | 102 | 90 | 60 | 37 | 31 | 48 | 34 | 20 | 561 |
| Աշոցք | 2009 | 25 | 37 | 58 | 95 | 102 | 85 | 63 | 46 | 34 | 51 | 38 | 43 | 677 |
| Պաղակն | 2004 | 18 | 30 | 36 | 65 | 107 | 85 | 56 | 45 | 34 | 40 | 29 | 29 | 574 |
| Ամասիա | 1876 | 19 | 31 | 37 | 68 | 118 | 92 | 62 | 50 | 37 | 43 | 31 | 31 | 619 |
| Ջաջուռ | 1792 | 27 | 28 | 32 | 59 | 90 | 77 | 44 | 30 | 30 | 41 | 31 | 28 | 534 |
| Արթիկ | 1750 | 21 | 26 | 31 | 62 | 93 | 82 | 46 | 31 | 31 | 36 | 31 | 26 | 516 |
| Մարալիկ | 1706 | 19 | 25 | 37 | 65 | 76 | 85 | 68 | 35 | 23 | 44 | 36 | 22 | 535 |
| Գյումրի | 1529 | 17 | 21 | 27 | 34 | 95 | 63 | 42 | 33 | 32 | 30 | 23 | 20 | 437 |

Բաժին 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2.1. Անտառի կապեզորիաներ

Գյումրիի անտառտնտեսության կառավարման պլանի պատրաստման աշխատանքները կատարվել են համաձայն սույն ծրագրի տեխնիկական առաջադրանքի՝ հիմք ընդունելով ՀՀ Անտառային օրենսգիրքը (ընդունված է 2005 թվականի հոկտեմբերի 24-ին), համաձայն որի Հայաստանի Հանրապետությունում անտառներն ըստ իրենց նպատակային նշանակության դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

Պաշտպանական նշանակության անտառներ, որոնք են.

- ջրային օբյեկտների ջրապահպան գոտիների անտառները,
- բարձր թեքության (30°-ից ավել) վրա գտնվող անտառները,
- անտառների վերին և ստորին սահմանների 200մ լայնությամբ շերտը,
- բուսաբանական, կենդանաբանական այգիների, դենդրոպարկերի շրջակա անտառները՝ 100 մետր շառավղով,
- կիսաանապատային, տափաստանային, անտառտափաստանային գոտիներում աճող անտառները:

Հատուկ նշանակության անտառներ, որոնք են.

- Բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդգրկված անտառները,
- Քաղաքային և քաղաքամերձ անտառները,
- Ռեկրեացիոն և առողջարարական անտառները,

- Սահմանային, ռազմական նշանակության անտառները,
- Պատմական և գիտական արժեք ներկայացնող անտառները,
- Սանիտարական գոտիները պահպանող անտառները:
 - Արտադրական նշանակության անտառներ, որոնք են
- բնափայտի շարունակական արտադրությունն ապահովող անտառները, որոնք չեն դասվում հատուկ և պաշտպանական նշանակության անտառների շարքին:

2.2. Անտառների գնահատման մեթոդը

Անտառների ընդհանուր գույքագրումն իրականացվել է համաձայն անտառային տնտեսության կառավարման պլանների հրահանգը հաստատելու մասին ՀՀ գյուղատնտեսության նախարարի 10.08.2005թ. N130-Ն հրամանի՝ ընտրելով աչքաչափային-չափողական մեթոդը, որը հիմնված է բնականում անտառի աչքաչափային, ընտրողական չափողական և հաշվարկային գնահատման մեթոդների համատեղման վրա, իսկ միջոցառումներ նախատեսվող հատվածներում կիրառվել է հաշվարկային մեթոդը՝ հիմնականում շրջանաձև հրապարակների տեղադրմամբ:

Անտառի գնահատման բոլոր ցուցանիշները գրանցվել են գնահատման քարտում, որը հանդիսանում է հիմնական դաշտային փաստաթուղթը, ընդ որում այն լրացվել է գնահատման յուրաքանչյուր անտառային հատվածի համար: Հաշվի առնելով լեռնային անտառների հանգամանքը, անտառի հիմնական ցուցանիշներից բացի գրանցվել են նաև ծովի մակերևույթից միջին բարձրությունը, լանջերի թեքությունն ու կողմնադրությունը, հատվածի տեղը լանջի վրա (լեռնաշղթայի գագաթ, լանջի միջին մասը և այլն), հողի պաշտպանության և էրոզիայի աստիճանը (ուժեղ, միջին, թույլ), արժեքավոր և ռելիկտային տեսակներ և այլն: Լանջերի բաժանումն ըստ թեքության աստիճանի կատարվել է համաձայն լեռնային պայմաններում հատումների կատարման գործող կանոնների:

Լանջերն ըստ թեքության բաժանվում են հարթ՝ մինչև 10°, թեթև զառիվայր՝ 11-20° զառիվայր՝ 21-30°, կտրուկ զառիվայր՝ 30°-ից բարձր:

Շարահարկերի բաժանումը կատարում են հետևյալ պայմաններում.

- յուրաքանչյուր շարահարկի լրիվություն պետք է լինի ոչ պակաս քան 0,3 լրիվությունը
- շարահարկերի միջին բարձրության տարբերությունը պետք է կազմի ոչ պակաս քան 20%-ը
- շարահարկի միջին բարձրությունը կազմում է վերին շարահարկի բարձրության ոչ պակաս քան 1/4-ը:

Պարզ ծառուտներում տեսակային կազմը կամ բարդ ծառուտներում շարահարկը որոշվում է տոկոսային հարաբերությամբ անտառկազմող տեսակի պաշարից (անտառի էլեմենտ) և գրանցվում է ֆորմուլայով, որտեղ բերվում են յուրաքանչյուր ծառատեսակի կրճատ նշանակումը և յուրաքանչյուրի մասնակցության բաժինը ծառուտի կազմում՝ արտահայտված գործակցի տեսքով

(ամբողջ թվով), որում յուրաքանչյուր միավորը համապատասխանում է 10% մասնակցության չափի ընդհանուր պաշարում:

Ծառատեսակը, որի պաշարը կազմում է մինչև 2-5% ծառուտի ընդհանուր պաշարից (շարահարկ), գրվում է ֆորմուլայի կազմում «+» նշանով:

Միջին տարիքը որոշվել է անտառկազմող յուրաքանչյուր տեսակի համար և գրանցվել գնահատման քարտերում: Ծառուտի տարիքը հանդիսանում է գերակշռող տեսակի տարիքը:

Բոնիտետային դասը որոշվել է միջին տարիքով և միջին բարձրությամբ անտառի հիմնական էլեմենտի համար (շարահարկ):

Հարաբերական լրիվությունը որոշվում է առանձին ծառուտի ամեն շարահարկի համար՝ աչքաչափով, կամ լրիվաչափի օգնությամբ ծառերի տրամագծերի ընդլայնական կտրվածքների ընդհանուր մակերեսների գումարով, կամ շրջանաձև հրապարակներում ծառերի հաշվառման ճանապարհով կամ էլ ժապավենային հաշվառումով:

Բնափայտի 1 հա-ի պաշարը որոշվել է անտառի գնահատման ժամանակ ծառուտների առանձին շարահարկերի համար տարածաշրջանի համար ընտրված ծավալային աղյուսակներով:

Անտառի բնական վերածի նկարագրության համար նշվել են տեսակային կազմը, միջին տարիքը, միջին բարձրությունը, նմուշների քանակը՝ հազար հատ 1 հա-ի հաշվով:

Ենթանտառի նկարագրության ժամանակ նշվել են թփերի հիմնական տեսակները և նրանց խտության աստիճանը: Խտության աստիճանը որոշելու համար օգտագործում են հետևյալ չափանիշները՝ խիտ (տարածքի 50%-ից ավել ծածկված), միջին խտության (10-49% ծածկված) և նոսր (10%-ից պակաս):

Ճանապարհային հասանելիությունը նշվել է յուրաքանչյուր հատվածի համար: Մատչելի համարվում է հատվածը, եթե նրանով անցնում է ճանապարհը կամ հատվածի սահմանից մինչև ճանապարհը պակաս է 200 մ-ից: Գոյություն ունեցող բոլոր ճանապարհները պատկերվել են անտառային քարտեզներում:

Հատվածները հաջորդաբար համարակալվել են արաբական թվանշաններով՝ քառակուսու հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք:

Հարկ է նշել, որ անտառների դաշտային գնահատման աշխատանքներին իրենց մասնակցությունն են ունեցել նաև անտառտնտեսության աշխատակիցները (նկար 1):

Նկար 1.



2.3. Անտառային տնտեսության հողերի դասակարգում

Հողատեսքերի գույքագրման և գնահատման ժամանակ հիմք է ընդունվել անտառաշինության և անտառկառավարման պլանների պատրաստման հրահանգով/2005թ/ սահմանված հետևյալ դասակարգումը.

1. Անտառային հողեր - անտառապատ, կենդանական և բուսական աշխարհի պահպանման, բնության պահպանության, ինչպես նաև անտառով չծածկված, բայց անտառային տնտեսության կարիքների համար տրամադրված կամ նախատեսված հողեր: Անտառային հողերին պատկանում են.

- անտառածածկ հողերը,
- ոչ անտառածածկ հողերը,
- չմիակցված սաղարթով անտառմշակույթները,
- անտառային տնկարանները և պլանտացիաները:

2. Անտառածածկ տարածքներին վերագրվում են.

- 0,4 և բարձր լրիվությամբ երիտասարդ տարիքային խմբի ծառուտները,
- մնացած տարիքային խմբերի 0,3 և բարձր լրիվության ծառուտները,
- թփերով պատված հողատեսքերը, որոնցում առանց հատուկ անտառմելիորատիվ աշխատանքների հնարավոր չէ հիմնել անտառ:

3. Ոչ անտառածածկ անտառային հողերին պատկանում են.

- հատված տարածքները,
- անտառվերականգնման համատարած հատման հատատեղերը,
- բացատներ - որտեղ բացակայում կամ առկա են առանձին ծառեր,
- նոսրուտներ - 0,1-0,2 լրիվության ծառուտները (բացի երիտասարդ խումբը),
- հրդեհված - անտառի հատված մինչև ածի դադարեցման աստիճան վնասված,
- մահացած ծառուտներ - անտառամասեր ֆիտո և էնտո ներգործությունից, արտադրական արտանետումներից, ռեկրեացիոն բեռնվածության և այլ գործոնների ազդեցությունից արմատի վրա չորացած, մահացած ծառուտներ, ինչպես նաև համատարած քամատապալ և ձնետապալ անտառամասերը:

Գնահատման ժամանակ առանձնացվում են ոչ անտառային հողերի հետևյալ կատեգորիաները.

- գյուղատնտեսական հողահանդակներ և հատուկ նպատակային նշանակության հողեր, վարելահող, խոտհարքներ, արոտավայրեր, այգիներ, պտղատու տնկարաններ, անտառային ճանապարհներ, անտառուղիներ և հակահրդեհային ճեղքեր, էլեկտրահաղորդակցության, հեռախոսակապի գծեր, բնակատեղեր, ավազահանքեր, մելիորատիվ առուներ և այլն,
- հողեր, որոնք առանց հատուկ մելիորատիվ միջոցառումների պիտանի չեն անտառածեցման համար,
- ժայռեր, քարացրոններ, ճահճուտներ, ոչ անտառածածկ թեք լանջեր և այլն:

Աղյուսակ 6. Գնահատման հատվածների նվազագույն մակերեսը

| Հոդաոճեր | Մակերեսը, հա |
|---|---------------------|
| Ստուգման ժամանակաշրջանի անտառմշակույթներ | 0,1 |
| Բնական ծառուտներ | 0,3 |
| Ոչ անտառածածկ տարածքներ | 0,3 |
| Անտառսերմնային բազաներ | 0,1 |
| Բնության և մշակութային ժառանգության արժեքավոր օբյեկտներ | 0,1 |
| Վարելահողեր, այգիներ, ավազուտներ | 0,1 |
| Խոտհարք, արոտավայր | 0,3 |

2.4. Գույքագրման տվյալների ծրագրային ապահովում

Անտառտնտեսության դաշտային գույքագրման արդյունքները ենթարկվել են СОЛИ-3 (Система Обработки Лесоустроительной Информации) համակարգչային ծրագրային մշակման, որում համեմատած СОЛИ-ի տարածաշրջանային անտառածման պայմաններին համապատասխանեցնելու նպատակով՝ կատարելագործված և ավելացված են նոր մակետներ, ինչպիսիք են՝ ֆլորայի բնութագիրը, ֆաունայի հանդիպման արեալները, մարդածին ձևախախտումը, հողի բնութագիրը, ճանապարհներով ապահովվածությունը և այլն, որից և փոփոխվել է տվյալների բազայի կառուցվածքը, և որ շատ կարևոր է, մշակվել է կապ աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (USC) հետ:

Քարտեզագրական նյութերը մշակվել են ArcGIS համակարգչային ծրագրի ArcMap բաղադրիչի օգտագործմամբ, որը հնարավորություն է ընձեռել հեռազննման և դաշտային գույքագրման տվյալների հիման վրա՝ յուրաքանչյուր անտառհատվածի մակարդակով ստեղծել բազմանպատակային թվային բազա:

Ստեղծված թվային քարտեզագրական բազայից յուրաքանչյուր անտառհատվածի մակերես ներմուծվել է գնահատման քարտերի մեջ (կլորացված մինչև տասնորդական): СОЛИ-3 համակարգչային ծրագրի միջոցով ստացված հատվածային բնութագրերի տվյալները կապակցվել են քարտեզագրական բազային, որի հիման վրա էլ պատրաստվել են թեմատիկ քարտեզները, ընդ որում թեմատիկ քարտեզներ հնարավոր է կազմել ցանկացած ցուցանիշի համար, որն առկա է անտառային հատվածային բնութագրերի բազայում:

2.5. Քարտեզագրական աշխատանքներ

Գյումրիի անտառտնտեսության անտառների և անտառային հողերի քարտեզագրման համար հիմք են հանդիսացել.

- Գյումրիի անտառտնտեսության նախորդ անտառչինության (1983թ.) քարտեզագրական նյութերը,
- 1:10000 և 1:25000 մասշտաբի տեղագրական քարտեզները,

- անտառտնտեսության և հարակից տարածքների բարձր լուծաչափի արբանյակային պատկերները,
- անտառտնտեսության որոշ տարածքների օդալուսանկարները
- համայնքների հողային ֆոնդի, սեփականության սուբյեկտների կադաստրային քարտեզները
- դաշտային քարտեզագրական աշխատանքները

Վերը նշված նյութերը տեղափոխվել են աշխարհագրական տեղեկատվական համակարգ: Կատարվել է դրանց կապակցում աշխարհագրական ցանցին՝ WGS 84 կորդինատային համակարգում և իրականացվել է թվայնացում՝ անհրաժեշտ տվյալների բազայի ստեղծմամբ:

Համայնքների կադաստրային քարտեզներից և անտառչինական պլան-քարտեզներից վերցվել են անտառային հողերի սահմանները: Տեղագրական քարտեզներից վերցվել են գետային և ճանապարհային ցանցերը, բնակավայրերը, ծովի մակերևույթից ունեցած բարձրության հավասարագծերը (հորիզոնականներ) և այլ տվյալներ, որոնց միջոցով ճշտվել է անտառային տարածքների որոշ սահմաններ, օրինակ՝ քառակուսիների միջև սահմանները, որոնք անցնում են գետերով կամ ջրաբաժաններով: Անտառհատվածների միջին բարձրություններն ու թեքությունները և լանջի կողմնադրությունները որոշվել են անտառտնտեսության ռելիեֆի թվային մոդելի միջոցով:

Արբանյակային նկարների և օդալուսանկարների օգնությամբ կատարվել է անտառային տարածքի նախնական բաժանում՝ ըստ հատվածների: Ճշտվել են նաև ճանապարհային և գետային ցանցի որոշ տվյալներ, ինչպես նաև անտառային տարածքի արտաքին և ներքին սահմանները:

Համայնքների վարչական տարածքներում անտառային հողերի գույքագրման և գնահատման արդյունքներով բացահայտվել են համայնքների կադաստրային քարտեզներում անտառային հողատեսքերի անճշտությունները, որոնք սահմանների ճշտում իրականացրած կազմակերպության կողմից քարտեզագրվել և համաձայնեցվել են անտառտնտեսության, բնակավայրերի վարչական ու համայնքների ղեկավարների հետ:

2.6. Արբանյակային և աերո պարկերներ

Ինչպես քարտեզագրման, այնպես էլ անտառգնահատման աշխատանքների իրականացման համար ձեռք են բերվել բարձր լուծաչափի արբանյակային նկարներ, որոշ տարածքներում անօդաչու թռչող սարքի (DJI Mavic դրոն) միջոցով իրականացվել են օդալուսանկարահանումներ: Օգտագործվել են նաև ArcGIS Basemap WorldImagery առցանց բաց աղբյուրի արբանյակային նկարները (աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Արբանյակային պատկերների տեսակն ու օդալուսանկարները և դրանցով ապահովված մակերեսներն ըստ անտառապետությունների

| Հ/հ | Անտառապետության անվանումը | Արբանյակային պատկերի տեսակը և լուծաչափությունը | Պատկերներով ապահովված մակերեսը, հա |
|-----|---------------------------|---|---|
| 1 | Գյումրի | <ul style="list-style-type: none"> • 0,5 մ լուծաչափության բազմասպեկտրալ արբանյակային նկարներ • ArcGis Basemap առցանց բաց աղբյուրի արբանյակային նկարներ • Օդալուսանկարներ | 1042հա / 100% 1042հա / 100% 300հա / 28,8% |
| 2 | Աշոցք | <ul style="list-style-type: none"> • 0,5 մ լուծաչափության բազմասպեկտրալ արբանյակային նկարներ • ArcGis Basemap առցանց բաց աղբյուրի արբանյակային նկարներ • Օդալուսանկարներ | 1069հա / 100% 1069հա / 100% 17,7հա / 1,7% |
| 3 | Ջաջուռ | <ul style="list-style-type: none"> • 0,5 մ լուծաչափության բազմասպեկտրալ արբանյակային նկարներ • ArcGis Basemap առցանց բաց աղբյուրի արբանյակային նկարներ • Օդալուսանկարներ | 1368հա / 100% 1368հա / 100% 75հա / 5,4% |
| 4 | Արթիկ | <ul style="list-style-type: none"> • 0,5 մ լուծաչափության բազմասպեկտրալ արբանյակային նկարներ • ArcGis Basemap առցանց բաց աղբյուրի արբանյակային նկարներ • Օդալուսանկարներ | 1042հա / 100% 1042հա / 100% 270հա / 25,9% |

2.7. Քառակուսիների տեղաբաշխման սխեմա


Անտառտնտեսության տարածքի բաժանումը քառակուսիների կատարվել է հաշվի առնելով տեղանքի աշխարհագրական տարրերը՝ գետեր, ճանապարհներ և այլ գործոններ, ընդ որում նախորդ գույքագրման քառակուսային ցանցի սահմանները և դրանց համարակալումները հիմնականում չեն պահպանվել՝ կապված անտառտնտեսության անտառային հողերի սահմանների փոփոխման հետ, որն առավել մանրամասն ներկայացված է քառակուսիների համարակալման ամփոփ տեղեկագրում (աղյուսակ 2):

Ներկայումս անտառտնտեսության տարածքը բաժանվել է 4 անտառապետությունների և 72 քառակուսիների, ամենափոքր քառակուսու մակերեսը 5հա է, իսկ ամենամեծը 182հա, որոնք գտնվում են Գյումրիի անտառապետությունում: Անտառտնտեսության քառակուսիների միջին մակերեսը 63հա է: Անտառի գնահատման հատվածների ընդհանուր քանակությունը 1925 է, հատվածների միջին մակերեսը՝ 2,3հա: Նախորդ կառավարման պլանի քարտեզների համեմատ քառակուսիների քանակը պահպանվել է, իսկ հատվածներինը թեև դրանց քանակի վերաբերյալ հստակ տվյալները բացակայում են, սակայն առկա քարտեզների վերլուծությունը ցույց է տալիս որ դրանք ակնհայտորեն ավելացել են (աղյուսակ 8, քարտեզ 8):

Աղյուսակ 8. Անտառտնտեսության կազմակերպման հիմնական տարրերը

| Անտառպետության անվանումը | Տարին | Մակերեսը, հա | Քառակուսիների քանակը, հատ | Միջին մակերեսը | Հատվածների քանակը | Միջին մակերեսը |
|--------------------------|-------------|--------------|---------------------------|----------------|-------------------|----------------|
| Գյումրի | 2022 | 1042 | 18 | 58 | 349 | 3,0 |
| Աշոցք | 2022 | 1069 | 22 | 49 | 446 | 2,4 |
| Զաջուռ | 2022 | 1368 | 20 | 68 | 627 | 2,2 |
| Արթիկ | 2022 | 1042 | 12 | 87 | 503 | 2,1 |
| Ընդամենը | 2022 | 4521 | 72 | 63 | 1925 | 2,3 |

Քարտեզ 8. Անտառտնտեսության քառակուսային ցանցը



2.8. Կոլեկտիվ ուսուցում

Համաձայն Հայաստանի անտառներում անտառշինության և անտառկառավարման պլանների պատրաստման հրահանգի, դաշտային գույքագրումից առաջ կազմակերպվել է անտառի գույքագրման և քարտեզագրման գործնական կոլեկտիվ ուսուցում (նկար 1): Կոլեկտիվ ուսուցումն իրականացվել է նախօրոք ընտրված ծառուտում, որի նպատակը գույքագրող հիմնական և տեխնիկական անձնակազմին նախապատրաստելն ու անտառի գնահատում իրականացնելն է կոնկրետ գույքագրման տարածքի պայմաններում պահանջվող ճշտությամբ, յուրաքանչյուր կատարողի մասնագիտական մակարդակի և անտառի գնահատմանը նրա մասնակցության որոշումը և ճիշտ անտառտնտեսական միջոցառումներ նախագծելու հմտություն ուսուցանելը: Կոլեկտիվ ուսուցմանը մասնակցել են ծրագրի հիմնական և տեխնիկական անձնակազմը, նույն թվում անտառտնտեսության համապատասխան մասնագետները (նկար 2):

Կոլեկտիվ ուսուցումը ներառել է.

- ա) անտառագույքագրման չափումների կատարման հրահանգավորում, շրջանաձև ռելասկոպիկ և հաշվարկային հրապարակներով վարժանքներ, չափագրումների տվյալների օգտագործում՝ ինքնաստուգման համար, անտառհատվածի ընդհանուր գնահատման բնութագրի և գործիքների ու սարքավորումների հետ աշխատանքի հմտության բարձրացում,
- բ) մասնագետների ծանոթացում համապատասխան իրավական ակտերին,
- գ) ծանոթացում անտառաճման պայմանների և անտառային տիպերի հետ, նրանց փոխկապակցվածությանը ծառուտների տեսակային կազմի, բոնիտետային դասերի և ծառուտների գնահատման այլ ցուցանիշների հետ,
- դ) ծանոթացում ծառուտների, առանձին ծառերի վնասատուներով և հիվանդություններով վարակվածության նշանների հետ,
- ե) ծանոթացում ծառուտների և այլ հողային կատեգորիաների արբանյակային նկարների վերծանմանը, գնահատման հատվածների սահմանների ճշտման և հատվածի ընդհանուր գնահատման բնութագրի գործնական ցուցադրում,
- զ) տեղեկացում դաշտային տեխնիկական փաստաթղթերի ձևակերպման և դրանց լրացման պահանջների մասին,
- է) ծանոթացում անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ անտառների քարտեզագրման և գնահատման առանձնահատկություններին

Ուսուցանվել է նաև մշտական փորձահրապարակների տեղադրման և հաշվարկման մեթոդիկան: Տեղադրվել է 0,1 (Ջաջուռի անտառպետություն քառակուսի 3 հատված 31) և 0,05հա (Գյումրիի անտառպետություն քառակուսի 17 հատված 35) մակերեսներով երկու մշտական փորձահրապարակ՝ անտառի գնահատման ծառաչափական, տիպոլոգիական և այլ ցուցանիշների գրանցման և

հետագա դիտարկումների համար: Տեղադրված փորձահրապարակների կենտրոնակետերի աշխարհագրական կոորդինատներն են՝

- Արևելյան երկայնության $43^{\circ}56'23.2''E$ և հյուսիսային լայնության $40^{\circ}53'11.4''N$
- Արևելյան երկայնության $44^{\circ}1'40.9''E$ և հյուսիսային լայնության $40^{\circ}45'24.6''N$

Նկար 2.



2.9. Անտառկառավարման պլանավորման մասնակցային մոտեցում

Անտառկառավարման պլանավորման մասնակցային մոտեցման հիմնական նպատակը շահագրգիռ խմբերին հնարավորության ընձեռնումն է աջակցելու անտառկառավարման պլանավորման պրոցեսին: Անտառային պաշարների պլանավորման մեջ բազմակողմանի մասնակցային մոտեցումն անտառագիտության ռեֆորմի կարևոր նախապայմաններից է:

Տեղաբնակները կարող են օժանդակել տվյալների հավաքագրմանը, պաշարների վիճակի վերաբերյալ պատմական տվյալների և տեղային կարիքների ու պաշարների օգտագործման ավանդույթների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմանը:

Մասնակցային մոտեցումն անկասկած կբարձրացնի տեղաբնակների հետաքրքրությունն անտառների պահպանության և պաշարների արդյունավետ օգտագործման գործընթացներում: Մասնակցային պլանավորման մոտեցումը և դրա կիրառումը պետք է հաշվի առնի ազգային սովորույթներն ու ավանդույթները: Ռեսուրսների մասնակցային պլանավորման և կառավարման մեջ ընդհանուր պրոբլեմները որոշվում են համագործակցության միջոցով: Մասնակցային կառավարում նախ և առաջ նշանակում է համագործակցություն կազմակերպության ներսում և պլանավորողների, հասարակության ու հետաքրքրվող կողմերի միջև:

Մասնակցային պլանավորման պրոցեսի արդյունավետությունը երաշխավորված է համապատասխան ուսուցման դեպքում:

Ծրագրի շրջանակներում ինչպես անտառչինական և տեխնիկական խորհրդակցությունների, այնպես էլ այլ ձևաչափերով հանդիպումներ են իրականացվել անտառտնտեսության աշխատակիցների, մարզպետարանի, համայնքների և բնակավայրերի վարչական ղեկավարների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ու բնակավայրերի ներկայացուցիչների հետ (նկար 3), քննարկվել են կառավարման պլանի հիմնական դրույթները, անտառային քարտեզները համադրվել են համայնքների կադաստրային քարտեզների հետ, վերհանվել և ճշտվել են առկա անհամապատասխանությունները:

Նկար 3.



Քաժին 3. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.1. Անտառտնտեսության ընդհանուր տարածքի բաժանումն ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի

Անտառտնտեսության ընդհանուր տարածքը 4521 հա է, որի հողատեսքերում բացարձակ գերակշռում են պաշտպանական նշանակության անտառային հողերը՝ 3796,1 հա կամ ընդհանուր տարածքի շուրջ 84%-ը, այդ թվում անտառային հողերը՝ 2346,3 հա, որից անտառաձածկը՝ 755,7 հա, նույն թվում անտառմշակույթները՝ 644,5 հա, չմիակցված աղարթով անտառմշակույթները՝ 36,0 հա, անտառային բացատներն ու բաց (պարապուտ) տարածքները զբաղեցնում են 1384,2 հա, նոսրուտները՝ 170,4 հա: Պաշտպանական նշանակության ոչ անտառային հողերը զբաղեցնում են 1449,8 հա կամ ընդհանուր ոչ անտառային հողերի 92,2 %-ը:

Հատուկ նշանակության հողատեսքերը զբաղեցնում են 724,9 հա կամ ընդհանուր տարածքի 16%-ը, այդ թվում անտառային հողերը՝ 602,3 հա, որից անտառաձածկը՝ 282,4 հա, նույն թվում անտառմշակույթները՝ 240,6 հա, չմիակցված աղարթով անտառմշակույթները՝ 1,6 հա, անտառային բացատներն ու բաց (պարապուտ) տարածքները զբաղեցնում են 150,7 հա, նոսրուտները՝ 167,6 հա: Հատուկ նշանակության ոչ անտառային հողերը զբաղեցնում են 122,6 հա կամ ընդհանուր ոչ անտառային հողերի 7,8 %-ը:

Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառածածկ ընդհանուր մակերեսը 1038,1հա է (23%), որից ընդհանուր 885,1 հեկտարն է միակցված սաղարթով անտառմշակույթ (85,3%), իսկ 153,0 հա-ը (14,7%) բնական ծագման անտառներն են (կաղամախի՝ 144,5 հա և սոճի՝ 8,5 հա), անտառային բացատները և պարապուտները՝ 1534,9հա, նոսրուտները՝ 338,0հա:

Ընդհանուր ոչ անտառային հողերի մակերեսը զբաղեցնում է 1572,4հա, որից խոտհարքերը՝ 41,8հա, արոտավայրերը՝ 633,1հա:

Անտառտնտեսության հողատեսքերի զբաղեցրած տարածքներն ըստ հիմնական նպատակային նշանակության տրված է աղյուսակ 9-ում, պատկերված՝ քարտեզ 9-ում, իսկ հիմնական նպատակային նշանակության տարածքներն ըստ անտառպետությունների նշված է աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 9. Անտառտնտեսության հողատեսքերի բաշխվածությունն ըստ հիմնական նպատակային նշանակության կատեգորիաների


| Հ/հ | Հողատեսք | Կատեգորիա | Մակերեսը, հա |
|-------|-------------------------------------|---------------------|--------------|
| 1 | Ընդհանուր | Պաշտպանական | 3796,1 |
| | | Հատուկ նշանակության | 724,9 |
| | | Ընդամենը | 4521,0 |
| 2 | Անտառային հողեր՝ ընդամենը | Պաշտպանական | 2346,3 |
| | | Հատուկ նշանակության | 602,3 |
| | | Ընդամենը | 2948,6 |
| 2.1 | Անտառածածկ՝ ընդամենը, այդ թվում | Պաշտպանական | 755,7 |
| | | Հատուկ նշանակության | 282,4 |
| | | Ընդամենը | 1038,1 |
| 2.1.1 | Անտառմշակույթներ | Պաշտպանական | 644,5 |
| | | Հատուկ նշանակության | 240,6 |
| | | Ընդամենը | 885,1 |
| 2.2 | Զմիակցված սաղարթով անտառմշակույթներ | Պաշտպանական | 36,0 |
| | | Հատուկ նշանակության | 1,6 |
| | | Ընդամենը | 37,6 |
| 2.3 | Ոչ անտառածածկ՝ ընդամենը, այդ թվում | Պաշտպանական | 1554,6 |
| | | Հատուկ նշանակության | 318,3 |
| | | Ընդամենը | 1872,9 |
| 2.3.1 | Բացատներ և պարապուտներ | Պաշտպանական | 1384,2 |
| | | Հատուկ նշանակության | 150,7 |
| | | Ընդամենը | 1534,9 |
| 2.3.2 | Նոսրուտներ | Պաշտպանական | 170,4 |
| | | Հատուկ նշանակության | 167,6 |

| Հ/հ | Հողատեսք | Կատեգորիա | Մակերեսը, հա |
|-----|---|---------------------|--------------|
| | | Ընդամենը | 338,0 |
| 3 | Ոչ անտառային հողեր՝ ընդամենը, այդ թվում | Պաշտպանական | 1449,8 |
| | | Հատուկ նշանակության | 122,6 |
| | | Ընդամենը | 1572,4 |
| 3.1 | Խոտհարքեր | Պաշտպանական | 38,9 |
| | | Հատուկ նշանակության | 2,9 |
| | | Ընդամենը | 41,8 |
| 3.2 | Արոտավայրեր | Պաշտպանական | 633,1 |
| | | Հատուկ նշանակության | - |
| | | Ընդամենը | 633,1 |
| 3.3 | Այլ հողեր | Պաշտպանական | 777,8 |
| | | Հատուկ նշանակության | 119,7 |
| | | Ընդամենը | 897,5 |

Աղյուսակ 10. Անտառպետությունների բաշխվածությունը ըստ հիմնական նպատակային նշանակության և անտառածածկի

| Հ/Հ | Անտառպետություն | Պաշտպանական | | Հատուկ | | Ընդամենը | |
|-----|-----------------|--------------------|---------------------|--------------------|---------------------|--------------------|---------------------|
| | | Ընդհանուր մակերեսը | Անտառածածկ մակերեսը | Ընդհանուր մակերեսը | Անտառածածկ մակերեսը | Ընդհանուր մակերեսը | Անտառածածկ մակերեսը |
| 1 | Գյումրիի | 938,0 | 85,2 | 104,0 | 49,3 | 1042,0 | 134,5 |
| 2 | Աշոցքի | 1069,0 | 394,2 | - | - | 1069,0 | 394,2 |
| 3 | Զաջուռի | 1360,1 | 266,3 | 7,9 | 5,1 | 1368,0 | 271,4 |
| 4 | Արթիկի | 429,0 | 10,0 | 613,0 | 228,0 | 1042,0 | 238,0 |
| | Ընդամենը | 3796,1 | 755,7 | 724,9 | 282,4 | 4521,0 | 1038,1 |

Քարտեզ 9. Անտառտնտեսության տարածքն ըստ հիմնական նպատակային նշանակության



3.2. Անտառային հողերի փոփոխությունն ըստ հողատեսքերի

Հարկ է նշել, որ 1983թ. անտառչինական աշխատանքների նյութերը հիմնականում չեն պահպանվել, առկա են միայն անտառի պլան քարտեզներն ըստ անտառապետությունների և ելնելով այդ հանգամանքից հնարավոր չէր իրականացնել տվյալների համեմատական գնահատում:

Այնուհանդերձ արդեն իսկ նշվել է, որ անտառոտնտեսությունում վերջին անտառչինական աշխատանքներն իրականացվել են 1983թ., որի արդյունքներով անտառոտնտեսության ընդհանուր մակերեսը կազմել է 4125 հա, իսկ 2022թ. անտառչինությամբ՝ 4521 հա: Անտառոտնտեսության մակերեսի ավելացումը 396 հեկտարով բացատրվում է բացատրվում է Շիրակի մարզի համայնքների հողային ֆոնդի կադաստրային քարտեզների և անտառոտնտեսության ընթացիկ գույքագրմամբ անտառային հողատեսքերի ու սահմանների ճշգրտման հանգամանքով:

Ստորև ներկայացված աղյուսակում տրված են անտառոտնտեսության 2022թ. անտառաչինության արդյունքներով ստացված հողատեսքերի բաշխվածությունն ըստ անտառապետությունների: Համաձայն այդ տվյալների ամենից շատ անտառածածկ տարածքներ՝ այդ թվում անտառմշակույթներ առկա են Աշոցքի անտառապետությունում, իսկ ամենից քիչ՝ Գյումրիի անտառապետությունում: Չմիակցված սաղարթով անտառմշակույթները զբաղեցնում են 37,6հա տարածք: Բացատներն ու պարապուտները գերակշռում են Գյումրիի անտառապետությունում, իսկ նոսրուտները Արթիկի անտառապետությունում:

Խոտհարքերն ու արոտավայրերը միասին զբաղեցնում են 674,9հա տարածք: Ամենից շատ արոտավայրեր՝ 309,9հա առկա են Արթիկի անտառապետությունում:

Այլ հողերը հիմնականում ներկայացված են հողատարված, արմատական ապարների ելքեր ունեցող հողերով, որոնք առանց հատուկ մեխորատիվ միջոցառումների պիտանի չեն անտառաճեցման համար: Այդպիսի հողերը անտառոտնտեսությունում կազմում են 375,9հա, որից միայն 259,7 հեկտարը Ջաջուռի անտառապետությունում: Ջգալի տարածք են զբաղեցնում նաև ոչ անտառածածկ թեք լանջերը՝ 228,7հա, որից 156,9 հեկտարը Ջաջուռի անտառապետությունում: Ենթալայան մարգագետինները զբաղեցնում են 102,2հա տարածք, ձորակները՝ 69,9հա, ժայռերը՝ 50,6հա, քարացրոններ՝ 5,8հա, որոնք կարևոր են կենսաբազմազանության տեսանկյունից: Մնացած հողերը (ավտոճանապարհներ, անասուններ քշելու ճանապարհներ, ջրանցքներ, հակահրդեհային ճեղքեր, խախտված հողեր, և այլն) միասին կազմում են 64,4հա (աղյուսակ 11):


Աղյուսակ 11. Անտառտնտեսության հողատեսքերի բաշխվածությունն ըստ անտառապետությունների

| Հ/հ | Հողատեսքը | Գյումրիի | Աշոցքի | Ջաջուրի | Արթիկի | Ընդամենը |
|-------|---|----------|--------|---------|--------|----------|
| 1 | Ընդհանուր | 1042,0 | 1069,0 | 1368,0 | 1042,0 | 4521,0 |
| 2 | Անտառային հողեր՝ ընդամենը | 790,5 | 908,4 | 728,8 | 520,9 | 2948,6 |
| 2.1 | Անտառածածկ՝ ընդամենը, այդ թվում | 134,5 | 394,2 | 271,4 | 238,0 | 1038,1 |
| 2.1.1 | Անտառմշակույթներ | 100,2 | 283,2 | 271,4 | 230,3 | 885,1 |
| 2.2 | Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ | 11,9 | 17,6 | - | 8,1 | 37,6 |
| 2.3 | Ոչ անտառածածկ՝ ընդամենը, այդ թվում | 644,1 | 496,6 | 457,4 | 274,8 | 1872,9 |
| 2.3.1 | Բացատներ և պարապուտներ | 526,1 | 476,0 | 400,6 | 132,2 | 1534,9 |
| 2.3.2 | Նոսրուտներ | 118,0 | 20,6 | 56,8 | 142,6 | 338,0 |
| 3 | Ոչ անտառային հողեր՝ ընդամենը, այդ թվում | 251,5 | 160,6 | 639,2 | 521,1 | 1572,4 |
| 3.1 | Խոտհարքեր | 18,5 | 12,4 | 3,5 | 7,4 | 41,8 |
| 3.2 | Արոտավայրեր | 146,0 | 36,1 | 141,1 | 309,9 | 633,1 |
| 3.3 | Այլ հողեր | 87,0 | 112,1 | 494,6 | 203,8 | 897,5 |

3.3. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունը ըստ անտառակազմող ծառատեսակների

Անտառտնտեսությունում հիմնական անտառակազմող տեսակը սոճու անտառմշակույթներն են, որի գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 684,0 հա՝ 117490խտմ³ ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 65,9%-ը և ընդհանուր պաշարի 74%-ը: Հաջորդը կաղամախու ծառուտներն են, որոնք զբաղեցնում են 144,5 հա տարածք՝ 29230խտմ³ ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 13,9%-ը և ընդհանուր պաշարի 18,4%-ը: Թխկու անտառմշակույթները կազմում են 104,9հա՝ 8240խտմ³ ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 10,1%-ը և ընդհանուր պաշարի 5,2%-ը: Մնացած տեսակները միասին զբաղեցնում են 104,7հա՝ 3840մ³ կամ անտառածածկ մակերեսի 10,1%-ը և ընդհանուր պաշարի 2,4%-ը (քարտեզ 10, աղյուսակ 12):

Քարտեզ 10 Անտառհատվածների գերակշռող ծառատեսակները



Աղյուսակ 12. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ անտառկազմող ծառատեսակների

| Փերակշռող | 2022թ. | |
|-----------------|---------------|-------------------------|
| | մակերեսը, հա | պաշար, խտմ ³ |
| Սոճի | 684,0 | 117490 |
| Կաղնի | 6,7 | 490 |
| Հացենի | 43,4 | 1700 |
| Թխկի | 104,9 | 8240 |
| Թեղի | 5,3 | 270 |
| Ակացիա սպիտակ | 1,4 | 90 |
| Կաղամախի | 144,5 | 29230 |
| Բարդի | 2,2 | 330 |
| Տանձենի | 10,2 | 290 |
| Խնձորենի | 17,9 | 540 |
| Ակացիա դեղին | 17,6 | 130 |
| Ընդամենը | 1038,1 | 158800 |

3.4. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ ծովի մակերևույթից բարձրության

Անտառտնտեսությունում անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 1400-2300մ բարձրությունների վրա, ընդ որում մինչև 1800մ բարձրության վրա գտնվում է ընդամենը 22,5հա մակերես, 2080խտմ³ ընդհանուր պաշարով (ընդհանուր անտառածածկ տարածքի 2,2% և պաշարի 1,3%), 1801-2000մ բարձրությունների վրա 313,8հա, 41380խտմ³ ընդհանուր պաշարով (30,2% և 26,1%), 2001-2200մ բարձրությունների վրա 678,3հա, 111840խտմ³ ընդհանուր պաշարով (65,3% և 70,4%), 2201մ-ից բարձր՝ 23,5հա, 3500 մ³ պաշարով (2,3% և 2,2%), (աղյուսակ 13):

Աղյուսակ 13. Անտառածածկ մակերեսի և ընդհանուր պաշարի բաշխվածությունն ըստ ծովի մակերևույթից բարձրության

| Անտառայտություն | Անտառածածկը՝ հա Պաշարը՝ մ ³ | Ծովի մակերևույթից բարձրությունը, մետր | | | | |
|-----------------|---|---------------------------------------|-----------|-----------|-----------|---------------|
| | | 1401-1600 | 1601-1800 | 1801-2000 | 2001-2200 | 2201-ից բարձր |
| Գյումրիի | 134,5 | 6,6 | 15,6 | 48,7 | 58,2 | 5,4 |
| | 17280 | 490 | 1580 | 5930 | 8960 | 320 |
| Աշոցքի | 394,2 | - | - | 48,5 | 332,4 | 13,3 |
| | 78280 | - | - | 9490 | 66110 | 2680 |
| Ջաջուղի | 271,4 | - | 0,3 | 148,9 | 122,2 | - |

| Անտառապետություն | Անտառածածկը՝ հա Պաշարը՝ մ ³ | Ծովի մակերևույթից բարձրությունը, մետր | | | | |
|------------------|---|---------------------------------------|-----------|-----------|-----------|---------------|
| | | 1401-1600 | 1601-1800 | 1801-2000 | 2001-2200 | 2201-ից բարձր |
| | 36520 | - | 10 | 23130 | 13380 | - |
| Արթիկի | 238,0 | - | - | 67,7 | 165,5 | 4,8 |
| | 26720 | - | - | 2830 | 23390 | 500 |
| Ընդամենը | 1038,1 | 6,6 | 15,9 | 313,8 | 678,3 | 23,5 |
| | 158800 | 490 | 1590 | 41380 | 111840 | 3500 |


3.5 Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի

Անտառտնտեսությունում անտառածածկ մակերեսի և պաշարի հետևյալ բաշխվածությունն է ըստ տարիքային խմբերի՝ երիտասարդ տարիքային խմբի ծառուտները (I և II հասակային դասեր) զբաղեցնում են 197,0հա 10340խտմ³ պաշարով (անտառածածկի 19,0% և պաշարի 6,5%), հասունացող և հասուն տարիքային խմբերի ծառուտները միասին կազմում են 81,2հա 13590խտմ³ պաշարով (7,8% և 8,6%), իսկ բացարձակ գերակշռում են միջին տարիքային խմբի ծառուտները 759,9 հա 134870խտմ³ պաշարով (73,2% և 84,9%) (աղյուսակ 14, քարտեզ 11):

Աղյուսակ 14. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ գերակշռող ծառատեսակների տարիքային խմբերի

| Հ/հ | Գերակշռող ծառատեսակը | Մակերեսը, հա | | | | | | Պաշարը, խտմ ³ | | | | | | Միջին տարիքը |
|---------------------------------|----------------------|------------------------|--------------------------------|--------------|--------------|-------------|----------------------------------|--------------------------------|------------|--------------|---------------|--------------|--------------------|--------------|
| | | Ընդհանուր մակերեսը, հա | այդ թվում ըստ տարիքային խմբերի | | | | Ընդհանուր պաշարը, մ ³ | այդ թվում ըստ տարիքային խմբերի | | | | | | |
| | | | երիտասարդ | | միջին տարիքի | հասունացող | | հասուն և գերհասուն | երիտասարդ | | միջին տարիքի | հասունացող | Հասուն և գերհասուն | |
| | | | 1 | 2 | | | | | 1 | 2 | | | | |
| 1 | Սոճի | 684.0 | 20.4 | 4.5 | 659.1 | | | 117490 | 210 | 510 | 116770 | | | 48 |
| 2 | Կաղնի | 6.7 | | 6.6 | 0.1 | | | 490 | | 490 | | | | 35 |
| 3 | Հացենի | 43.4 | 0.7 | 39.5 | 3.2 | | | 1700 | 10 | 1440 | 250 | | | 33 |
| 4 | Թխկի | 104.9 | | 95.6 | 9.3 | | | 8240 | | 6730 | 1510 | | | 36 |
| 5 | Թեղի | 5.3 | | 2.2 | 3.1 | | | 270 | | 130 | 140 | | | 40 |
| 6 | Ակացիա սպ. | 1.4 | | | | | 1.4 | 90 | | | | | 90 | 35 |
| 7 | Կաղամախի | 144.5 | | | 83.1 | 60.2 | 1.2 | 29230 | | | 16000 | 12890 | 340 | 41 |
| 8 | Բարդի | 2.2 | | | 1.4 | | 0.8 | 330 | | | 190 | | 140 | 44 |
| 9 | Տանձենի | 10.2 | | 10.1 | 0.1 | | | 290 | | 290 | | | | 35 |
| 10 | Խնձորենի | 17.9 | | 17.4 | 0.5 | | | 540 | | 530 | 10 | | | 35 |
| 11 | Ակացիա դե. | 17.6 | | | | | 0.1 | 130 | | | | | 130 | 34 |
| Ամբողջը | | 1038.1 | 21.1 | 175.9 | 759.9 | 60.3 | 20.9 | 158800 | 220 | 10120 | 134870 | 12890 | 700 | 44 |
| Ըստ անտառապետությունների | | | | | | | | | | | | | | |
| 1 | Գյումրիի | 134.5 | | 12.8 | 109.3 | | 12.4 | 17280 | | 770 | 16180 | | 330 | 45 |
| 2 | Աշոցքի | 394.2 | 0.8 | 0.1 | 331.9 | 60.2 | 1.2 | 78280 | | | 65050 | 12890 | 340 | 45 |
| 3 | Ջաջուռի | 271.4 | 0.7 | 82.2 | 186.7 | | 1.8 | 36520 | 10 | 6800 | 29700 | | 10 | 44 |
| 4 | Արթիկի | 238.0 | 19.6 | 80.8 | 132 | 0.1 | 5.5 | 26720 | 210 | 2550 | 23940 | | 20 | 43 |

Քարտեզ 11. Անտառհատվածներն ըստ տարիքային խմբերի



3.6. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ լանջի թեքության և տարիքային խմբերի

Անտառածածկ տարածքի 21,4%-ը (222,2հա) և պաշարի 14,7%-ը (23350խտմ³) գտնվում են մինչև 10° թեքությունների վրա, 10,1°-ից - 20° թեքություններում տեղաբաշխված են 459,3հա անտառներ՝ 70440խտմ³ ընդհանուր պաշարով (համապատասխանաբար 44,3% և 44,4%), 20,1°-ից մինչև 30° թեքություններում տեղաբաշխված են 306,6հա անտառներ՝ 54770խտմ³ ընդհանուր պաշարով (համապատասխանաբար 29,5% և 34,5%), իսկ 30.1°-ից բարձր թեքություններում տեղաբաշխված են 50.0 հա անտառներ՝ 10240 խտմ³ ընդհանուր պաշարով (համապատասխանաբար 4,8% և 6,4%)

Անտառտնտեսության միջին տարիքային խմբի ծառուտների մակերեսների 70,3%-ը (729,9հա) գտնվում են մինչև 30° թեքությունների վրա, որոնցում և հիմնականում նախատեսվում են խնամքի հատումները:

Հիմնական անտառկազմող ծառատեսակներից սոճուտների մակերեսի 19,8%-ը և պաշարի 16,8%-ն է գտնվում մինչև 10° թեքությունների վրա, իսկ մնացածը մասը գտնվում են մինչև 30° թեքությունների վրա: Անտառտնտեսությունում 30.1°-ից բարձր թեքություններում տեղաբաշխված են միայն կաղամախու ծառուտները (աղյուսակ 15, 16):

Աղյուսակ 15. Անտառածածկ ընդհանուր մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ լանջի թեքության աստիճանի և տարիքային խմբերի

| Լանջի թեքության աստիճանը | Անտառածածկ մակերեսը, հա | պաշարը, մ ³ | Տարիքային խումբ | | | | | | | |
|-----------------------------|-------------------------|------------------------|-------------------------|--------------------------|-------------------------|--------------------------|-------------------------|------------------------|-------------------------|--------------------------|
| | | | Երիտասարդ | | Միջին | | Հասունացող | | Հասուն և գերհասուն | |
| | | | Անտառածածկ մակերեսը, հա | Պաշարը, խտմ ³ | Անտառածածկ մակերեսը, հա | Պաշարը, խտմ ³ | Անտառածածկ մակերեսը, հա | Պաշարը, մ ³ | Անտառածածկ մակերեսը, հա | Պաշարը, խտմ ³ |
| մինչև 5 ⁰ | 109,1 | 9580 | 59,6 | 1520 | 47,8 | 8020 | - | - | 1,7 | 40 |
| 5.1-10 ⁰ | 113,1 | 13770 | 34,3 | 1260 | 74,4 | 12440 | 0,1 | - | 4,3 | 70 |
| 10.1-15 ⁰ | 169,0 | 22900 | 20,4 | 1080 | 144,3 | 21650 | - | - | 4,3 | 170 |
| 15.1-20 ⁰ | 290,3 | 47540 | 57,6 | 4420 | 229,1 | 43110 | - | - | 3,6 | 10 |
| 20.1-25 ⁰ | 238,9 | 41230 | 23,6 | 1570 | 198,8 | 37310 | 10,7 | 2280 | 5,8 | 70 |
| 25.1-30 ⁰ | 67,7 | 13540 | 1,5 | 90 | 35,5 | 6830 | 30,7 | 6620 | - | - |
| 30.1 ⁰ -ից բարձր | 50,0 | 10240 | - | - | 30,0 | 5910 | 18,8 | 3990 | 1,2 | 340 |
| Ընդամենը | 1038,1 | 158880 | 197,0 | 9940 | 759,9 | 135270 | 60,3 | 12890 | 20,9 | 700 |

Աղյուսակ 16. Գերակշռող հիմնական ծառատեսակների մակերեսների և պաշարների բաշխվածությունն ըստ լանջերի թեքության աստիճանի

| Գերակշռող տեսակներ | Լանջերի թեքության աստիճանը | | | | | | | |
|--------------------|----------------------------|------------------------|-----------|-------------------------|----------------|------------------------|----------|------------------------|
| | Մինչև 10° | | 10.1- 30° | | 30.1°-ից բարձր | | Ընդամենը | |
| | Հա | Պաշար խտմ ³ | Հա | Պաշար խտ մ ³ | Հա | Պաշար խտմ ³ | Հա | Պաշար խտմ ³ |
| Սոճի | 135,7 | 19780 | 548,3 | 97710 | - | - | 684,0 | 117490 |
| % | 19,8 | 16,8 | 80,2 | 83,2 | - | - | 100 | 100 |
| Կաղամախի | 0,1 | 10 | 94,4 | 18980 | 50,0 | 10240 | 144,5 | 29230 |
| % | 0.1 | 0.03 | 65.3 | 64,94 | 34.6 | 35,03 | 100 | 100 |
| Թխկի | 39,2 | 2160 | 65,7 | 6080 | - | - | 104,9 | 8240 |
| % | 37,4 | 26,2 | 62,6 | 73,8 | - | - | 100 | 100 |
| Հացենի | 11,4 | 270 | 32,0 | 1430 | - | - | 43,4 | 1700 |
| % | 26,3 | 15,9 | 73,7 | 84,1 | - | - | 100 | 100 |


3.7. Անտառածածկ տարածքի և պաշարի բաշխվածությունն ըստ բնիտեային դասերի

Անտառների միջին բնիտեային դասը 2,5 է, հիմնական անտառկազմող տեսակներից համեմատաբար բարձր բնիտեային դասով առանձնանում են սոճուտները, որոնց միջին բնիտեային դասը 2,2 է: Բարձր բնիտեային դասի են բարդի և կաղամախի ծառատեսակների ծառուտները, համապատասխանաբար՝ 1,7 և 2,3, ամենից ցածր բնիտեային դասերի են տանձենու և խնձորենու կուլտուրաներն ու ակացիա դեղինը (աղյուսակ 17, քարտեզ 12):

Աղյուսակ 17. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ բնիտեային դասերի

| Հ/հ | Գերակշռող ծառատեսակը | Բնիտեային դասեր | | | | | | | Ընդամենը, հա | Միջին բնիտետ |
|-----------|----------------------|-----------------|--------------|--------------|-------------|-------------|-------------|---------------|--------------|--------------|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 5ա | | | |
| 1 | Սոճի | 89,3 | 418,4 | 110,5 | 57,4 | 8,4 | - | 684,0 | 2,2 | |
| 2 | Կաղնի | 1,7 | | | 0,6 | 3,4 | 1,0 | 6,7 | 3,3 | |
| 3 | Հացենի | 3,8 | 3,3 | 18,3 | 13,3 | 4,6 | 0,1 | 43,4 | 3,3 | |
| 4 | Թխկի | 10,8 | 18,5 | 44,9 | 12,2 | 18,0 | 0,5 | 104,9 | 3,1 | |
| 5 | Թեղի | 0,2 | 1,2 | 0,7 | 2,1 | 1,1 | - | 5,3 | 3,5 | |
| 6 | Ակացիա սպ. | | 1,0 | 0,3 | | | 0,1 | 1,4 | 2,5 | |
| 7 | Կաղամախի | 17,3 | 73,0 | 49,0 | 1,9 | 3,3 | - | 144,5 | 2,3 | |
| 8 | Բարդի | 0,5 | 1,7 | | | | | 2,2 | 1,7 | |
| 9 | Տանձենի | | 0,3 | 2,0 | 0,5 | 6,5 | 0,9 | 10,2 | 4,6 | |
| 10 | Խնձորենի | | | | 0,7 | 13,9 | 3,3 | 17,9 | 5,1 | |
| 11 | Ակացիա դեղին | | | | | | 17,6 | 17,6 | 5,9 | |
| 19 | Ամբողջը | 123,6 | 517,4 | 226,3 | 91,5 | 56,8 | 22,5 | 1038,1 | 2,5 | |

Քարտեզ 12. Անտառատվածներն ըստ բուխտետային դասերի




3.8. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության

Անտառտնտեսության ծառուտների միջին լրիվությունը 0,69 է, ընդ որում հիմնական անտառկազմող կաղամախու ծառուտներում և սոճուտներում 0,8 և 0,69: Ցածր լրիվության (0,3-0,4) ծառուտները զբաղեցնում են ընդհանուր 112,8հա մակերես, կամ ընդհանուր անտառածածկ մակերեսի 10,9%-ը: Միջին լրիվության (0,5-0,6) ծառուտները զբաղեցնում են ընդհանուր 248,0հա մակերես կամ 23,9%-ը: Իսկ բացարձակ գերակշռող բարձր լրիվության (0,7 և բարձր) ծառուտները կազմում են 677,3հա մակերես կամ ընդհանուր անտառածածկի 65,2%-ը (աղյուսակ 18, քարտեզ 13):

Աղյուսակ 18. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ ծառուտի լրիվության

| Գերակշռող ծառատեսակը | Մակերես/պաշար | Լրիվությունը | | | | | | | | | |
|----------------------------|-------------------|--------------|-------------|-------------|--------------|--------------|--------------|--------------|-------------|---------------|-------------|
| | | 0,3 | 0,4 | 0,5 | 0,6 | 0,7 | 0,8 | 0,9 | 1,0 | Ընդամենը | Միջին |
| Սոճի | մակերես,հա | 25,0 | 48,2 | 59,2 | 105,3 | 196,4 | 129,9 | 110,5 | 9,5 | 684,0 | 0,69 |
| | պաշար խտխմ | 1260 | 3160 | 5190 | 13830 | 36650 | 26740 | 28000 | 2660 | 117490 | |
| Կաղնի | մակերես,հա | 0,9 | 1,7 | 0,1 | 0,6 | 0,8 | 1,2 | 0,5 | 0,9 | 6,7 | 0,63 |
| | պաշար խտխմ | 10 | 70 | | 20 | 90 | 80 | 40 | 180 | 490 | |
| Հացենի | մակերես,հա | 10,0 | 6,1 | 5,9 | 13,3 | 2,4 | 3,1 | 2,6 | | 43,4 | 0,53 |
| | պաշար խտխմ | 150 | 100 | 220 | 730 | 200 | 90 | 210 | | 1700 | |
| Թխկի | մակերես,հա | 1,8 | 6,9 | 6,0 | 19,6 | 14,7 | 50,5 | 5,4 | | 104,9 | 0,70 |
| | պաշար խտխմ | 30 | 250 | 240 | 820 | 830 | 5110 | 960 | | 8240 | |
| Թեղի | մակերես,հա | 0,1 | 0,8 | 2,4 | 0,8 | 1,2 | | | | 5,3 | 0,54 |
| | պաշար խտխմ | | 30 | 100 | 40 | 100 | | | | 270 | |
| Ակացիա սպիտակ | մակերես,հա | | | | 0,8 | | 0,6 | | | 1,4 | 0,69 |
| | պաշար խտխմ | | | | 50 | | 40 | | | 90 | |
| Կաղամախի | մակերես,հա | 0,2 | | 1,5 | 11,8 | 31,6 | 44,0 | 43,4 | 12,0 | 144,5 | 0,80 |
| | պաշար խտխմ | 10 | | 150 | 1590 | 5310 | 8740 | 10850 | 2580 | 29230 | |
| Բարդի | մակերես,հա | | | | 1,4 | 0,8 | | | | 2,2 | 0,64 |
| | պաշար խտխմ | | | | 220 | 110 | | | | 330 | |
| Տանձենի | մակերես,հա | | 1,9 | 3,8 | 3,3 | | 1,2 | | | 10,2 | 0,55 |
| | պաշար խտխմ | | 20 | 90 | 110 | | 70 | | | 290 | |
| Խնձորենի | մակերես,հա | 1,3 | 2,5 | 4,1 | 1,2 | 7,1 | 1,7 | | | 17,9 | 0,59 |
| | պաշար խտխմ | 20 | 30 | 100 | 30 | 280 | 80 | | | 540 | |
| Ակացիա դեղին | մակերես,հա | 2,7 | 2,7 | 4,6 | 2,3 | 4,0 | 0,3 | | 1,0 | 17,6 | 0,54 |
| | պաշար խտխմ | 10 | 10 | 40 | | 60 | | | 10 | 130 | |
| Անտառտնտեսություն | մակերես,հա | 42,0 | 70,8 | 87,6 | 160,4 | 259,0 | 232,5 | 162,4 | 23,4 | 1038,1 | 0,69 |
| | պաշար խտխմ | 1490 | 3670 | 6130 | 17440 | 43630 | 40950 | 40060 | 5430 | 158800 | |
| Անտառապետություններ | | | | | | | | | | | |
| Գյումրիի | մակերես,հա | 6,9 | 9,9 | 19,1 | 33,1 | 22,9 | 23,7 | 10,3 | 8,6 | 134,5 | 0,66 |
| | պաշար խտխմ | 230 | 400 | 1260 | 3210 | 3270 | 4270 | 2480 | 2160 | 17280 | |
| Աշոցքի | մակերես,հա | 5,9 | 13,1 | 13,5 | 35,2 | 119,8 | 79,2 | 114,4 | 13,1 | 394,2 | 0,76 |
| | պաշար խտխմ | 270 | 960 | 1340 | 5040 | 21830 | 16720 | 29270 | 2850 | 78280 | |
| Ջաջուռի | մակերես,հա | 16,2 | 24 | 19,3 | 34,6 | 43,2 | 114,9 | 17,7 | 1,5 | 271,4 | 0,68 |
| | պաշար խտխմ | 770 | 1350 | 1910 | 3830 | 7360 | 17840 | 3040 | 420 | 36520 | |
| Արթիկի | մակերես,հա | 13,0 | 23,8 | 35,7 | 57,5 | 73,1 | 14,7 | 20,0 | 0,2 | 238,0 | 0,62 |
| | պաշար խտխմ | 220 | 960 | 1620 | 5360 | 11170 | 2120 | 5270 | | 26720 | |

Քարտեզ 13. Անտառատվածներն ըստ ծառուտի լրիվության




3.9. Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ հասակային դասերի

2022թ. անտառզնահատմամբ անտառածածկ մակերեսի 197,0հա-ը (19,0%) I և II հասակային դասի ծառուտներ են, ընդհանուր պաշարը 10340խտխմ (6,5%), իսկ բացարձակ գերակշռող III հասակային դասի ծառուտների մակերեսը 673,7հա է (64,9%), ընդհանուր պաշարը 117440խտխմ (74,0%): Անտառածածկի մնացած տարածքները 167,4հա մակերեսով (16,1%) և ընդհանուր 31020խտխմ (19,5%) պաշարով կազմում են IV, V, VI և VII հասակային դասի ծառուտները: Ավելի բարձր հասակային դասի ծառուտներ անտառոտնտեսությունում առկա չեն (աղյուսակ 19, քարտեզ 14):

Աղյուսակ 19. Անտառածածկ մակերեսը և պաշարն ըստ գերակշռող ծառատեսակների ու հասակային դասերի

| Գերակշռող ծառատեսակը | Հասակային դասեր | | | | | | | | | Ընդամենը |
|----------------------------|--|--------------|---------------|--------------|--------------|------------|-------------|------|------------|---------------|
| | Համարիչում՝ մակերեսը (հա), հայտարարում՝ պաշարը (խտմ ³) | | | | | | | | | |
| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX և բարձր | |
| Սոճի | 20,4 | 4,5 | 647,0 | 12,1 | | | | | | 684,0 |
| | 210 | 510 | 114410 | 2360 | | | | | | 117490 |
| Կաղնի | | 6,6 | 0,1 | | | | | | | 6,7 |
| | | 490 | | | | | | | | 490 |
| Հացենի | 0,7 | 39,5 | 3,2 | | | | | | | 43,4 |
| | 10 | 1440 | 250 | | | | | | | 1700 |
| Թխկի | | 95,6 | 9,3 | | | | | | | 104,9 |
| | | 6730 | 1510 | | | | | | | 8240 |
| Թեղի | | 2,2 | 3,1 | | | | | | | 5,3 |
| | | 130 | 140 | | | | | | | 270 |
| Ակացիա սպիտակ | | | | | | | 1,4 | | | 1,4 |
| | | | | | | | 90 | | | 90 |
| Կաղամախի | | | 10,4 | 48,2 | 84,7 | 1,2 | | | | 144,5 |
| | | | 1120 | 9200 | 18570 | 340 | | | | 29230 |
| Բարդի | | | | 1,2 | 0,2 | 0,8 | | | | 2,2 |
| | | | | 160 | 30 | 140 | | | | 330 |
| Տանձենի | | 10,1 | 0,1 | | | | | | | 10,2 |
| | | 290 | | | | | | | | 290 |
| Խնձորենի | | 17,4 | 0,5 | | | | | | | 17,9 |
| | | 530 | 10 | | | | | | | 540 |
| Ակացիա դեղին | | | | | 0,1 | | 17,5 | | | 17,6 |
| | | | | | | | 130 | | | 130 |
| Ամբողջը | 21,1 | 175,9 | 673,7 | 61,5 | 85,0 | 2,0 | 18,9 | | | 1038,1 |
| | 220 | 10120 | 117440 | 11720 | 18600 | 480 | 220 | | | 158800 |
| Անտառապետություններ | | | | | | | | | | |
| Գյումրի | | 12,8 | 74,1 | 10,5 | 24,7 | 0,8 | 11,6 | | | 134,5 |
| | | 770 | 8970 | 1500 | 5710 | 140 | 190 | | | 17280 |
| Աշոցքի | 0,8 | 0,1 | 293,2 | 38,7 | 60,2 | 1,2 | | | | 394,2 |
| | | | 57200 | 7850 | 12890 | 340 | | | | 78280 |
| Ջաջուռի | 0,7 | 82,2 | 177,6 | 9,1 | | | 1,8 | | | 271,4 |
| | 10 | 6800 | 27890 | 1810 | | | 10 | | | 36520 |
| Արթիկի | 19,6 | 80,8 | 128,8 | 3,2 | 0,1 | | 5,5 | | | 238,0 |
| | 210 | 2550 | 23380 | 560 | | | 20 | | | 26720 |

Քարտեզ 14. Անտառհատվածներն ըստ հասակային դասերի



3.10. Անտառի տիպը

Անտառշինության ժամանակ անտառի տիպի բնութագրման համար հիմք են ընդունվել Լ. Բ. Մախատաձեի և Ն. Դ. Պոպովի նաև Յարոշենկոյի կողմից Կովկասի և Հայաստանի համար մշակված անտառտիպոլոգիալական սխեմաները:

Համաձայն վերը նշված սխեմաների՝ անտառտնտեսության անտառներում գերակշռում են տարախոտային տիպի անտառները՝ 50,8% (527,5հա) (աղյուսակ 20):

Աղյուսակ 20. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ անտառի տիպերի

| Հ/հ | Անտառի տիպերի խմբեր | Գերակշռող ծառատեսակները, հեկտար | | | | | | | | |
|-----|---------------------|---------------------------------|------------|-------------|--------------|------------|--------------|--------------|----------|---------------|
| | | Սոճի | Կաղնի | Հացենի | Թխիլի | Թեղի | Կաղնամախի | Այլ տեսակներ | Ընդամենը | |
| 1 | Մեռյալ ծածկույթ | 194,7 | | | | | | | | 194,7 |
| 2 | Շուղախոտային | 163,4 | 2,4 | 22,0 | 51,4 | 0,5 | 1,2 | 15,9 | | 256,8 |
| 3 | Բոշխային | 5,4 | 0,6 | 2,9 | 1,5 | | | 13,9 | | 24,3 |
| 4 | Տարախոտային | 310,6 | 3,7 | 18,5 | 52,0 | 4,8 | 118,4 | 19,5 | | 527,5 |
| 5 | Ենթալայյան | 9,9 | | | | | 24,9 | | | 34,8 |
| | Ընդամենը | 684,0 | 6,7 | 43,4 | 104,9 | 5,3 | 144,5 | 49,3 | | 1038,1 |

3.11. Անտառածման պայմանների տիպ

Անտառտնտեսության սահմաններում անտառածման պայմանների տիպը բնութագրվել է համաձայն պրոֆ. Ե. Վ. Ալեքսենի և Պ. Ս. Պոգրեբնյակի կողմից մշակված էդաֆիկ ցանցի, ըստ որի անտառածման պայմանները հիմնականում որոշվում են երկու էդաֆիկ գործոններով՝ հողերի բերրիությամբ և խոնավացման պայմաններով և այդ գործոնները դիտվում են իրարից անկախ:

Հողերի բերրիությունը առաջացնում է հետևյալ տիպերի հաջորդականությունը.

- A- բնութագրում է աղքատ աճման տարածքով,
- B- համեմատաբար աղքատ աճման տարածքով,
- C- համեմատաբար բերրի աճման տարածքով,
- D- բերրի աճման տարածքով:

Խոնավապահովվածությունից ելնելով անտառի տիպերը բաժանվում են

0-չափազանց չոր,

1- չոր,

2- թարմ (չափավոր խոնավ),

3- խոնավ,

4- թաց,

5- ճահիճ:

Գյումրիի անտառտնտեսության անտառածածկ տարածքներում բացարձակ գերակշռում է համեմատաբար բերրի աճման պայմաններով չափավոր խոնավ C2 տիպը, որը զբաղեցնում է 916,1հա տարածք կամ ընդհանուր անտառածածկի 88,2%-ը, իսկ համեմատաբար աղքատ աճման պայմաններով տարածքները՝ (B1 և B2) կազմում են անտառածածկի ընդամենը 3,2%-ը (աղյուսակ 21):

Նշված հարաբերակցվածությունը հաշվի է առնվել անտառվերականգնման համալիր միջոցառումների նախատեսման ժամանակ:

Աղյուսակ 21. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ անտառաճման պայմանների տիպերի

| Անտառաճման տիպը | Գերակշռող ծառատեսակների մակերեսը, հա | | | | | | | |
|-----------------|--------------------------------------|------------|-------------|--------------|------------|--------------|--------------|---------------|
| | Սոճի | Կալնի | Հացենի | Թխիկ | Թեղի | Կաղամախի | Այլ տեսակներ | Ընդամենը |
| B1 | 10,5 | | | 0,1 | 0,1 | 6,9 | 0,3 | 17,9 |
| B2 | 1,2 | | | | | 14,1 | | 15,3 |
| C1 | 25,4 | 1,3 | 6,8 | 5,7 | 1,7 | 11,8 | 27,0 | 79,7 |
| C2 | 646,2 | 5,4 | 34,9 | 99,1 | 3,5 | 105,0 | 22,0 | 916,1 |
| C3 | 0,7 | | 1,7 | | | 6,7 | | 9,1 |
| Ընդամենը | 684,0 | 6,7 | 43,4 | 104,9 | 5,3 | 144,5 | 49,3 | 1038,1 |

3.12. Հիմնական անտառկազմող ծառատեսակների գնահատման միջին ցուցանիշները

Անտառտնտեսությունում անտառների միջին տարիքը 45 է, միջին բոնիտետային դասը՝ 2,5, ծառուտների միջին լրիվությունը 0,69 է, 1 հեկտարի միջին պաշարը՝ 153խտմ³, միջին տարեկան աճը՝ 3,48մ³, անտառի միջին կազմը՝ 6,6սոճի,1,5կաղամախի,1,0թխիկի,0,6հացենի,0,1թեղի,0,1տանձենի,0,1կաղնի+այլ տեսակներ (աղյուսակ 22):

Անտառապետություններում 2022թ.գնահատման միջին ցուցանիշները հետևյալն են՝

- Գյումրիի անտառապետություն՝ միջին տարիքը 46 է, միջին բոնիտետային դասը՝ 3,2, ծառուտների միջին լրիվությունը 0,66 է, 1 հեկտարի միջին պաշարը՝ 128մ³, միջին տարեկան աճը՝ 2,86մ³, անտառի միջին կազմը՝ 5,4սոճի,2,8կաղամախի,0,7հացենի,0,5թխիկի,0,3թեղի,0,2բարդի,0,1կաղնի+այլ տեսակներ,
- Աշոցքի անտառապետություն՝ միջին տարիքը 48 է, միջին բոնիտետային դասը՝ 2,1, ծառուտների միջին լրիվությունը 0,74 է, 1 հեկտարի միջին պաշարը՝ 198մ³, միջին տարեկան աճը՝ 4,41մ³, անտառի միջին կազմը՝ 9,9սոճի,0,1կաղնի+թխիկի,հացենի,կաղամախի,

- Զաջուռի անտառապետություն՝ միջին տարիքը 44 է, միջին բունիտետային դասը՝ 2,5, ծառուտների միջին լրիվությունը 0,68 է, 1 հեկտարի միջին պաշարը՝ 135մ³, միջին տարեկան աճը՝ 3,06մ³, անտառի միջին կազմը՝ 6,5սոճի,1,8թխկի,1,2հացենի,0,3կաղնի,0,2թեղի+այլ տեսակներ,
- Արթիկի անտառապետություն՝ միջին տարիքը 43 է, միջին բունիտետային դասը՝ 2,9, ծառուտների միջին լրիվությունը 0,62 է, 1 հեկտարի միջին պաշարը՝ 112մ³, միջին տարեկան աճը՝ 2,61մ³, անտառի միջին կազմը՝ 6,4սոճի,2,4թխկի,0,7հացենի,0,2տանձենի,0,1ակացիադեղին,0,1խնձորենի,0,1կաղնի+թեղի:

Աղյուսակ 22. Անտառզնահատման միջին ցուցանիշներն ըստ գերակշռող ծառատեսակների

| Հ/հ | Գերակշռող ծառատեսակը | Գնահատման միջին ցուցանիշներ | | | | | Ծառուտի միջին կազմը |
|----------------------------|----------------------|-----------------------------|----------------|--------------|---|-----------------------------------|---|
| | | Տարիքը | Բունիտետի դասը | Լրիվությունը | 1 հա անտառածածկ մակերեսի միջին պաշարը, մ ³ | Պաշարի 1 հա անտառածածկի միջին աճը | |
| 1 | Սոճի | 48 | 2,2 | 0,69 | 172 | 3,58 | 9,4սոճի, 0,4թխկի,0,1հացենի,0,1կաղնի+այլ տես. |
| 2 | Կաղնի | 35 | 3,3 | 0,63 | 73 | 2,09 | 9,2կաղնի, 0,5թխկի, 0,3սոճի |
| 3 | Հացենի | 34 | 3,3 | 0,53 | 39 | 1,19 | 6,6հացենի,2,0թխկի,0,4խնձորենի,0,3սոճի,0,3թեղի ,0,3տանձենի,0,1ակացիա դեղին |
| 5 | Թխկի | 37 | 3,1 | 0,70 | 79 | 2,18 | 6,7թխկի,2,4հացենիի,0,6սոճի,0,3թեղի+այլ տես. |
| 4 | Թեղի | 41 | 3,5 | 0,54 | 51 | 1,27 | 6,2թեղի,1,6թխկի,1,4հացենիի,0,4տանձենի ծառանման,0,2բարդի,0,2խնձորենի |
| 6 | Ակացիա սպիտակ | 35 | 2,5 | 0,69 | 64 | 1,84 | 4,6ակացիա,1,5թեղի,0,8թխկի,0,8հացենի, 0,8կեռասենի,0,8սալորենի,0,7տխլենի |
| 7 | Կաղամախի | 41 | 2,3 | 0,80 | 202 | 4,93 | 10 կաղամախի |
| 8 | Բարդի | 44 | 1,7 | 0,64 | 150 | 3,41 | 8,6բարդի,0,5կաղամախի,0,5թխկի,0,4հացենի |
| 9 | Տանձենի | 36 | 4,6 | 0,55 | 28 | 0,81 | 10տանձենի |
| 10 | խնձորենի | 35 | 5,1 | 0,59 | 30 | 0,86 | 10խնձորենի |
| 11 | Ակացիա դեղին | 35 | 5,9 | 0,54 | 7 | 0,22 | 10ակացիա |
| Անտառտնտեսություն | | 45 | 2,5 | 0,69 | 153 | 3,48 | 6,6սոճի,1,5կաղամախի,1,0թխկի,0,6հացենի,0,1թեղի ,0,1տանձենի,0,1կաղնի+այլ տեսակներ |
| Անտառապետություններ | | | | | | | |
| 1 | Գյումրի | 46 | 3,2 | 0,66 | 128 | 2,86 | 5,4սոճի,2,8կաղամախի,0,7հացենի,0,5թխկի,0,3թեղի,0,2բարդի,0,1կաղնի+այլ տեսակներ |
| 2 | Աշոցքի | 48 | 2,1 | 0,74 | 198 | 4,41 | 9,9սոճի,0,1կաղնի+թխկի,հացենի,կաղամախի |
| 3 | Զաջուռի | 44 | 2,5 | 0,68 | 135 | 3,06 | 6,5սոճի,1,8թխկի,1,2հացենի,0,3կաղնի,0,2թեղի+այլ տեսակներ |
| 4 | Արթիկի | 43 | 2,9 | 0,62 | 112 | 2,61 | 6,4սոճի,2,4թխկի,0,7հացենի,0,2տանձենի,0,1ակացիադեղին,0,1խնձորենի,0,1կաղնի+թեղի |

3.13. Անտառի ներկա վիճակի վերլուծություն

Նախորդ անտառչինական նյութերի, ինչպես նաև վերջին 2-3 տասնամյակներում անտառտնտեսության տարածքում անտառի վիճակի վերաբերյալ համապատասխան ուսումնասիրությունների բացակայության պատճառով համապատասխան համեմատականներով վերլուծության հնարավորություն չունենալով, անտառի վիճակը ներկայացվում է ընթացիկ գույքագրման և գնահատման արդյունքներով: Ուսումնասիրվել և վերլուծություն կատարվել է՝

անտառի պահպանություն. դաշտային ուսումնասիրությունների ընթացքում զանգվածային հատումներով անցած տարածքներ չեն հանդիպել, միայն հանդիպել են տարբեր տարիներին հատված՝ հիմնականում հաշվառված կոճղեր: Այս տեսանկյունից պահպանությունը կարելի է համարել բավարար: Սակայն անտառի սանիտարական անմխիթար վիճակը, հատկապես սոճու գերխիտ տնկարկներում ցցաչոր և տարբեր տարիներին առաջացած հիմնականում ձնակոտոր ծառերի, ինչպես նաև բների ստորին հատվածներում չոր ճյուղերի ու թափուկի առկայությունը, խիստ վտանգավոր է հրդեհավտանգության տեսանկյունից (նկար 4):

Նկար 4.



անտառազտագործում. անտառների կայուն կառավարման տեսանկյունից կարևորվում է խնամքի հատումների ժամանակին և սահմանված կարգով իրականացումը: Հարկ է նշել, որ անտառտնտեսության անտառներում ընդհանրապես չի իրականացվել անտառազտական տեսանկյունից շատ կարևոր խնամքի հատումների առաջին փուլը՝ լուսավորման և մաքրման հատումները (մատղաշի խնամք), միայն ոչ մեծ մակերեսների վրա իրականացվել են նոսրացման և անցումային հատումները, որոնք էականորեն չեն նպաստել ծառուտների վիճակի բարելավմանը, արդյունքում անտառտնտեսությունում քիչ չեն բարձր լրիվության, ցցաչորեր և քամատապալ ու ձնակոտոր ծառերի առկայությամբ սանիտարական առումով շատ վատ վիճակի ծառուտները:

Անտառվերականգնում. անտառտնտեսությունում անտառմշակույթների ընդհանուր մակերեսը՝ ներառյալ չմիակցված սաղարթով անտառմշակույթները, զբաղեցնում են 926,6հա, որոնց 30,1%-ի վիճակը գնահատվել է լավ, 41,4%-ը բավարար, իսկ 28,5%-ը վատ: Բնական վերականգնումն առանձին տարածքներում բավարար է, հատկապես անտառային բացատներում, նոսրուտներում և անտառի փեշերին նկատվում է սոճու բնական վերարտադրություն, որոշ տարածքներում հացենի, թխկի և այլ տեսակների հետ խառը կազմով (նկար 5): Բավարար պահպանության, հատկապես անասունների մուտքն անտառ բացառման պայմաններում ակնկալվում է բնական սերմնային վերականգնված տարածքների ընդարձակում:

Նկար 5.



Բաժին 4. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1. Ընդհանուր տեղեկություններ


Անտառտնտեսությանը հարակից բնակավայրերի ցանկում ներառված են Շիրակի մարզի Ախուրյան, Ամասիա, Անի, Աշոցք և Արթիկ խոշորացված համայնքներում, 1 քաղաքային և 42 գյուղական բնակավայրեր (աղյուսակ 23, քարտեզ 15): Բնակավայրերի մեծ մասը բավական հեռու են տեղակայված մարզկենտրոնից և մարզային քաղաքներից, որոնք հանդիսանում են գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնական շուկաները: Բնակավայրերի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից կազմում է 100-170կմ, ինչը նվազեցնում է տեղական գյուղատնտեսական արտադրանքի գնային մրցունակությունը: Համայնքները մեծապես տարբերվում են նաև ծովի մակարդակից ունեցած բարձրությամբ՝ 1480-2095մ, ինչը կարևոր է գյուղատնտեսական արտադրության տեսանկյունից: Ծովի մակարդակից 1500մ և ավել բարձրության վրա գտնվող արոտավայրերի առկայությունը նպաստավոր է անասնապահության համար:

Աղյուսակ 23. Ընդհանուր տվյալներ հարակից բնակավայրերի վերաբերյալ

| Համայնքի անվանումը | Բնակավայրի անվանումը | Հեռավորությունը մարզկենտրոնից, կմ | Հեռավորությունը Երևանից, կմ | Բարձրությունը ծովի մակարդակից, մ | Մշտական բնակչության թվաքանակը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ | Տնային տնտեսությունների քանակը | Գազաֆիկացում |
|--------------------|----------------------|-----------------------------------|-----------------------------|----------------------------------|---|--------------------------------|--------------|
| Ախուրյան | Առափի գյուղ | 6 | 130 | 1480 | 1693 | 500 | + |
| | Բասեն գյուղ | 15 | 133 | 1635 | 1275 | 459 | - |
| | Լեռնուտ գյուղ | 14 | 135 | 1840 | 136 | 51 | - |
| | Կամո գյուղ | 12 | 133 | 1640 | 1489 | 340 | + |
| | Կապս գյուղ | 13 | 135 | 1695 | 625 | 242 | + |
| | Կառնուտ գյուղ | 11 | 130 | 1575 | 998 | 192 | + |
| | Կրաշեն գյուղ | 15 | 135 | 1845 | 206 | 74 | - |
| | Հովիտ գյուղ | 15 | 134 | 1660 | 553 | 139 | - |
| | Մեծ Սարիար գյուղ | 15 | 135 | 1860 | 319 | 96 | - |
| | Շիրակ գյուղ | 9 | 130 | 1630 | 900 | 226 | - |
| | Ջաջուռ գյուղ | 14 | 135 | 1700 | 686 | 160 | - |
| | Ջաջուռավան գյուղ | 14 | 130 | 1795 | 173 | 43 | - |
| | Ջրառատ գյուղ | 20 | 138 | 1820 | 985 | 285 | - |
| | Փոքրաշեն գյուղ | 14 | 135 | 1885 | 203 | 22 | - |
| Ամասիա | Ամասիա գյուղ | 27 | 150 | 1895 | 1634 | 763 | + |
| | Ալվար գյուղ | 40 | 163 | 2025 | 129 | 36 | - |

| Համայնքի անվանումը | Բնակավայրի անվանումը | Հեռավորությունը մարզկենտրոնից, կմ | Հեռավորությունը Երևանից, կմ | Բարձրությունը ծովի մակարդակից, մ | Մշտական բնակչության թվաքանակը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ | Տնային տնտեսությունների քանակը | Գազաֆիկացում |
|--------------------|----------------------|-----------------------------------|-----------------------------|----------------------------------|---|--------------------------------|--------------|
| | Արեգնադեմ գյուղ | 23 | 146 | 1860 | 439 | 103 | - |
| | Ջրաձոր գյուղ | 20 | 144 | 1755 | 240 | 93 | - |
| Անի | Սառնաղբյուր գյուղ | 34 | 100 | 1890 | 3537 | 1025 | + |
| Աշոցք | Աշոցք գյուղ | 35 | 157 | 2005 | 1764 | 725 | - |
| | Արփենի գյուղ | 21 | 145 | 1925 | 366 | 80 | - |
| | Բաշգյուղ գյուղ | 36 | 160 | 2025 | 56 | 17 | - |
| | Գոգհովիտ գյուղ | 23 | 147 | 1835 | 403 | 92 | - |
| | Զույգաղբյուր գյուղ | 34 | 158 | 2005 | 515 | 113 | - |
| | Թորոսգյուղ գյուղ | 20 | 144 | 1910 | 353 | 79 | - |
| | Լեռնագյուղ գյուղ | 24 | 148 | 1970 | 25 | 7 | - |
| | Կարմրավան գյուղ | 32 | 154 | 2015 | 238 | 68 | - |
| | Կաքավասար գյուղ | 41 | 165 | 1945 | 132 | 30 | - |
| | Հարթաշեն գյուղ | 33 | 157 | 2030 | 120 | 39 | - |
| | Ձորաշեն գյուղ | 47 | 170 | 1955 | 219 | 50 | - |
| | Մուսայելյան գյուղ | 31 | 155 | 2055 | 356 | 90 | - |
| | Սալուտ գյուղ | 31 | 155 | 2095 | 100 | 20 | - |
| | Սարապատ գյուղ | 46 | 168 | 1965 | 108 | 29 | - |
| | Վարդաղբյուր գյուղ | 27 | 150 | 2050 | 139 | 22 | - |
| | Ցողամարգ գյուղ | 22 | 144 | 1955 | 593 | 118 | - |
| | Փոքր Սարիար գյուղ | 40 | 163 | 1975 | 235 | 58 | - |
| Արթիկ | Արթիկ քաղաք | 29 | 106 | 1780 | 17702 | 5200 | + |
| | Լեռնակերտ գյուղ | 35 | 104 | 1970 | 1397 | 296 | + |
| | Հառիճ գյուղ | 35 | 98 | 1995 | 1519 | 400 | + |
| | Նահապետավան գյուղ | 36 | 97 | 2020 | 814 | 184 | + |
| | Պեմզաշեն գյուղ | 32 | 100 | 1800 | 3392 | 820 | + |
| | Սարալանջ գյուղ | 35 | 94 | 1990 | 1290 | 300 | + |
| | Տուֆաշեն գյուղ | 26 | 102 | 1700 | 420 | 118 | + |

Քարտեզ 15. Անտառտնտեսության 5կմ-ոց գոտու հարակից բնակավայրերը



Անտառտնտեսությանը հարակից համայնքների համար կարևոր գյուղատնտեսական արտադրության ճյուղերն են բուսաբուծությունն ու անասնապահությունը: Հիմնական մշակվող կուլտուրաներն են ցորենը, գարին և կարտոֆիլը: Սեփական բնակելի տներին կից այգիներում մշակում են խնձորենի, տանձենի, բալենի, ընկուզենի, հաղարջենի և այլ պտղատու ծառեր ու թփեր:

Հետազոտված բնակավայրերի վարչական տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 100456հա, որտեղ Սառնաղբյուր, Ջրառատ և Ամասիա բնակավայրերն ունեն ամենամեծ մասնաբաժինները: Անտառային հողերի մակերեսը կազմում է 4521հա, որի մեծ մասը կենտրոնացված է Արթիկ, Ջաջուռ, Կրաշեն, Լեռնակերտ, Բասեն, Մեծ Սարիար, Լեռնագյուղ բնակավայրերի վարչական սահաններում: Անտառների հիմնման և ընդլայնման տեսանկյունից կարելի է առանձնացնել հողերի գյուղատնտեսական օգտագործման հանգամանքը: Անտառները պետք է հանդիսանան կայուն զարգացման տարածքներ և համայնքներում ապահովվեն եկամուտների գեներացման արդյունավետ հիմքեր: Տվյալ պարագայում լավագույն այլընտրանքը գյուղատնտեսության կայուն զարգացումն է: Այս նպատակով ոչ բոլոր նախադրյալներն են առկա. հողագործության վարման պայմանները և եղանակները համայնքներում արդյունավետ չեն: Անտառների հիմնման և ընդլայնման տեսանկյունից լուրջ միջոցառումներ պետք է իրականացվեն հողերի պլանավորման, ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման, բերքատվության բարձրացման, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, ոռոգման համակարգերի վերականգնման և այլ առումներով:

Բնակավայրերը հիմնականում գտնվում են զարգացվածության գրեթե նույն մակարդակի վրա և բնութագրվում են բնակչության ցածր կենսամակարդակով, աշխատատեղերի բացակայությամբ, գյուղատնտեսական ենթակառուցվածքների վատ վիճակով: Բնակավայրերի տեղական ընթացիկ ծախսերի ֆինանսավորման հիմնական աղբյուրը համայնքների բյուջեներն են, ընդ որում համայնքները կարողանում են ինքնուրույն հոգալ իրենց ընթացիկ ծախսերի միայն փոքր մասը և այս հարցում մեծապես կախված են պետական աջակցությունից:

4.2. Բնակչության սեռավարիքային բաշխվածքը

Անտառտնտեսությանը հարակից բնակավայրերի մշտական բնակչության ընդհանուր թիվը 2021 թ. դրությամբ կազմել է 48476 մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 17702 մարդ, իսկ գյուղականը՝ 30774 մարդ: Կանանց բաժինը բնակչության թվում կազմում է ընդհանուրի 53,7%-ը, իսկ տղամարդկանցը՝ 46,3%-ը: Կանանց գերակշռությունը կարող է պայմանավորված լինել տղամարդկանց աշխատանքային միգրացիայի երևույթով: Բաշգյուղ և Լեռնագյուղ բնակավայրերում բնակչության թիվն ամենափոքրն է:

Բնակավայրերի բնակչության որոշակի մասը ժամանակավոր կամ երկարաժամկետ բացակայողներ են: Չնայած դրան՝ բնակչության այս հատվածը չի կարելի մոռացության մատնել, քանի որ հենց նրանք են հանդիսանում բնակավայրերում առկա բնակչության թվաքանակի ավելացման առաջին աղբյուրը. այս մարդիկ ավելի շատ հակված կլինեն վերադառնալ իրենց համայնքներ սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխության պարագայում: Բացակայողների մոտ 60%-ը տղամարդիկ են:

Սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից ժողովրդագրական ցուցանիշներից առավել կարևորվում է հետազոտված բնակավայրերում զբաղված բնակչության ցուցանիշը: Արձանագրվել է, որ գյուղական բնակավայրերում զբաղված բնակչության մոտ 60%-ը ներգրավված է բացառապես գյուղատնտեսության մեջ, 40%-ն իրականացնում է նաև ոչ գյուղատնտեսական գործունեություն՝ հիմնականում աշխատելով պետական կառույցներում՝ համայնքապետարաններում, կրթական և մշակութային հաստատություններում, մասնավոր ձեռնարկություններում և այլն: Արձանագրվել է, որ բնակչության ընդհանուր առկա բնակչության մինչև 50%-ը ներգրավված է եկամուտ (հիմնականում պարենային ապահովվածություն) հետապնդող գործողություններում: Սրա հնարավոր բացատրություններից մեկն այս բնակավայրերում նկատվող բնակչության ընդհանուր ծերացման միտումն է: Հետազոտված բնակավայրերը ակնհայտորեն ծերացող են, մահերի թիվը նկատելիորեն գերազանցում է ծնունդների թվին, իսկ դինամիկան խիստ մտահոգիչ է:

4.3. Աշխատանքային միգրացիա

Երիտասարդ ընտանիքների շրջանում վերջերս նկատվում է իրենց գյուղական բնակավայրերը լքելու միտում՝ պայմանավորված ավելի լավ ապրելակերպի ապահովման ձգտումով: Վերջին տարիներին աճել է նաև աշխատանքային միգրացիայի ցուցանիշը, ինչն անհանգստացնող է, և պայմանավորված է այդ բնակավայրերի կտրվածությամբ և փոքր չափսերով, եկամուտներ ունենալու սահմանափակ հնարավորություններով, վատ ապրելակերպով և այլն: Մարդկային ռեսուրսների զարգացման առումով մասնավորապես անհրաժեշտ է իրականացնել տեղեկացվածության և վստահության բարձրացման, կրթական և վերապատրաստման, լրացուցիչ շահագրգռվածության ստեղծման լայնածավալ միջոցառումներ:

4.4. Սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների առկայությունը

Հետազոտված բնակավայրերի մեծ մասում գործում են մանկապարտեզներ և նախակրթարաններ: Որոշ բնակավայրերում նման հաստատություններ չկան երեխաների փոքր թվի և հաստատության շահագործման տնտեսական անհնարինության և աննպատակահարմարության պատճառով:

Հետազոտված բնակավայրերում գործում են տարրական, հիմնական, ավագ կամ միջնակարգ դպրոցներ: Որոշ դեպքերում իրականացվել են տարբեր գյուղերի դպրոցների միավորում: Իրավիճակը դպրոցների մեծամասնությունում ծայրահեղ վատ է: Անհապաղ վերանորոգման կարիք ունեն բազմաթիվ դպրոցներ, կահույքի, սպորտային և ուսուցողական նյութերի, որակավորված ուսուցիչների պակասն այլևս օրհասական խնդիրներ են: Կրթության որակը անհապաղ բարելավման կարիք ունի: Ներկայումս բազմաթիվ դպրոցներում մեկ ուսուցչի կողմից դասավանդվում են մի քանի առարկաներ: Սպորտային ակումբներ և ենթակառուցվածքներ հետազոտված գյուղական բնակավայրերում չկան՝ բացառությամբ դպրոցների մի մասի սպորտային դահլիճների:

Առողջապահական ենթակառուցվածքների վիճակը հետազոտված համայնքներում շատ վատ չէ. բնակավայրերում առկա են բուժկետեր և ամբուլատորիաներ, որտեղ վերապատրաստված բուժաշխատողները առաջին օգնության ծառայություններ են մատուցում բնակչությանը: Բարձրակարգ ու կլինիկական բժշկական ծառայություններն հասանելի են միայն մոտակա քաղաքներում:

Գյուղական բնակավայրերի մշակութային կյանքը բարելավման լուրջ կարիք ունի: Մշակույթի և կամ կենցաղի տների շենքային պայմանները ծայրահեղ վատ վիճակում են, մշակութային իրադարձությունները եզակի են: Որոշ փոքրամասշտաբ համերգներ և մշակութային միջոցառումներ են իրականացվում բնակավայրերի դպրոցներում՝ հիմնականում կրթական ծրագրերի շրջանակներում:

Բոլոր համայնքներն էլ հարուստ են բնական և պատմամշակութային հուշարձաններով, եկեղեցիներով, խաչքարերով: Այդ ամենի առկայությունը զբոսաշրջության զարգացման կարևոր նախապայման է հանդիսանում՝ չնայած մյուս պայմանները լուրջ բարեկարգման կարիք ունեն: Լուրջ ջանքեր պետք է ներդրվեն զբոսաշրջության կայուն ծառայություններ մշակելու և ներկայացնելու համար, և այդ ծառայությունները պետք է լայնորեն ներկայացվեն ինչպես տեղական, այնպես էլ արտերկրյա շուկաներում:

Հետազոտված համայնքներում սոցիալական ծառայությունների և ենթակառուցվածքների զարգացումն անհրաժեշտ է, նախ և առաջ, համայնքների կայուն զարգացման նպատակով: Ավելի կոնկրետ մոտեցման դեպքում ենթակառուցվածքների զարգացումը ուսումնասիրվող տարածքներում զբոսաշրջության զարգացման կարևորագույն նախապայման է: Ներկայիս իրավիճակում նման զարգացման նախադրյալները լավը չեն. համայնքային և միջհամայնքային ճանապարհների մի մասն ասֆալտապատված չէ և կան անանցանելի հատվածներ, հեռահաղորդակցության հասանելիությունը սահմանափակ է, մշակութային և ազգային զբոսաշրջության ենթակառուցվածքներն

անհապաղ վերականգնման կարիք են զգում, կանոնավոր միջոցառումներ գրեթե չկան և այլն:

4.4.1. Տրանսպորտային ծառայություններ

Անտառտնտեսության հարակից բնակավայրերում գործում են կանոնավոր տրանսպորտային ծառայություններ դեպի համայնքային կենտրոններ, մարզկենտրոն և հարևան բնակավայրեր: Մարզկենտրոն Գյումրիից, ինչպես նաև մայրաքաղաք Երևանից դեպի անտառտնտեսությանը հարակից բնակավայրեր տանող ճանապարհների որակն ընդհանուր առմամբ կամ լավն է, կամ էլ նորմալ է, որը չի կարելի ասել ներհամայնքային ճանապարհների մասին: Ճանապարհներն անցանելի են գրեթե ամբողջ տարվա ընթացքում՝ բացառությամբ բարձրլեռնային բնակավայրերի, որոնք դժվար հասանելի են ձմեռային ամիսներին:

4.4.2. Այլ ենթակառուցվածքներ

Հետազոտված բոլոր բնակավայրերն ամբողջությամբ էլեկտրիֆիկացված են: Էլեկտրաէներգիայի մատակարարումները կայուն են, խափանումները սակավաթիվ են և անհապաղ վերացվում են: Անջատումների ընդհանուր տևողությունը տարվա մեջ չի գերազանցում մի քանի տասնյակ ժամը: Հետազոտված բոլոր բնակավայրերը ապահովված են խմելու ջրի կանոնավոր մատակարարմամբ, թեև որոշ տեղերում առկա են ջրամատակարարման խնդիրներ: Ջրի որակն ընդհանուր առմամբ բավարար է: Ջրի մատակարարման անջատումները հետազոտված բնակավայրերում խիստ հազվադեպ են և կարճատև: Անտառտնտեսությանը հարակից բնակավայրերից գազաֆիկացված են 13-ը: Հետազոտված բնակավայրերի մեծ մասում առկա է կանոնավոր, թեև ոչ բավարար հաճախ իրականացվող աղբահեռացում: Միաժամանակ, ծայրահեղ մտահոգիչ է աղբավայրերի առկայության և որպես աղբավայր օգտագործվող տարածքների վիճակը: Դրանցից որևէ մեկը չի համապատասխանում նվազագույն անհրաժեշտ պահանջներին:

4.5. Աշխատուժ, զբաղվածություն և եկամուտներ

Ընդհանուր առմամբ 18 տարեկանից բարձր աշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է ընդհանուր առկա բնակչության մոտ 70%-ը: Աշխատունակ տարիքի բնակչության մոտ 67%-ը աշխատունակ է, որոնց 85%-ը՝ զբաղված է (ներառյալ ինքնազբաղվածները), որից 50%-ը՝ պետական հիմնարկներում՝ դպրոցներում, մանկապարտեզներում, համայնքապետարաններում և այլն: Մասնավոր հիմնարկներում զբաղվածները հիմնականում աշխատում են կաթի վերամշակման և հանքարդյունաբերության ոլորտի ձեռնարկություններում, ինչպես նաև մանրածախ առևտրի և սպասարկման ոլորտի կառույցներում: Աշխատունակ բնակչության մոտ 15%-ը զբաղված չէ տնտեսական որևէ

գործունեությամբ բարձր տարիքի կամ առողջական պատճառներով: Այնուամենայնիվ, աշխատունակ տարիքի բնակչության գրեթե 60%-ը կամ աշխատում են, կամ էլ ներգրավված են ինքնաապահովման գյուղատնտեսական գործունեության մեջ: Սա կարևոր է, քանի որ այն վկայում է, որ հետազոտված բնակավայրերում զգալի աշխատանքային (մարդկային) ռեսուրսներ կան, որոնք կարող են ներգրավվել անտառտնտեսական տարբեր գործողություններում:

4.6. Գյուղատնտեսություն

Անտառտնտեսության հարակից բնակավայրերում գյուղատնտեսության վիճակը բավարար չէ՝ ոռոգվող հողատարածքների սակավություն, ֆիզիկապես և բարոյապես մաշված գյուղատնտեսական մեքենասարքավորումներ, հողագործության մեջ ներդրումներ անելու համար սկզբնական կապիտալի բացակայություն, գյուղմթերքի պահպանման ենթակառուցվածքների անբավարարություն և այլն: Բանջար-բոստանային կուլտուրաների արտադրությունը հիմնականում ուղղված է տնտեսությունների սեփական կարիքների բավարարմանը և աճեցվում են ոռոգվող տնամերձ հողամասերում: Համայնքներն ունեն անասնապահության զարգացման պոտենցիալ, որն առաջին հերթին պայմանավորված է արոտավայրերի առկայությամբ: Սակայն ոլորտում առկա են որոշակի խնդիրներ, որոնք ընդհանուր են ՀՀ գրեթե բոլոր գյուղական համայնքների համար: Դրանց շարքում կարելի է նշել կենդանական ծագման արտադրանքի ոչ կայուն շուկան, հեռագնա արոտավայրերի ճանապարհների վատ վիճակը, դրանց մեծ մասի ոչ ջրարբիացված լինելը, բնակավայրերի մոտակա արոտավայրերի գերարածեցումը, պարբերաբար կրկնվող համաճարակները և այլն: Համայնքներում գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների մեծ մասը պայմանավորված է գյուղատնտեսական ենթակառուցվածքների բացակայության կամ դրանց վատ վիճակի հետ: Ենթակառուցվածքների մեծ մասը մնացել են դեռևս խորհրդային ժամանակներից: Դրանք ֆիզիկապես և բարոյապես մաշված են և չեն կարող նպաստավոր լինել արդյունավետ գյուղատնտեսության վարման տեսանկյունից: Գյուղատնտեսական մեքենասարքավորումները բնակավայրերում հիմնականում նորացման, արդիականացման կարիք ունեն:

4.7. Անտառամերձ համայնքների փայտանյութի պահանջարկ և թափուկ բնափայտի հաշվարկ

Անտառտնտեսությանը հարակից 43 բնակավայրերը հիմնականում տեղաբաշխված են անտառտնտեսության անտառների 5կմ-ոց գոտում, ընդհանուր հաշվով բնակավայրերում առկա է շուրջ 13804 տնային տնտեսություններ, որից միայն 5200-ը Արթիկ քաղաքում է: 43 բնակավայրերից 30-ը գազաֆիկացված չեն, իսկ որոշ գյուղեր ոչ ամբողջությամբ են գազաֆիկացված: Բնակչության ջեռուցման հիմնական աղբյուրը փայտն է, մասամբ նաև կենսավառելիքը՝ աթարը, ընդ որում ջեռուցման փայտի

նվազագույն պահանջարկը ընդհանուր հաշվով կազմում է մոտ 40000խտ.մ³: Նախատեսվող խնամքի հատումներից հնարավոր է բավարարել տարեկան ընդամենը 1050խտխմ, անտառներում ցցաչոր և քամատապալ ու ձնակոտոր՝ հիմնականում սոճու ծառերի ընդհանուր պաշարը գնահատվել է մոտ 1300խտխմ, իսկ անտառում վերջին տարիներն առաջացած և չարտահանված թափուկը գնահատվել է մոտ 2000խմ, ընդ որում հիմնականում մանր բնափայտի տեսքով, մեծամասամբ սոճի, որը բնակչության կողմից ջեռուցման նպատակով գրեթե չի հավաքվում, ինչն էլ շատ լուրջ վտանգ է հրդեհի տեսանկյունից: Հարկ է նշել, որ տարածաշրջանում թեպետ ոչ մեծ ծավալների, բայց զարգանում է բրիկետների արտադրությունն ու էներգաարդյունավետ վառարանների կիրառությունը, որի ընդլայնումը կնվազեցնի բնապահպանական խնդիրները:

Բաժին 5. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը գտնվում է Կովկասի էկոտարածաշրջանում: Այն բարձր լեռնային երկիր է, որտեղ առանձնացվում են 5 հիմնական լանդշաֆտային տիպեր՝ կիսաանապատային, տափաստանային, անտառային, ենթալպյան և ալպյան մարգագետնային: Հայաստանի տարածքում աճում են շուրջ 3800 տեսակ անոթավոր բույսեր, 428 հողային և ջրային ջրիմուռներ, 399 մամուռներ, շուրջ 4500 սնկեր, 464 քարաքոսեր, բնակվում են 549 ողնաշարավոր և շուրջ 17200 տեսակ անողնաշար կենդանիներ: Հայաստանի կենսաբազմազանությունն աչքի է ընկնում բարձր էնդեմիզմով՝ մոտ 500 կենդանատեսակ (ֆաունայի շուրջ 3%-ը) և 144 բուսատեսակ (ֆլորայի 3,8%-ը) համարվում են Հայաստանի էնդեմիկներ: Հայաստանի բույսերի Կարմիր գրքում ընդգրկված են 452 տեսակ, որը կազմում է ամբողջ ֆլորայի 11,9%-ը: Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված են 308 տեսակ՝ 155 անողնաշար և 153 ողնաշարավոր:

Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանն աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1000կմ² տարածքում աճում է մոտ 107 տեսակ: Բույսերի մոտ 2000 տեսակ օժտված է սննդային, կերային, դեղատու, ներկատու, եթերայուղատու, մեղրատու, խեժատու հատկանիշներով, մի շարք կենդանիներ՝ մորթատու, մսատու և այլ հատկանիշներով:

Հանդիսանալով մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ էկոլոգիական միջավայր, Հայաստանի կենսաբազմազանությունն ունի բնապահպանական կարևոր նշանակություն: Այն անհրաժեշտ գործոն է երկրի կլիմայի ձևավորման, ջերմային և ջրային ռեժիմների կարգավորման, օդը վտանգավոր գազերից և այլ նյութերից մաքրման, հողը էրոզիոն գործընթացներից պաշտպանման, շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ բարվոք վիճակի ապահովման համար: Հայաստանի բնակչության բարեկեցությունը և սոցիալական վիճակը սերտորեն կապված են կենսաբազմազանության պահպանության և կայուն

կառավարման հետ, որը հանդիսանալով կենսունակ բնության և առողջ կյանքի դեռևս թերագնահատված երաշխիքը՝ գերակա դիրք պետք է գրավի երկրի մնայուն արժեքների շարքում: Այդ տեսակետից Հայաստանի հարուստ կենսաբազմազանությունը, ունենալով էկոհամակարգերի կայունությունն ապահովող բարձր հատկանիշներ, միաժամանակ հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման կարևոր նախապայմաններից մեկը: Կենսառեսուրսները հանդիսանում են երկրի տնտեսությանն աջակցող առանցքային գործոն, հատկապես գյուղատնտեսության, սննդի և այլ ոլորտներին հումքի տրամադրման և ռեկրեացիայի զարգացման առումով:

5.1. Ֆլորա

Գյումրիի անտառտնտեսության տարածքի ֆլորայի ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի հերբարիումային նյութերի և գրականության, ՀՀ բույսերի Կարմիր գրքի տվյալների, ինչպես նաև Հայաստանի ֆլորայի վերաբերյալ հավաքագրված տվյալների վերլուծության և դաշտային դիտարկումների ու ուսումնասիրությունների հիման վրա:

Անոթավոր բույսեր: «Գյումրիի» անտառտնտեսության տարածքում հանդիպում են անոթավոր բույսերի 62 ընտանիքի և 128 ցեղին պատկանող 496 տեսակ:

«Գյումրիի» անտառտնտեսության տարածքում աճող բույսերից 16 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, որոնցից 3 տեսակը (*Allium struzlianum*/Սոխ Շտրուցլի, *Rhaponticoides tamaniana*/Տերեփուկ Թամանյանի, *Tragopogon armeniacus*/Սինձ հայկական) Հայաստանի էնդեմիկներ են (աղյուսակ 24, աղյուսակ 25, քարտեզ 16): Այս տվյալներն անհրաժեշտ են Գյումրիի անտառտնտեսության տարածքում բնապահպանական բարձրարժեք անտառների առանձնացման համար, ինչպես նաև անտառտնտեսական միջոցառումների պլանավորման համար:

Աղյուսակ 24. Գյումրիի անտառտնտեսության տարածքում աճող ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները


| Հ/հ | Տեսակի լատիներեն անվանումը | Տեսակի հայերեն անվանումը | Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի |
|-----|----------------------------|--------------------------|-------------------------------|
| 1 | <i>Alcea karsiana</i> | Տուղտավարդ Ղարսի | EN |
| 2 | <i>Alcea sophiae</i> | Տուղտավարդ Սոֆիայի | EN |
| 3 | <i>Allium oltense</i> | Սոխ Օլթիի | EN |
| 4 | <i>Allium rupestre</i> | Սոխ ժայռի | EN |
| 5 | <i>Allium struzlianum</i> | Սոխ Շտրուցլի | VU |
| 6 | <i>Allium woronowii</i> | Սոխ Վորոնովի | EN |

| Հ/հ | Տեսակի լատիներեն անվանումը | Տեսակի հայերեն անվանումը | Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի |
|-----|--|--------------------------|-------------------------------|
| 7 | <i>Asphodeline taurica</i> | Թաղաղու դրիմյան | EN |
| 8 | <i>Asperula affinis</i> | Գետնաստղ ցեղակից | EN |
| 9 | <i>Astragalus campylosema</i> | Գազ կորասերմ | CR |
| 10 | <i>Fritillaria collina</i> | Արքայաձաղիկ բլրակային | EN |
| 11 | <i>Gladiolus dzhavakheticus</i> | Թրաշուշան ջավախքի | EN |
| 12 | <i>Hedysarum elegans</i> | Կուրկուրան հիասքանչ | EN |
| 13 | <i>Paracaryum laxiflorum</i> | Պարակար նոսրաձաղիկ | CR |
| 14 | <i>Rhaponticoides tamaniana</i> | Տերեփուկ Թամանյանի | CR |
| 15 | <i>Tragopogon armeniacus</i> | Սինձ հայկական | EN |
| 16 | <i>Valeriana eriophylla</i> | Կատվախոտ բրդատերև | EN |
| 17 | <i>Asperulia affinis Boiss. et Huet</i> | Գետնաստղ ցեղակից | EN |
| 18 | <i>Grammosciadium pterocarpum Boiss.</i> | Գրամոսցիադում թևապտուղ | EN |
| 19 | <i>Astragalus xerophylus Ledeb.</i> | Գազ չորասեր | VU |
| 20 | <i>Alium scabriscapum Boiss. & Kotschy</i> | Սոխ անհարթացողուն | CR |

Աղյուսակ 25. ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի տարածվածությունը Գյումրիի անտառտնտեսության սահմաններում ըստ քառակուսիների և անտառամասերի

| Անտառպետություն | Քառակուսի | Անտառամաս/հատված |
|-----------------|-----------|-----------------------|
| Գյումրի | 5 | 3;4 |
| | 7 | 44;45 |
| Աշոցք | 2 | 1-8 |
| | 6 | 25-28 |
| Ջաջուռ | 4 | 10-12 |
| | 6 | 4;5 |
| | 7 | 5;6;12;13 |
| | 9 | 1;4;6;7; 19-24; 34-37 |
| | 10 | 4;5; 7-9; 11 |
| Արթիկ | 1 | 3-5; 9; 10-13; 14;15 |
| | 3 | 1-9; 12-16; 19-31; 33 |

Քարտեզ 16. Անտառտնտեսության տարածքում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները



Գյումրիի անտառտնտեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն և վաղուց կիրառվում են մարդու կողմից: Ըստ նախնական տվյալների տարածքում լայն տարածում ունեն ուտելի և համեմունքային (64 տեսակ), մեղրատու (58), դեղատու (42), կերային (54) նշանակության տեսակները: Անտառտնտեսության տարածքում հաճախ հանդիպող ուտելի և համեմունքային, մեղրատու, դեղատու և կերային բուսատեսակներն են.

Ուտելի և համեմունքային - շուշանբանջար սոխուկավոր, սիբեխ սովորական, դաղձ երկարատերև, ուրց Կոչիի, արոսենի, սալորենի, ելակ անտառային, եղինջ երկտուն, փիփերթ անտառային, փիփերթ արհամարհված, կոկոռչենի թեքված, ազնվամորի, գետնաբաղեղ բաղեղանման

Մեղրատու - Աստղաբույս ամենամեծ, աստղաձաղիկ իտալական, ճարճատուկ սովորական, իժախոտ սովորական, գերիմաստի, փշատենի նեղատերև, առվույտ ցանովի, երեքնուկ մարգագետնային, երեքնուկ սողացող, կոկոռչենի թեքված, գնարբուկ խոշորաբաժակ, սալորենի, ազնվամորի, ասպիրակ աղեղնեզր, ասպիրակ արևքուրիկատերև

Դեղատու - ծնեփակ դեղատու, ծնեփակ օղակավոր, ծորենի սովորական, ճարճատուկ սովորական, իժախոտ ռուսական, սիբեխ սովորական, անթառամ ծալքավոր, փիփերթ անտառային, դաղձ երկարատերև, սինդրիկ արևելյան, եղինջ երկտուն, արոսենի, ուրց Կոչիի, սոճի Կոխի

Կերային - դաշտավլուկ կաղնուտային, սիզախոտ սիզախոտանման, սիզախոտ մարգագետնային, շյուղախոտ մարգագետնային, սեզ սողացող, ոզնախոտ հավաքված, վարսակ դատարկ, շյուղախոտ վալիսյան, առվույտ ցանովի, կորնգան անդրկովկասյան, երեքնուկ վարելահողային, երեքնուկ մարգագետնային, երեքնուկ մազմզոտագլուխ, վիկ խայտաբղետ, վիկ նարնջագույն:

Ուտելի և համեմունքային տեսակներն օգտագործվում են ինչպես հում, այնպես էլ վերամշակված ձևով՝ աղցանների, թթու-մարինադների, հրուշակեղենի, ոգելից խմիչքների, թեյերի, հյութերի և այլնի պատրաստման ժամանակ: Տարածքում քիչ չեն արժեքավոր մեղրատու բուսատեսակները, որոնց լայն տարածվածությունը նպաստում է մեղվաբուծության զարգացմանը: Դեղատու բույսերը ոչ բոլոր տեղաբնակներին են հայտնի իրենց բուժիչ հատկություններով:

Նշված օգտակար տեսակների խմբերի միջև խիստ սահմանափակում չկա՝ որոշ տեսակներ միաժամանակ հանդես են գալիս մի քանի և նույնիսկ բոլոր (ուտելի ու համեմունքային, մեղրատու և դեղատու) խմբերում և դրանից ավելի են արժևորվում: Բացի անոթավոր բույսերից Գյումրիի անտառտնտեսության տարածքում հանդիպում են նաև ուտելի սնկեր: Ամենատարածվածներից են՝ շամպինյոն սովորականը (*Agaricus campestris*), կալոցիբե մայիսյան կամ շարքասունկ մայիսյան (*Calocibe gambosa*), ձմեռային կոճղասունկ (*Flammulina*

velutipes), շեկլիկ կամ կաթնասունկ նրբահամ (*Lactarius deliciosus*), ականջասունկ սովորական (*Pleurotus ostreatus*):

Հարկ է նշել, որ դեռևս անբավարար են ուսումնասիրված վերոնշյալ օգտակար տեսակների պաշարները, որոնց գնահատականները առայժմ սահմանափակվում են «առատ» կամ «հաճախ հանդիպող» բառերով:

Հիմնական վտանգները. հիմնական վտանգներ շարունակում են մնալ ապօրինի հատումները, արածեցումը՝ հատկապես համայնքամերձ անտառներում անասունների անարգել մուտքը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը:

Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա ազդեցություն կարող է ունենալ կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացման և խոնավության նվազման միտումները:

Բուսական էկոհամակարգերի համար սպառնալիք կարող է հանդիսանալ նաև ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածումը, օրինակ՝ *Ailanthus altissima*, *Robinia pseudacacia*, *Silybum marianum*, *Astragalus galegiformis*, *Ambrosia artemisiifolia* և այլն:

5.2. Ֆաունա

5.2.1. Անողնաշար կենդանիներ

Նկարագրություն: Հայաստանի անողնաշար կենդանիների ֆաունան բավական հարուստ է տեսակներով (շուրջ 17200 գրանցված տեսակ), որոնցից 316 տեսակը համարվում է էնդեմիկ, իսկ շուրջ 300-ը հազվագյուտ և անհետացող տեսակներ են:

Շիրակի մարզի, ինչպես նաև ամբողջ Հայաստանի անողնաշար կենդանիներն ուսումնասիրված են խիստ անհավասարաչափ: Բացի այդ, մինչ այժմ բացակայում են գիտական աշխատություններ, որոնք հատուկ նվիրված են Շիրակի մարզի անտառային գոտիներում հանդիպող անողնաշար կենդանիների համալիր նկարագրմանը: Այդ առումով մարզի արհեստական և բնական անտառապատ տարածքներում հանդիպող անողնաշարների տեսակային կազմը բացահայտելու համար օգտագործվել են կենդանիների ուսումնասիրության համար ընդունված մի շարք մեթոդներ՝ տարբեր գրական աղբյուրներ, սեփական դիտարկումներ, այլ մասնագետների ու բնասերների հետ վարած հարցազրույցների և հարցումների արդյունքներ: Համաձայն այդ տվյալների, Շիրակի մարզից հայտնի են անողնաշար կենդանիների 49 կարգի ներկայացուցիչներ, որոնք պատկանում են տափակ և օղակավոր որդերի, փափկամարմինների և հողվածոտանիների տիպերին:

Ընդհանուր առմամբ, Շիրակի մարզում հայտնի է շուրջ 1650 տեսակ անողնաշար կենդանիներ, որոնցից իրենց բազմազանությամբ աչքի են ընկնում հողվածոտանիները, հատկապես այդ տիպին պատկանող միջատները՝

ընդգրկված հետևյալ կարգերում՝ ոտնապոչիկավորներ (Podura), երկպոչիկավորներ (Diplura), խոզանապոչիկավորներ (Thysanura), միօրիկներ (Ephemeroptera), ճպուռներ (Odonata), խավարասերներ (Blattodea), աղոթարարներ (Mantodea), ականջմտնուկներ (Dermaptera), գարունիկներ (Plecoptera), ուղղաթևավորներ (Orthoptera), հավասարաթևավորներ (Homoptera), փետրակերներ (Mallophaga), կիսակարծրաթևավորներ (Hemiptera), տրիպսներ (Thysanoptera), կարծրաթևավորներ (Coleoptera), թփուկաթևավորներ (Lepidoptera), թաղանթաթևավորներ (Hymenoptera), լվեր (Siphonaptera), երկթևանիներ (Diptera):

Վերոնշյալ կարգերի ներկայացուցիչներից որոշները հանդիսանում են անտառային ծառատեսակների, մասնավորապես սոճուտների վնասատուներ: Հայաստանի հյուսիսային շրջաններում դրանցից տարածված են սոճու մեծ (Blastophagus piniperda) և փոքր (Blastophagus minor) քրծնակերները, որոնցից առաջինը տարածված է խոնավ սոճուտներում, իսկ երկրորդը՝ չոր: Չոր սոճուտներում լայն տարածում ունի նաև վեցատամ կեղևակերը (Ips sexdentatus): Ընդհանուր առմամբ, Հայաստանի հյուսիսային սոճուտներում հայտնաբերվել է 22 վնասատու տեսակ, որոնց գործունեությունը այս կամ այն չափով շաղկապված է վերոնշյալ զանգվածային բազմացող կեղևակերների հետ: Սոճուտներում հայտնաբերվել են նաև մի շարք երկրորդային վնասատուներ կարծրաթևավորների կարգից՝ երկրաբեղիկայիններ, երկարակնճիթայիններ, ոսկեբզեզայիններ և այլ ընտանիքների ներկայացուցիչներ: Բացի միջատներից, տեսակային մեծ բազմազանություն ունեն նաև խելիցերավորների ենթատիպին (Chelicerata) պատկանող սարդերը, խոտհարները, տզերը, որոնց կարգաբանական պատկանելության մասին դեռևս բացակայում են համապատասխան գիտական տվյալները:

Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված հազվադեպ և անհետացող 153 անողնաշար կենդանատեսակներից Շիրակի մարզում ներկայացված են ընդամենը 12-ը, որոնցից Գյումրիի անտառտնտեսության և հարակից տարածքներից հայտնի են 10 տեսակներ (աղյուսակ 26, քարտեզ 17):

Աղյուսակ 26. Գյումրիի անտառտնտեսության տարածքից հայտնի՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված անողնաշար կենդանիների տեսակները

| Հ/հ | Տեսակի լատիներեն անվանումը | Տեսակի հայերեն անվանումը | Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի |
|-----|---------------------------------|--------------------------|-------------------------------|
| 1 | <i>Coenagrion vanbrinkae</i> | Վան Բրինկի նետիկ | VU |
| 2 | <i>Gomphocerus armeniacus</i> | Մորեխ հայկական | VU |
| 3 | <i>Parnassius mnemosyne</i> | Մնեմոզինա կամ սև ապոլոն | VU |
| 4 | <i>Maculineaalcon monticola</i> | Ալկոն կապտաթիթեռ | VU |
| 5 | <i>Maculinea arion</i> | Արիոն կապտաթիթեռ | VU |
| 6 | <i>Agrodiaetus ninae</i> | Նինայի կապտաթիթեռ | VU |

| Հ/հ | Տեսակի լատիներեն անվանումը | Տեսակի հայերեն անվանումը | Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի |
|-----|-----------------------------|--------------------------|-------------------------------|
| 7 | <i>Agrodiaetus turcicus</i> | Թուրքական կապտաթիթեռ | VU |
| 8 | <i>Lithurge fuscipenne</i> | Մգաթև մեղու | VU |
| 9 | <i>Bombus daghestanicus</i> | Իշամեղու դաղստանյան | VU |
| 10 | <i>Bradyporus dilatatus</i> | Հաստածղրիդ լայնացած | VU |

Հիմնական վտանգները. անողնաշար կենդանիների համար հիմնական վտանգ շարունակում է մնալ ապօրինի անտառահատումները, որոնք հանգեցնում են տարածքների մասնատմանը և դեգրադացիային, ինչպես նաև վնասատուների դեմ պայքարը քիմիական նյութերի միջոցով, հատկապես ավիացիոն միջոցներով: Հիմնական վտանգներից է նաև կենսամիջավայրի քայքայումը (ՀԷԿ-երի կառուցում, ջրամբարների ափամերձ բուսականության այրում կամ մաքրում) և ջրերի աղտոտվածությունը մարդու տնտեսական գործունեության արդյունքում:

Պահպանման խնդիրները. անհրաժեշտ է հնարավորինս պահպանել կենսամիջավայրի բնական պայմանները: Խնամքի, ասնիտարական հատումներ իրականացնելիս տարածքներում անհրաժեշտ է պահպանել անողնաշար կենդանիների ապրելավայր հանդիսացող առանձին կիսաշոր փչակավոր ծառերը, իսկ վնասատուների թվաքանակի հնարավոր բռնկումների դեպքում ցանկալի է խուսափել ավիացիոն պայքարի ձևերից և կիրառել կենսաբանական պայքարի ձևերը: Ավիացիոն պայքարի անխուսափելիության պարագայում անհրաժեշտ է հնարավորինս տեղայնացնել պայքարը և չընդլայնել գործողությունները բռնկումից դուրս տարածքներում:

5.2.2. Ողնաշարավոր կենդանիներ

Շիրակի մարզում հայտնի է ողնաշարավոր կենդանիների 212 տեսակ, որոնցից՝ ձկների 16 տեսակ, երկկենցաղների՝ 3, սողունների՝ 14, թռչունների՝ 139, կաթնասունների՝ 40 տեսակ: Նշված տեսակային կազմի վերհանման համար օգտագործվել են ուսումնասիրման մի քանի ընդունված մեթոդներ, որոնցից են մասնագիտական գրական մի շարք աղբյուրներ, բազմամյա դաշտային ուսումնասիրությունները և անմիջական դիտարկումները, առանձին դեպքերում՝ տեղի որսորդների և բնասերների հետ հարցազրույցները:

Ձկներ՝ նկարագրություն. Գյումրի անտառտնտեսության անտառների հարակից տարածքում գտնվող գետերում և ջրամբարներում հանդիպում է 16 ձկնատեսակ, որոնք են՝ կարմրախայտ, ծիածանախայտ, ծածան, արևելյան տառեխիկ, արևելյան թեփուղ, արծաթափայլ կարաս, սպիտակ ամուր, Կուրի սպիտակաձուկ, Կուրի բեղաձուկ, մուրձի, կողակ, կապույտ, Կուրի ենթաբերան, մանրաթեփուկ, ամուրյան նրբաձուկ և հաշամ:

Կարմրախայտը տեղաբնակ տեսակ է, որը հանդիպում է գետերում, որտեղ նրանց գլխաքանակը վերջին տարիներին կտրուկ նվազել է: Հանդիսանում է սիրողական ձկնորսության օբյեկտ: Ծիածանախայտը գետերի ու ջրամբարների հարակից տարածքներում բուծվող ծագումով հյուսիսամերիկյան ձկնատեսակ է, որը պարբերաբար պատահականորեն ներթափանցում է բնական ջրային տարածքներ: Հանդիպում է ինչպես գետերում, այնպես էլ ջրամբարներում: Բնության մեջ առայժմ գրանցված չեն բազմացման դեպքեր: Ծածանը հիմնականում ջրամբարներում բնակվող ձկնատեսակ է, որտեղ վերաբնակվեցվում է սիրող ձկնորսների կողմից, որպես սիրողական ձկնորսության օբյեկտ: Ներկայում ծածանի փոխարեն հանդիպում է նրա ընտելացված ձևը՝ կարպը: Արևելյան տառեխիկը տեղաբնակ բազմաքանակ ձկնատեսակ է, որը հանդիպում է ինչպես գետերում, այնպես էլ ջրամբարներում: Իր մանր չափերի պատճառով ձկնորսական նշանակություն չունի: Արևելյան թեփուղը՝ տեղաբնակ, ոչ հաճախ հանդիպող տեսակ է: Հանդիսանում է սիրողական ձկնորսության օբյեկտ: Արծաթափայլ կարասը կլիմայավարժված, հիմնականում ջրամբարներում հանդիպող տեսակ է: Տեղի բնակչության և սիրողական ձկնորսությամբ զբաղվողների կողմից որսվող հիմնական տեսակներից է: Սպիտակ ամուրը ոչ տեղաբնակ ձկնատեսակ է, որին սիրողական ձկնորսության զարգացման նպատակով ներմուծում են առանձին ջրամբարներ: Այստեղ նրանք ուղղակի բնակվում են՝ սնվելով ջրային ու ջրամերձ բույսերով: Կուրի սպիտակաձուկը տեղաբնակ, ոչ շատ հաճախ հանդիպող ձկնատեսակ է: Իր մանր չափերի պատճառով ձկնորսական նշանակություն չունի: Կուրի բեղաձուկը տեղաբնակ, գետերում լայնորեն տարածված տեսակ է: Հանդիսանում է սիրողական ձկնորսության օբյեկտ: Մուրճի ձկնատեսակը տեղաբնակ, հազվադեպ հանդիպող տեսակ է: Հանդիսանում է սիրողական ձկնորսության օբյեկտ: Կողակը տեղաբնակ, գետերում և ջրամբարներում տարածված ձկնատեսակ է: Ջրամբարներում տեղի բնակչության և սիրողական ձկնորսությամբ զբաղվողների կողմից որսվող հիմնական ձկնատեսակներից է: Կապուտը տեղաբնակ, գետերում տարածված սակավաթիվ ձկնատեսակ է: Հանդիսանում է սիրողական ձկնորսության օբյեկտ: Կուրի ենթաբերանը տեղաբնակ, գետերում և ջրամբարներում տարածված ձկնատեսակ է: Ջրամբարներում տեղի բնակչության և սիրողական ձկնորսությամբ զբաղվողների կողմից որսվող տեսակներից է: Մանրաթեփուկը տեղաբնակ, գետերում և ջրամբարներում տարածված ձկնատեսակ է: Ջրամբարներում տեղի բնակչության և սիրողական ձկնորսությամբ զբաղվողների կողմից որսվող ձկնատեսակներից է: Ամուրյան նրբաձուկը կլիմայավարժված ինվազիվ ձկնատեսակ է: Իր մանր չափերի պատճառով ձկնորսական նշանակություն չունի: Կարող է վնաս հասցնել այլ ձկնատեսակներին՝ սնվելով նրանց ձկնկիթով և մատղաշներով, ինչպես նաև տարածելով զանազան ինվազիվ հիվանդություններ: Հաշամը տեղաբնակ, գետերում և ջրամբարներում սահմանափակ տարածված ձկնատեսակ է, որը

գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: Պաշարները նվազում են գերորսի և կենսամիջավայրի էկոլոգիական փոփոխությունների պատճառով:

Հիմնական վտանգները. տարածքի ձկնաշխարհին սպառնացող հիմնական վտանգները ներառում են չկանոնակարգված ձկնորսությունը, ջրամբարներում ամբարված ջրի օգտագործումը գյուղատնտեսական նպատակներով, ինչպես նաև գետերի աղտոտումը կենցաղային ջրերով

Պահպանությունը. պահպանության և պաշարների վերականգնման կարիք ունեն գետերում հազվադեպ հանդիպող ձկնատեսակներից հաշամը, կարմրախայտը և մուրծին:

Երկկենցաղներ՝ նկարագրություն. ուսումնասիրվող տարածքներում հանդիպում են Հայաստանում տարածված երկկենցաղների 7 տեսակներից 3-ը: Այդ տեսակներն են լճագորտը, փոքրասիական գորտը և կանաչ փոփոխական դոդոշը, որոնք գրանցված են չեն ՀՀ Կարմիր գրքում:

Լճագորտը լայնորեն տարածված է գետերի և ջրամբարների ափերին: Զրից հեռու երբեք չի հանդիպում: Համեմատաբար բազմաքանակ տեսակ է: Փոքրասիական գորտը սովորաբար հանդիպում է գետերի ափերին: Կարող է հանդիպել ջրից բավական հեռու, եթե ցամաքի տվյալ տարածքը խոնավ է: Համեմատաբար սակավաթիվ տեսակ է: Կանաչ փոփոխական դոդոշը չորադիմացկուն տարածված տեսակ է և հանդիպում է ջրից բավական հեռու, ջրային տարածքները հիմնականում օգտագործում է բազմացման նպատակով: Վարում է մթնշաղային և գիշերային կենսաձև, համեմատաբար բազմաքանակ է:

Հիմնական վտանգները. տարածքի բատրախոֆաունային սպառնացող հիմնական վտանգներից է փոքրիկ լճակների՝ որպես առանձին երկկենցաղների, հատկապես կանաչ փոփոխական դոդոշի բազմանալու վայր՝ չորացումը:

Պահպանությունը. պահպանության հատուկ կարիք տարածքի երկկենցաղները չունեն: Ուշադրություն է պետք դարձնել բազմացման վայրերում փոքրիկ լճակների չորացման հետևանքով շերտփուկների ոչնչացումը կանխելու վրա: Դրա համար կարիք կլինի շերտփուկներին տեղափոխել ավելի բարենպաստ միջավայր:

Սողուններ՝ նկարագրություն. Ուսումնասիրվող տարածքների հերպետոֆաունան դեռևս լիարժեք ուսումնասիրված չէ: Ելնելով գրական աղբյուրների, ինչպես նաև սեփական դիտարկումների արդյունքներից, այստեղ բնակվում են հետևյալ սողունները՝ կոտրատվող իլիկամողես, շերտավոր մողես, ճարպիկ մողես, փոքրասիական մողես, Վալենտինի ժայռային մողես, նաիրյան ժայռային մողես, Դալի ժայռային մողես, հայկական ժայռային մողես, սպիտակափոր ժայռային մողես, սովորական պղնձօձ, բազմագույն սահնօձ, սովորական լորտու, ջրային լորտու, հայկական լեռնատափաստանային իժ: Կոտրատվող իլիկամողեսն անտառային գոտում բնակվող անոտ, մինչև 40 սմ

երկարությամբ սողուն է: Շերտավոր մողեսը կանաչապատ բաց տարածքներում բնակվող սողուն է, որի երկարությունը կարող է հասնել մինչև 25 սմ: Ճարպիկ մողեսն ապրում է քարքարոտ լեռնաքսերոֆիտային տափաստաններում: Հանդիպում է նաև անտառային գոտում: Մարմնի երկարությունը հասնում է մինչև 11սմ: Փոքրասիական մողեսն ապրում է չորասեր նոսր բուսածածկով, քարքարոտ լեռնաքսերոֆիտային տափաստաններում: Մարմնի երկարությունը հասնում է մինչև 6սմ: Վալենտինի ժայռային մողեսը բարձրլեռնային մողես է, որը բնակեցնում է չափավոր թեքություն ունեցող լանջերը, ժայռերը, խոշոր քարերը: Մարմնի երկարությունը հասնում է մինչև 8սմ-ի: Նաիրյան ժայռային մողեսը բնակվում է լեռնային տափաստանների քարքարոտ մասերում: Մարմնի երկարությունը հասնում է մինչև 7-8սմ-ի: Դալի ժայռային մողեսը բնակվում է անտառային գոտու կիրճերի չափավոր չոր լանջերի, ժայռերի վրա: Մարմնի երկարությունը հասնում է մինչև 7սմ-ի: Հայկական ժայռային մողեսը բնակեցնում է անտառային և լեռնատափաստանային գոտու ժայռային ելքերը, կիրճերի լանջերը, խոշոր ժայռաբեկորները: Մարմնի երկարությունը հասնում է մինչև 7սմ-ի: Սպիտակափոր ժայռային մողեսը բնակեցնում է լեռնատափաստանային գոտու քարքարոտ լանջերը և ժայռերի ելքերը: Մարմնի երկարությունը հասնում է մինչև 7սմ-ի: Սովորական պղնձօձը համեմատաբար խոշոր, մինչև 1.2 մ երկարությամբ օձատեսակ է, որը բնակվում է բաց տարածքներում, լեռնային անտառների բացատներում: Բազմագույն սահնօձը համեմատաբար խոշոր, մինչև 1.3մ երկարությամբ օձատեսակ է, որը բնակվում է քարքարոտ վայրերում, քսերոֆիտ բուսականությամբ ծածկված լեռների լանջերին, հաճախ կարող է հանդիպել այգիներում, դաշտերում: Անվնաս տեսակ է, որի հիմնական սնունդը կրծողներն են ու մանր թռչունները: Սովորական լորտուն սովորաբար մինչև 1 մ երկարություն ունեցող օձատեսակ է, որը հաճախ բնակվում է գետերի ու ջրամբարների ափերին, խոնավ անտառներում: Ջրային լորտուն սովորաբար մինչև 1 մ երկարություն ունեցող օձատեսակ է, որը հաճախ բնակվում է գետերի ու ջրամբարների ափերին, որտեղ սնվում է ձկներով և երկկենցաղներով: Հայկական լեռնատափաստանային իժը մինչև 65սմ երկարությամբ թունավոր օձ է: Բնակվում է տարբեր տիպի լեռնային տափաստաններում, ալպիական մարգագետիններում, չորադիմացկուն բուսականությամբ ծածկված քարքարոտ լանջերում:

Վերոնշյալ սողուններից ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված 4 տեսակներ հայտնի են անտառտնտեսության տարածքից, որոնք բերված են ստորև աղյուսակում (աղյուսակ 27, քարտեզ 17):

Աղյուսակ 27. Գյումրիի անտառտնտեսության տարածքից հայտնի ՀՀ Կարմիր գրքում գրանցված սողունների տեսակները

| Հ/հ | Տեսակի լատիներեն անվանումը | Տեսակի հայերեն անվանումը | Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի |
|-----|------------------------------|-------------------------------|-------------------------------|
| 1 | <i>Parvilacerta parva</i> | Փոքրասիական մողես | CR |
| 2 | <i>Darevskia dahli</i> | Դալի մողես | EN |
| 3 | <i>Darevskia unisexualis</i> | Սպիտակափոր մողես | VU |
| 4 | <i>Vipera eriwanensis</i> | Հայկական լեռնատափաստանային իժ | VU |

Հիմնական վտանգները. սողունների բազմազանության վրա ազդող հիմնական վտանգներն են մարդու գործունեության արդյունքում կենսամիջավայրերի փոփոխություն, բնական կենսամիջավայրի ոչնչացում, ինչպես նաև ուղղակի ոչնչացում, կենսամիջավայրի աղտոտում օրգանական և անօրգանական թափոններով:

Պահպանությունը. անհրաժեշտ է իրականացնել հանրային իրազեկման քարոզարշավներ, մշակել և հրատարակել բնապահպանական բրոշյուրներ և տարածել համայնքներում, ներկայացնել այդ տեսակների կարևորությունը բնության մեջ, ինչպես նաև նշանակությունը էկոտուրիզմի հետ կապված գործողությունների ընթացքում և այլն:

Թռչուններ՝ նկարագրություն. ուսումնասիրվող տարածքի թռչունները ներկայացված են սաղարթավոր անտառներին, և հիմնականում բաց տարածքներին՝ լեռնատափաստաններին, լեռնային մարգագետիններին, ինչպես նաև ժայռային և քարացրոնային կենսամիջավայրերին բնորոշ տեսակներով: Անտառտնտեսությանը հարակից գյուղատնտեսական հանդակներում և Ախուրյան գետի հովտի, ջրատարների և ջրամբարների մոտ հանդիպում են ջրային կենսամիջավայրերին բնորոշ տեսակներ:

Հայաստանում գրանցված թռչունների ավելի քան 350 տեսակից Շիրակի անտառտնտեսության և հարակից տարածքներում տարվա տարբեր սեզոններին կարելի է հանդիպել 139 տեսակ, որոնցից 52-ը այստեղ նստակյաց են, 37-ը՝ բնադրող չվող են, 43-ը՝ հանդիպում են հիմնականում գարնանային ու աշնանային չուի ժամանակ, իսկ 6-ը՝ միայն ձմռանը:

Նշված թռչունները պատկանում են հետևյալ կարգերին՝ սագանմաններ (6 տեսակ), հավազգիներ (2 տեսակ), արագիլանմաններ (8 տեսակ), ճուռակայիններ (15 տեսակ), բազեայիններ (4 տեսակ), հովվիկայիններ (2 տեսակ), կռունկայիններ (1 տեսակ), քարադրանմաններ (10 տեսակ), աղավնանմաններ (3 տեսակ), կկվանմաններ (1 տեսակ), բվանմաններ (5 տեսակ), մանգաղաթևանմաններ (2 տեսակ), ներկարարանմաններ (3 տեսակ), փայտփորայիններ (1 տեսակ) և ճնճղուկանմաններ (75 տեսակ):

Անտառտնտեսության և հարակից տարածքներում հանդիպող թռչուններից 10-ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում (աղյուսակ 28, քարտեզ 17):

Աղյուսակ 28. Գյումրիի անտառտնտեսության տարածքից հայտնի ՀՀ Կարմիր գրքում գրանցված թռչնատեսակները

| Հ/հ | Տեսակի լատիներեն անվանումը | Տեսակի հայերեն անվանումը | Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի |
|-----|------------------------------|--------------------------|-------------------------------|
| 1 | <i>Neophron percnopterus</i> | Գիշանգղ | EN |
| 2 | <i>Circus pygargus</i> | Մարգագետնային մկնաճուռակ | VU |
| 3 | <i>Aquila nipalensis</i> | Տափաստանային արծիվ | VU |
| 4 | <i>Aquila chrysaetos</i> | Քարարծիվ | VU |
| 5 | <i>Hieraaetus pennatus</i> | Գաճաճ արծիվ | VU |
| 6 | <i>Falco peregrinus</i> | Սապսան | VU |
| 7 | <i>Bubo bubo</i> | Բվեճ | VU |
| 8 | <i>Coracias garrulus</i> | Ներկարար | VU |
| 9 | <i>Aquila clanga Pallas</i> | Մեծ ենթարծիվ | VU |
| 10 | <i>Gallinago media</i> | Կրկնակոցար | VU |

Սաղարթավոր անտառների, սոճիների և անտառապաշտպան շերտերի ու թփուտների համար բնորոշ տեսակներից են ցախաքլորաորսը, լորաճուռակը, սովորական ճուռակը, անտառային աղավնին, հոբալը, ականջավոր բուն, կկուն, մեծ խայտաբղետ փայտփորը, անտառային ձիուկը, եղնջաթռչնակը, արշալույսիկը, սովորական հրապոչը, սև կեռնեխը, սոսնձակեռնեխը, մոխրագույն շահրիկը, կովկասյան գեղգեղիկը, երաշտահավերի մի քանի տեսակներ, ժուլանը, անտառային կաչաղակը և ամուրիկը:

Լեռնատափաստաններում և լեռնային մարգագետիններում հանդիպում են մոխրագույն կաքավը, լորը, ոսկեգույն մեղվակերը, ներկարարը, հոպոպը, բվեճը, երկբծավոր արտույտը, դաշտային արտույտը, դաշտային ձիուկը, մարգագետնային չքչքանը, սովորական քարաթռչնակը, վարդագույն սարյակը, ժայռային ճնճուկը, կանեփնուկը, ոսպնուկը, այգու դրախտապանը, սևագլուխ դրախտապանը և կորեկնուկը: Այս գոտում կեր հայթայթելիս հաճախ են հանդիպում տարբեր գիշատիչ թռչուններ՝ մորուքավոր անգղը, տափաստանային ճուռակը, քարարծիվը, հողմավար բազեն, սապսանը:

Բարձր լեռնային գոտում և այստեղ առկա ժայռոտ ելքերի ու քարացրոնների մոտ հանդիպում են եղջերավոր արտույտը (*Eremophila alpestris*), ժայռային ծիծեռնակը (*Ptyonoprogne rupestris*), լեռնային ձիուկը (*Anthus spinoletta*), կապտափող սոխակը (*Luscinia svecica*), սևուկ հրապոչը (*Phoenicurus ochruros*), խայտաբղետ քարակեռնեխը (*Monticola saxatilis*), ժայռային փոքր սիսեղը (*Sitta neumayer*), ձյան ճնճուկը (*Montifringilla nivalis*), կարմրաթև ոսպնուկը (*Rhodopechys sanguineus*):

Ախուրյան գետի հովիտը և տարածաշրջանի ջրամբարները և խոշոր ջրատարները գրավում են տարբեր ջրային թռչունների, ինչպիսիք են կոնչան բադը (*Anas platyrhynchos*), կվակվան (*Nycticorax nycticorax*), մոխրագույն տառեղը (*Ardea cinerea*), եղեգնահավը (*Gallinula chloropus*), հայկական որորը (*Larus armenicus*), կարմրաոտ կտցարը (*Tringa totanus*), սպիտակավիզ կտցարը (*Actitis hypoleucos*), առափնյա ծիծեռնակը (*Riparia riparia*), դեղին խաղտոնիկը (*Motacilla flava*), լայնապոչ եղեգնաթռչնակը (*Cettia cetti*), ջրաճնճուկը (*Cinclus cinclus*):

Գարնանային և աշնանային չույի շրջաններում Գյումրիի անտառտնտեսությունում և հարակից տարածքներում հանդիպում է թռչունների մի շարք չվող տեսակներ՝ մոխրագույն սագը, ճրճքան մրտիմնը, դեղին տառեղը, շիկակարմիր տառեղը, սև արագիլը, քաջահավը, մոխրագույն կռունկը, մեծ մորակտցարը, սպիտակաթև ջրածիծառը, ճահճային բուն, սպիտակափոր մանգաղաթևը, տափաստանային արտույտը, տարբեր տեսակների շահրիկներ, փոքր և կիսասպիտակավիզ ճանճորսերը, պիրոլը, կարմրակատար շամփրուկը: Մշակվող դաշտերում միջատների ու կրծողների առատությունը այստեղ է գրավում տարբեր գիշատիչ թռչունների՝ սև ցինին, տափաստանային և մարգագետնային մկնաճուռակներին, փոքր ենթաարծվին, տափաստանային արծվին, գաճաճ արծվին, տափաստանային հողմավար բազեին:

Հիմնական վտանգները. ապօրինի անտառահատումները և անտառապատ տարածքների մասնատումը հիմնական վտանգն են ներկայացնում անտառտնտեսության անտառային տեսակների համար: Մասնավորապես բացասական ազդեցություն ունի փչակավոր ծառերի ոչնչացումը, որոնք բնադրատեղի են հանդիսանում մի շարք փչակաբնակ տեսակների համար: Տարածքի գիշատիչ և խոշոր թռչունների համար մեծ վտանգ է ներկայացնում որսագողությունը: Անկանոն որսը բացասական ազդեցություն ունի կաքավների և լորի պոպուլյացիաների վրա: Արոտավայրերի կառավարման բացակայությունը և դրանց ապօրինի, բայց կանոնավոր այրումը հովիվների կողմից մեծ վտանգ է ներկայացնում վայրի կենդանիների և անտառտնտեսության համար:

Պահպանությունը. առանձին վտանգված տեսակների պահպանությանն ուղղված առաջարկությունները ներկայացված են ՀՀ Կարմիր գրքում: Անտառի և գյուղտնտեսության վնասատուների դեմ պայքարի թունաքիմիկատային միջոցներ կիրառելիս անհրաժեշտ է համաձայնեցնել դրանք մասնագետների հետ, որպեսզի բացառվի այդ միջավայրերում ապրող ոչ թիրախային և պահպանվող կենդանատեսակներին վնաս հասցնելու հնարավորությունը: Հարակից համայնքների բնակչության համար և մասնավորապես դպրոցականների համար, անհրաժեշտ է կազմակերպել տեղի կենդանական աշխարհի և վտանգված կենդանատեսակների մասին իրեզեկմանն ուղղված միջոցառումներ: Անհրաժեշտ է իրականացնել ՀՀ Կարմիր գրքում գրանցված և կարևոր տնտեսական ու

գեղագիտական նշանակություն ունեցող թռչնատեսակների և նրանց կենսամիջավայրերի մշտադիտարկումներ, ինչպես տեղի, այնպես էլ հրավիրված մասնագետների օգնությամբ:

Կաթնասուններ՝ նկարագրություն. Հայաստանում գրանցված կաթնասունների մոտ 100 տեսակից Գյումրիի անտառտնտեսության և հարակից տարածքներում կարելի է հանդիպել 40 տեսակ: Այստեղի կաթնասունները ներկայացված են սաղարթավոր անտառներին, արհեստական տնկարկներին, դաշտապաշտպան անտառաշերտերին, լեռնատափաստաններին, մարգագետնատափաստաններին կենսամիջավայրերին, ինչպես նաև ժայռերին և քարացրոններին բնորոշ տեսակներով: Տարածաշրջանի կաթնասունները պատկանում են հետևյալ կարգերին՝ միջատակերներ (5 տեսակ), ձեռնաթևավորներ (4 տեսակ), կրծողներ (19 տեսակ), նապաստականմաններ (1 տեսակ), գիշատիչներ (9 տեսակ) և զույգամբակավորներ (2 տեսակ):

Անտառտնտեսությունում և հարակից տարածքներում հանդիպող կաթնասուններից 4-ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում (աղյուսակ 29, քարտեզ 17):

Աղյուսակ 29. Գյումրիի անտառտնտեսության տարածքից հայտնի ՀՀ Կարմիր գրքում գրանցված կաթնասունների տեսակները

| Հ/հ | Տեսակի լատիներեն անվանումը | Տեսակի հայերեն անվանումը | Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի |
|-----|-----------------------------------|--------------------------|-------------------------------|
| 1 | <i>Microtus schidlovskii</i> | Շիդլովսկու դաշտամուկ | EN |
| 2 | <i>Spermophilus xanthoprymnus</i> | Փոքրասիական գետնասկյուռ | EN |
| 3 | <i>Vormela peregusna</i> | Խայտաքիս | VU |
| 4 | <i>Ursus arctos</i> | Գորշ արջ | VU |


Անտառտնտեսության անտառաձածկ տարածքների համար բնորոշ են նաև փոքր և Վոլնուխինի գորշատամ սրընչակները, թփուտային դաշտամուկը, փոքր անտառամուկը, դեղնափոր տափաստանամուկը, սրականջ գիշերաչղջիկը և գորշ ականջեղ չղջիկը: Լեռնատափաստանները և մշակվող դաշտերը զբաղեցնում են տարածաշրջանի զգալի մասը, և այս միջավայրերի հետ է կապված կաթնասունների, մասնավորապես՝ կրծողների բազմազանությունը: Այստեղ հանդիպում են անդրկովկասյան կուրամկնիկը, Բրանդտի համստերը, Շիդլովսկու դաշտամուկը, փոքրասիական ճագարամուկը, փոքրասիական գետնասկյուռը, Ներինգի կուրամուկը, սպիտակափոր ոզնին, փոքր սպիտակատամը, սպիտակափոր սպիտակատամը և խայտաքիսը: Մարգագետնատափաստաններում և այստեղ առկա ժայռային ելքերում ու քարացրոններում հանդիպում են դաղստանյան և ձյան դաշտամկները: Ախուրյան գետի հովտում և դրա հետ կապված ջրային տարածքներում հանդիպում են եվրոպական ջրային դաշտամուկը, մշկառնետը և ջրասամույրը: Անտառտնտեսության տարածքում և ամբողջ տարածաշրջանում լայն տարածված են բեղավոր գիշերաչղջիկը, գորշ գայլը,

սովորական աղվեսը, քարակզաքիսը, գորշուկը, աքիսը: Հազվադեպ են հանդիպում գորշ արջը, վայրի խոզը և այծյամը:

Հիմնական վտանգները. ապօրինի անտառահատումները և անտառապատ տարածքների մասնատումը հիմնական վտանգն են ներկայացնում անտառտնտեսության անտառային տեսակների համար: Անտառտնտեսությանը հարակից դաշտերի մշակումը թունաքիմիկատներով վտանգ է ներկայացնում բոլոր խոցելի լեռնատափաստանային ֆաունայի ներկայացուցիչների համար, մասնավորապես փոքրասիական համստերի, Շիդլովսկու դաշտամկան, փոքրասիական գետնասկյուռի, Ներինգի կուրամկան և կրծողներով սնվող խայտաքիսի համար: Արոտավայրերի կառավարման բացակայությունը և դրանց ապօրինի, բայց կանոնավոր այրումը հովիվների կողմից մեծ վտանգ է ներկայացնում վայրի կենդանիների և անտառտնտեսության համար:

Պահպանությունը. առանձին վտանգված տեսակների պահպանությանն ուղղված առաջարկությունները ներկայացված են ՀՀ Կարմիր գրքում: Անտառի և գյուղտնտեսության վնասատուների դեմ պայքարի թունաքիմիկատային միջոցներ կիրառելիս անհրաժեշտ է համաձայնեցնել դրանք մասնագետների հետ, որպեսզի բացառվի այդ տարածքներում բնակվող ոչ թիրախային և պահպանվող կենդանատեսակներին վնաս հասցնելու հնարավորությունը: Հարակից համայնքների բնակչության համար, և մասնավորապես դպրոցականների համար, անհրաժեշտ է կազմակերպել տեղի կենդանական աշխարհի և վտանգված կենդանատեսակների մասին իրեզեկմանն ուղղված միջոցառումներ: Անհրաժեշտ է իրականացնել ՀՀ Կարմիր գրքում գրանցված և կարևոր տնտեսական ու գեղագիտական նշանակություն ունեցող կաթնասունների և նրանց կենսամիջավայրերի մշտադիտարկումներ ինչպես տեղաբնակ, այնպես էլ հրավիրված մասնագետների օգնությամբ:

Քարտեզ 17. Անտառտնտեսության տարածքում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակները



5.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ և կենսաբազմազանության կարևոր տարածքներ

Բնության հատուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ)՝ բնապահպանական, գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք ներկայացնող տարածքներ են, որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ: ԲՀՊՏ-րը բնական միջավայրի, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության, կենսոլորտի բնական վիճակի հավասարակշռության պահպանության արդյունավետ միջոցներից են: Բնության հատուկ պահպանվող տարածքներն ըստ նշանակության դասակարգվում են՝ միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների, իսկ ըստ կատեգորիայի՝ պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի (<https://www.arlis.am/documentview.aspx?docID=29624>):

ՀՀ տարածքում 2022թ. դրությամբ առկա են 3 պետական արգելոցներ, 4 ազգային պարկեր, 27 պետական արգելավայրեր: ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008 թվականի N 967-Ն որոշմամբ հաստատվել է բնության հուշարձանների ցանկը, որում ներառված են 233 բնության հուշարձաններ՝ որոնցից հաստատված են 32-ի անձնագրերը:


ՀՀ Շիրակի մարզում ՀՀ կառավարության 16.04.2009թ. N405-Ն որոշմամբ հիմնադրվեց «Արփի լիճ» ազգային պարկը 21039,3հա ընդհանուր տարածքով, իսկ համաձայն բնության հուշարձանների հաստատված ցանկի՝ Շիրակի մարզում առկա են 16 բնության հուշարձաններ, որոնցից 2-ը՝ երկրաբանական, 8-ը՝ ջրաերկրաբանական, 4-ը՝ ջրագրական, 2-ը՝ կենսաբանական (աղյուսակ 30, քարտեզ 18):

Աղյուսակ 30. ՀՀ Շիրակի մարզի բնության հուշարձանների ցանկը

| Հ/հ | Անվանումը | Տեղադիրքը | Դասակարգում |
|-----|---------------------------|---|---------------------------|
| 1 | «Ամասիայի» քարանձավ | Ամասիա գյուղից 1.5 կմ արլ., Ախուրյան գետի կիրճի աջ ափին, նրա հունից 80 մ բարձրության վրա, ծ.մ-ից 2000 մ բարձրության վրա | Երկրաբանական հուշարձան |
| 2 | «Կրիա» քարե բնական քանդակ | Երևան-Գյումրի խճուղու ձախ կողմում, Լանջիկ և Մարալիկ բնակավայրերի միջև | Երկրաբանական հուշարձան |
| 3 | «Ամասիայի աղբյուր N 1» | Ամասիա գյուղից 1.5 կմ հվ-արմ., Ախուրյան գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1735 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 4 | «Ամասիայի աղբյուր N 2» | Ամասիա գյուղից 1.5 կմ հվ-արմ., Ախուրյան գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1750 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 5 | «Ամասիայի աղբյուր N 3» | Ամասիա գյուղից 1.8 կմ հվ-արմ., | Ջրաերկրաբանական |

| Հ/հ | Անվանումը | Տեղադիրքը | Դասակարգում |
|-----|---------------------------------|---|---------------------------|
| | | Ախուրյան գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1745 մ բարձրության վրա | հուշարձան |
| 6 | «Գոմերի տակի աղբյուր» | Աշոցք գյուղի հվ-արլ. ծայրամասում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 7 | «Ձորաղբյուր» | Բավրա գյուղից 5 կմ հս-արլ, ծ.մ-ից 2430 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 8 | «Ջուլգաղբյուր» աղբյուր | Ջուլգաղբյուր գյուղից 200 մ արմ, Աշոցք գետակի աջ ափին, ծ.մ-ից 2015 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 9 | «Լուսաղբյուր» աղբյուր | Հարթաշեն գյուղից 1.2 կմ արլ., Գյումրի-Տաշիր ավտոճանապարհից 150 մ ձախ, ծ.մ-ից 2030 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 10 | «Անանուն» աղբյուր | Հարթաշեն գյուղի դարոցից 1.8 կմ հս-արլ, ծ.մ-ից 2180 մ բարձրության վրա | Ջրաերկրաբանական հուշարձան |
| 11 | «Անանուն» լիճ | Արթիկի ենթաշրջան, Ախուրյանի ջրավազանում, ծ.մ-ից 3200 մ բարձրության վրա | Ջրագրական հուշարձան |
| 12 | «Արքայական» լիճ | Մանթաշ գետի վերին հոսանքում, ծ.մ-ից 3050 մ բարձրության վրա | Ջրագրական հուշարձան |
| 13 | «Ամասիայի» ջրվեժ | Ախուրյան գետի աջակողմյան վտակի վրա, համանուն գյուղից արլ. | Ջրագրական հուշարձան |
| 14 | «Մանթաշի» ջրվեժներ | Մեծ Մանթաշ գյուղից 16 կմ հվ-արմ, համանուն գետի աջ վտակի վրա | Ջրագրական հուշարձան |
| 15 | «Դողդոջուն կաղամախու ծառուտներ» | Ամասիա գյուղից 3 կմ արմ., ծ.մ-ից 2300 մ բարձրության վրա | Կենսաբանական հուշարձան |
| 16 | «Փետրախոտային տափաստան» | Ամասիա գյուղից 3 կմ հս-արմ. | Կենսաբանական հուշարձան |

Քարտեզ 18. Շիրակի մարզի ԲՀՊՏ-ը




Համաձայն 2-րդ անտառչինական խորհրդակցության արձանագրության՝ բնության հուշարձանների ցանկում ընդգրկված «Դողդոջուն կաղամախու ծառուտներ» կենսաբանական հուշարձանը գնահատվել, քարտեզագրվել և ընդգրկվել է անտառտնտեսության կազմում (նկար 6, քարտեզ 19):

Նկար 6.




ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն անհրաժեշտ է կազմել բնության հուշարձանի անձնագիր, որը հնարավորություն կտա իրականացնել պահպանության համապատասխան ռեժիմ:

Քարտեզ 19. «Դողդոջուն կաղամախու ծառուտներ» կենսաբանական հուշարձանը



Բացի բնության հատուկ պահպանվող տարածքներից բնապահպանական տարբեր կոնվենցիաներից բխող համաշխարհային մակարդակով առանձնացվել են կենսաբազմազանության առանցքային տարածքներ (KBA - Key Biodiversity Areas), կարևոր բուսաբանական տարածքներ (IPA - Important Plant Areas), կարևոր թռչնաբանական տարածքներ (IBA - Important Bird Areas), Էմերալդ ցանցի տարածքներ (Emerald Network of Areas of Special Conservation Interest) և այլն: Հայաստանում ևս առանձնացվել են այդ տարածքները, որոնք ընդգրկում են նաև տարածքներ Շիրակի մարզից՝ այդ թվում Գյումրիի անտառտնտեսության հողերից (քարտեզ 20):

Քարտեզ 20. Շիրակի մարզի կենսաբազմազանության տեսանկյունից կարևոր տարածքները



Բաժին 6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱՆՏԱՌՆԵՐ

Բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների հայեցակարգը առաջարկվել է Անտառի հոգաբարձուների խորհրդի կողմից 1999 թվականին: Ներկայումս այս հասկացությունն ունի ավելի լայն օգտագործման շրջանակներ՝ կիրառվելով տարածքների գործառնական գոտիավորման կամ բնության պահպանության գերակա օբյեկտների ընտրության համար: Համաձայն այդ հայեցակարգի ԲԲԱԱ-ների խմբին դասվում են այն անտառները, որոնք անհրաժեշտ են մարդկանց գոյության, ինչպես նաև Երկիր մոլորակի կենսոլորտի պահպանության համար: ԲԲԱԱ-ի առանցքային դերը կապված է դրանց բարձր էկոլոգիական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանությունն ապահովող արժեքների հետ:

ԲԲԱԱ հայեցակարգի հիմքում դրված է այն գաղափարը, որ հատուկ կամ առանցքային արժեքի առկայության դեպքում անտառի բարվոք վիճակն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ գործողություններ՝ անտառօգտագործման ընթացքում նման արժեքները պահպանելու համար:

Ներկայումս հիմնականում օգտագործվում է անգլիական ProForest կազմակերպության կողմից առաջարկված ԲԲԱԱ-ի դասակարգումը (2004), որի համաձայն ԲԲԱԱ-ը բաժանվել են 6 տիպերի՝ որոնց որոշումը, առանձնացումը և արդյունավետ կառավարումը սերտորեն կապված է տվյալ երկրի առանձնահատկությունների հետ՝ անտառային զանգվածների վիճակի, կենսաբազմազանության հարստության և դրա պահպանության համար տարվող քաղաքականության, անտառների կառավարման կառույցների, անձնակազմի պատրաստակամության և այլն:

Գյումրիի անտառտնտեսության տարածքում բնապահպանական բարձրարժեք անտառները առանձնացվել են ըստ Ազգային ուղեցույցում (2016թ.) բերված մեթոդաբանության:

6.1. ԲԲԱԱ 1 Անտառային տարածքներ, որտեղ ներկայացված է միջազգային, տարածաշրջանային կամ ազգային նշանակություն ունեցող կենսաբազմազանություն

Ենթատիպ ԲԲԱԱ 1.1 ԲՀՊՏ-ներ

Ելնելով երկրի առանձնահատկություններից, ԲՀՊՏ-ի կատեգորիայից, դրանում առկա անտառների և կենսաբազմազանության վիճակից, որպես ԲԲԱԱ 1.1 կարող է սահմանվել պահպանվող տարածքն ամբողջությամբ կամ դրա անտառային զանգվածի որոշակի մասը: Գյումրիի անտառտնտեսության կազմում որպես ԲԲԱԱ 1.1 ենթատիպ առանձնացվել է «Դողդոջուն կաղամախու ծառուտներ» կենսաբանական հուշարձանը, որը զբաղեցնում է 45,0 հա տարածք:

Ենթատիպ ԲԲԱԱ 1.2 Հազվագյուտ և անհետացող տեսակների կուտակման վայրեր

Հաշվի առնելով Հայաստանին բնորոշ պայմանները և երկրի հարուստ կենսաբազմազանությունը, ենթատիպ ԲԲԱԱ 1.2-ի առանձնացման դեպքում Հայաստանի Կարմիր գրքում CR և EN կարգավիճակ ունեցող տեսակների համար սահմանվում է հետևյալ նվազագույն շեմը՝ տվյալ անտառային տարածքում հանդիպող ընդհանուր առմամբ 5 բույսերի/կենդանիների տեսակներ կամ 3 գերակա տեսակներ: Այս ենթատիպը անտառտնտեսությունում զբաղեցնում է 181,0 հա տարածք:

Ենթատիպ ԲԲԱԱ 1.3 Էնդեմիկ տեսակների կուտակման վայրեր

Ինչ վերաբերում է կոնկրետ հազվագյուտ, գերակա տեսակների պոպուլյացիաների կամ կուտակումների պահպանության համար անհրաժեշտ նվազագույն տարածքի սահմանման հարցին, ապա անհրաժեշտ է կիրառել անհատական մոտեցում: Հաշվի առնելով հետազոտվող վայրի արտաքին էկոլոգիական պայմանները և տեսակների բնութագրական տվյալները՝ այս տարածքի չափերը կարող են տատանվել 10 հա-ից մինչև ողջ անտառային էկոհամակարգի սահմանները: Այս առումով թեև Գյումրիի անտառտնտեսության տարածքում առկա են 3 էնդեմիկ բուսատեսակներ, սակայն դրանց զբաղեցրած տարածքները մեծ չեն, հետևապես որպես առանձին ենթատիպ չեն առանձնացվել: Այնուամենայնիվ դրանք ներառվել են ԲԲԱԱ ենթատիպ 1.2-ում:

Ենթատիպ ԲԲԱԱ 1.4 կենդանիների առանցքային սեզոնային ապրելավայրեր

Այս ենթատիպի առանձնացման դեպքում հաշվի է առնվում կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիներն ու միջանցքները, ինչպես նաև սեզոնային կուտակումների տարածքները (օրինակ՝ ձմեռային կերահայթաթման կամ ամառային բազմացման տարածքներ): Ենթատիպը անտառտնտեսության տարածքում գնահատվել է շուրջ 351 հա:

6.2. ԲԲԱԱ 2. Միջազգային, փարածաշրջանային կամ ազգային նշանակություն ունեցող խոշոր անտառային լանդշաֆտներ

Խոշոր անտառային լանդշաֆտներ, որտեղ գոյություն ունեն բնականում հանդիպող տեսակների կենսունակ պոպուլյացիաները՝ իրենց բնորոշ տարածվածությամբ և առատությամբ: ԲԲԱԱ 2-ը Գյումրիի անտառտնտեսության տարածքում բացակայում է:

6.3. ԲԲԱԱ 3. Անտառային փարածքներ, որոնք ներառում են հազվագյուտ կամ անհետացման վտանգի տակ գտնվող էկոհամակարգեր

ԲԲԱԱ 3 տիպին են պատկանում գլոբալ, տարածաշրջանային կամ ազգային նշանակության հազվագյուտ և կամ յուրօրինակ անտառային էկոհամակարգեր,

որոնք արագ կրճատվում են արտահայտված մասնատվածության և մարդածին ազդեցության պայմաններում: Նման անտառների էկոհամակարգերը կամ լայն տարածում ունեին անցյալում, բայց գրեթե ամբողջությամբ ոչնչացվել են մարդու գործունեության ընթացքում, կամ բնական պատճառներով միշտ հազվագյուտ են եղել՝ սահմանափակող էկոլոգիական պայմանների պատճառով: Այս տիպը ևս Գյումրիի անտառտնտեսության տարածքում բացակայում է:

6.4. ԲԲԱԱ 4. Անտառային տարածքներ, որոնք իրականացնում են պաշտպանական հատուկ գործառույթներ

Անտառային տարածքների կողմից տրամադրվող էկոհամակարգային ծառայությունների շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն անտառների ջրապաշտպան և հակաէրոզիոն գործառույթները, որոնք էական նշանակություն ունեն տարբեր էկոհամակարգերի հավասարակշռության պահպանման և մարդկանց կենսամակարդակի ու բարեկեցության ապահովման համար: ԲԲԱԱ 4 տիպի առանձնացումը և կառավարման բարելավումն ուղղված է այդպիսի անտառների խոցելիության նվազեցմանը և դրանց էկոհամակարգային ծառայություններին սպառնացող ռիսկերի կանխարգելմանը: այս տիպը ներառում է 3 ենթատիպեր:

Ենթատիպ ԲԲԱԱ 4.1 Ջրապաշտպան հատուկ նշանակություն ունեցող անտառներ.

ԲԲԱԱ 4.1 ենթատիպը սահմանված է ջրային օբյեկտների՝ գետեր, լճեր, լճակներ, ջրա-ճահճային տարածքներ, բնական ջրային գոյացումներ, առափնյա անտառների համար, որոնց պահպանությունը կարող է կանխարգելել անտառտնտեսական գործողությունների բացասական ազդեցությունը բնական հունների կայունության, ջրի որակի ու քանակի, ջրային էկոհամակարգերի բարվոք վիճակի վրա, ինչպես նաև պահպանել ավամերձ տարածքների տեսակային բազմազանությունը: Նման անտառներն ապահովում են մաքուր ջրի շարունակական մատակարարում՝ կենցաղային, արդյունաբերական ու գյուղատնտեսական նպատակներով աճող ջրապահանջարկի պայմաններում:

Ըստ ազգային ուղեցույցի, ԲԲԱԱ 4.1 ենթատիպի չափանիշներին համապատասխանող անտառների համար սահմանվում են հետևյալ շեմերը՝

- 5կմ-ից ավելի երկարությամբ գետերի և գետակների երկայնքով ձգվող 200մ լայնությամբ անտառաշերտերը,
- 3-5կմ երկարությամբ գետերի և գետակների երկայնքով ձգվող 100մ լայնությամբ անտառաշերտերը,
- բնակավայրի խմելու ջրի գոյացման հիմնական աղբյուրի շուրջ 300մ շառավիղով անտառաշերտերը,
- ջրամբարների շուրջ 200 մ շառավիղով անտառաշերտերը,

- աղբյուրների շուրջ 100 մ շառավիղով անտառաշերտերը:

Հաշվի առնելով այս շեմերը, առանձնացվել են ԲԲԱԱ 4.1 ենթատիպի տարածքները, որոնք զբաղեցնում են 304,9 հա):

Ենթատիպ ԲԲԱԱ 4.2 Հակաէրոզիոն հատուկ նշանակություն ունեցող անտառներ.

Ազգային ուղեցույցում ԲԲԱԱ 4.2 ենթատիպի համար սահմանվել են հետևյալ չափանիշները և շեմերը՝

- 30°-ից ավել թեքության լանջերում տեղաբաշխված անտառներ,
- Բնակավայրերի շրջակա սելավավտանգ լանջերին աճող 200մ լայնությամբ անտառաշերտեր, 0.6 և ավելի լրիվությամբ և 10հա նվազագույն մակերեսով:

Հաշվի առնելով այս շեմերը, առանձնացվել են ԲԲԱԱ 4.2 ենթատիպի տարածքները, որոնք զբաղեցնում են 287,0 հա:

Ենթատիպ ԲԲԱԱ 4.3 Հակահրդեհային հատուկ նշանակություն ունեցող անտառներ.

Այս ենթատիպի անտառները Գյումրիի անտառտնտեսությունում բացակայում են:

6.5. ԲԲԱԱ 5 Անտառային տարածքներ, որոնք անհրաժեշտ են տեղական բնակչության կենսապահովման համար

ԲԲԱԱ 5 տիպը ներառում է տեղաբնակների համար մեծ կարևորություն ունեցող անտառային տեղամասեր, որոնք ծառայում են որպես սննդի, ջրի, վառելիքի, դեղամիջոցների, խոտհնձի և գոյության այլ կենսապահանջներն ապահովող անփոխարինելի տարածքներ: Անտառների կողմից տրամադրվող այդ բարիքները համարվում են բնակչության համար անփոխարինելի, եթե չկան դրանք ձեռք բերելու այլընտրանքային տարբերակները կամ դրանք հասանելի չեն գոնե տարվա որոշակի ժամանակահատվածում:

Ըստ Ազգային ուղեցույցի, անտառային տարածքը կարող է ստանալ ԲԲԱԱ 5 տիպի կարգավիճակ, եթե այն համապատասխանում է հետևյալ չափանիշներից որևէ մեկին՝


- անտառը հարակից է համայնքին, որը գազաֆիկացված չէ կամ գազաֆիկացված է, սակայն բնակչության մեծ մասն անվճարունակ է,
- անտառը հարակից է համայնքին, որը մագիստրալային ճանապահներով կապված չէ խոշոր բնակավայրերի հետ, իսկ տարվա որոշ սեզոններին բնական անբարենպաստ պայմանների պատճառով ժամանակավորապես լրիվ մեկուսացված և կտրված է այլ վայրերից,
- անտառը հարակից է համայնքին, որի բնակչների նվազագույն զամբյուղի առնվազն 40%-ն ապահովվում է անտառային ռեսուրսների օգտագործման հաշվին:

ԲԲԱԱ 5-ը Գյումրիի անտառտնտեսության տարածքում առկա չէ:

6.6 ԲԲԱԱ 6. անտառային տարածքներ, որոնք անհրաժեշտ են տեղական բնակչության մշակութային ավանդույթների պահպանման համար

Այս տիպի առանձնացվում է, որպեսզի պահպանվի տեղական համայնքների ավանդական մշակույթը այն տարածաշրջաններում, որտեղ անտառը հանդիսանում է անհրաժեշտ միջավայր բնակչության յուրօրինակության դրսևորման համար: Դրանցից են կրոնական, հնագիտական, ավանդական հանգստի և տոնակատարությունների համար նշանակություն ունեցող տեղամասերը, սրբավայր հանդիսացող աղբյուրները, գերեզմանատները և այլն: Հաշվի առնելով այս չափանիշները Գյումրիի անտառտնտեսությունում առանձնացվել են ԲԲԱԱ 6 տիպի անտառները, որոնք զբաղեցնում են 8,6 հա: Հարկ է նշել, որ հնարավոր են ԲԲԱԱ տարբեր տիպերի և ենթատիպերի տարածքների համընկնումներ: Համաձայն վերը նշվածի Գյումրիի անտառտնտեսության ընդհանուր տարածքի շուրջ 23,6%-ը (1068,1հա) գնահատվել են որպես բնապահպանական բարձրարժեք անտառներ (քարտեզ 21):

Քարտեզ 21. Անտառտնտեսության բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառները



**Բաժին 7. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

Անտառային էկոհամակարգերի զարգացման բնականոն հաշվեկշիռն ապահովելու նպատակով՝ հաշվի առնելով անտառկազմող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկությունները, ներկա անտառշինությունը իրականացվել է հիմք ընդունելով հատման հասակների հետևյալ դասակարգումն՝ ըստ 2005թ. ընդունված անտառային օրենսգրքի (աղյուսակ 31):

Աղյուսակ 31. Անտառի պաշտպանական կատեգորիաները և ըստ գերակշռող ծառատեսակների հատման տարիքները

| Ծառատեսակի անվանումը | Հասակային դասի տևողությունը | Անտառի կատեգորիան ըստ նշանակության | | |
|---|-----------------------------|------------------------------------|-------------|--------|
| | | Արտադրական | Պաշտպանական | Հատուկ |
| 1. Սոճի | 20 | 121 | 141 | 161 |
| 2. Կաղնի սերմնային | 20 | 161 | 181 | 201 |
| 3. Հաճարենի | 20 | 141 | 161 | 181 |
| 4. Հացենի, թեղի, թխկի | 20 | 121 | 141 | 161 |
| 5. Ընկուզենի հունական | 20 | 141 | 161 | 181 |
| 6. Կաղնի շիվային | 10 | 61 | 71 | 81 |
| 7. Բոխի սերմնային | 20 | 81 | 101 | 121 |
| 8. Լորենի | 10 | 91 | 101 | 111 |
| 9. Կեչի | 10 | 61 | 71 | 81 |
| 10. Կաղամախի, ուռենի, բարդի | 10 | 41 | 51 | 71 |
| 11. Բոխի շիվային և այլ ցածրարուն տեսակներ | 10 | 61 | 71 | 81 |
| 12. Ղաժի | 10 | 41 | 51 | 61 |
| 13. Արջատխլենի | 20 | 141 | 161 | 181 |
| 14. Կենի | 40 | 241 | 281 | 321 |
| 15. Տանձենի, խնձորենի | 20 | 101 | 121 | 141 |

7.1. Անդրառշահագործման և փայտամշակման բնութագիրը

Անտառտնտեսությունում հատուկ անտառպատրաստման արտադրություն և անտառհումքային բազաներ չկան:

Բնափայտի պատրաստումը կատարվում է՝

- հատման նշանակված կանգուն ծառերի հատում բենզաստղոցով,
- շինափայտի, վերամշակման ենթակա փայտի և վառելափայտի առանձնացում և կուտակում անտառում,
- անտառից տեղափոխում մեքենայի բարձման հարթակ տրակտորով կամ հատուկ տեխնիկայով,
- բարձումը և բեռնաթափումը կատարվում է ձեռքով:

Անտառտնտեսությունում անտառանյութի մթերումը հիմնականում կատարվում է պայմանագրային և ինքնապատրաստման եղանակով՝ գնորդների կողմից:

7.2. Բնափայտային անտառօգտագործում

Նախորդ ժամանակաշրջանում անտառտնտեսությունում բնափայտը հիմնականում մթերվել է անտառի այլ հատումներից, որոնք իրականացվել են 2018 և 2021 թվականներին՝ «ԲԷՑ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում՝ էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտու ծառերի հատումների տեսքով: 2018թ. 1,0 հեկտար տարածքի վրա հատվել է 246 ծառ (սոճենի, թեղի, բարդի, հացենի, տանձենի, բալենի) ընդհանուր 33,51խմ պաշարով, որից ստացվել է 2,91խմ շինափայտ, իսկ 2021թ. 0,2 հեկտար տարածքի վրա հատվել է 68 սոճի՝ ընդհանուր 31,7խմ պաշարով, որից ստացվել է 5,93խմ-ն շինափայտ: Ընդամենը նախորդ ժամանակաշրջանի համար ստացվում է 65,21խմ այլ հատումներ, որից շինափայտ՝ 8,84խմ:

7.2.1. Անտառվերականգնման հատումներ

Համաձայն անտառվերականգնման հատումների իրականացման կարգի, անտառվերականգնման հատումներ նշանակվում են բացառապես արտադրական նշանակության հասուն և գերհասուն անտառներում, որի նպատակն է անտառային պաշարների կայուն և արդյունավետ օգտագործման, անտառի ջրապահպան, ջրակարգավորիչ և պաշտպանական հատկանիշների ամրապնդման, անտառվերականգնման, տնտեսապես արժեքավոր ծառատեսակների վերարտադրության, անտառի արտադրողականության բարձրացման, բնական միջավայրի բարելավման ու պահպանման բարելավումը, ինչպես նաև հասուն և գերհասուն տարիքի ծառերի փոխարինումը երիտասարդ, բարձրարժեք ծառատեսակներով:

Գյումրի անտառտնտեսությունում առկա չեն արտադրական անտառներ, այդ իսկ պատճառով անտառվերականգնման հատումներ չեն նախատեսվել:

7.2.2. Խնամքի հատումներ

Համաձայն անտառկառավարման պլանների մշակման հրահանգի՝ խնամքի հատումները նշանակվում են այն բոլոր ծառուտների համար, որտեղ, անտառագիտական հասկացողությամբ, խնամք է պահանջվում, ընդ որում խնամքի հատումները չեն նախատեսվում անտառվերականգնման հատումից մեկ հասակային դաս առաջ:

Ծառուտի տարիքից, լրիվությունից և ընդհանուր վիճակից կախված՝ նախագծվել են խնամքի հատումներ՝ հատման կրկնման հետևյալ հաճախականությամբ.

1. նոսրացման – հատման կրկնման հաճախականությունը 10 տարի,
2. անցումային – հատման կրկնման հաճախականությունը 10 տարի:

2023-32 թվականների համար անտառտնտեսությունում խնամքի հատումներ նախատեսվել են ընդհանուր 341,1հա անտառային հատվածներում, ընդհանուր պաշարը 70060խտխմ, հատումներ նախատեսած ընդհանուր պաշարը 17493խտխմ, ընդ որում ամենից շատ խնամքի հատումներ նախատեսվել է Աշոցքի անտառպետությունում՝ ընդհանուր մակերեսի 44,8%-ը և հատման նախատեսված պաշարի 54,2%-ը (աղյուսակ 30):

Նոսրացման հատումներ նախատեսվել են ընդհանուր 50,2 հեկտարի վրա, հատվածների ընդհանուր պաշարը 3020խտխմ, հատման նախատեսած պաշարը 709խտխմ, նույն թվում իրացման ենթակա պաշարը՝ 593խտխմ, որից շինափայտը՝ 112խմ, վառելափայտը՝ 481խտխմ: Հատման ծավալում հիմնականում կաղնի և թխկի տեսակներ են:

Անցումային հատումներ նախատեսվել են ընդհանուր 290,9 հեկտարի վրա, հատվածների ընդհանուր պաշարը 67040խտխմ, հատման նախատեսած պաշարը 16784խտխմ, նույն թվում իրացման ենթակա պաշարը՝ 14283խտխմ, որից շինափայտը՝ 4253խմ, վառելափայտը՝ 10030խտխմ: Հատման ծավալում հիմնականում սոճի և կաղամախի տեսակներ են (աղյուսակ 32, աղյուսակ 33):

Խնամքի հատման ծավալում ներառված է նաև տվյալ հատվածներում առկա ցցաչոր և արդեն իսկ նկատելի հիվանդ ծառերը: Ուսումնասիրության արդյունքներով խնամքի հատումներ նախատեսվող հատվածներից դուրս առանձին ծառերի կամ ոչ մեծ խմբերի տեսքով հաշվարկվել է նաև մոտ 1300խտխմ ցցաչոր և քամատապալ ու ձնակոտոր հիմնականում սոճու ծառեր:

Աղյուսակ 32. Ամփոփագիր խնամքի հատումների հաշվարկային ծավալների ըստ հատման եղանակների և անտառպետությունների

| Հ/հ | Անտառպետության անվանումը | Խնամքի հատման եղանակը | Խնամքի հատման նախատեսված մակերեսը, հա | Հատվածների ընդհանուր պաշարը, խմ | Հատման համար նախատեսվող պաշարը, խմ | Նույն թվում իրացվող պաշարը, խմ | որից | |
|-----|--------------------------|-----------------------|---------------------------------------|---------------------------------|------------------------------------|--------------------------------|-------------|-------------|
| | | | | | | | շինափայտ | վառելափայտ |
| 1 | Գյումրիի | Նոսրացման հատումներ | 0,9 | 180 | 40 | 34 | 8 | 26 |
| | | Անցումային հատումներ | 31,7 | 7390 | 1832 | 1537 | 421 | 1116 |
| | | Ընդամենը | 32,6 | 7570 | 1872 | 1571 | 429 | 1142 |
| 2 | Աշոցքի | Նոսրացման հատումներ | 0,7 | 100 | 15 | 12 | 3 | 9 |
| | | Անցումային հատումներ | 152,2 | 36320 | 9470 | 8055 | 2457 | 5598 |
| | | Ընդամենը | 152,9 | 36420 | 9485 | 8067 | 2460 | 5607 |

| Հ/հ | Անտառապետության անվանումը | Խնամքի հատման եղանակը | Խնամքի հատման նախատեսված մակերեսը, հա | Հատվածների ընդհանուր պաշարը, խմ | Հատման համար նախատեսվող պաշարը, խմ | Նույն թվում իրացվող պաշարը, խմ | որից | |
|-----|---------------------------|-----------------------|---------------------------------------|---------------------------------|------------------------------------|--------------------------------|-------------|--------------|
| | | | | | | | շինափայտ | վառելափայտ |
| 3 | Ջաջուռի | Նոսրացման հատումներ | 47,8 | 2700 | 646 | 540 | 100 | 440 |
| | | Անցումային հատումներ | 71,5 | 14640 | 3570 | 3050 | 814 | 2236 |
| | | Ընդամենը | 119,3 | 17340 | 4216 | 3590 | 914 | 2676 |
| 4 | Արթիկի | Նոսրացման հատումներ | 0,8 | 40 | 8 | 7 | 1 | 6 |
| | | Անցումային հատումներ | 35,5 | 8690 | 1912 | 1641 | 561 | 1080 |
| | | Ընդամենը | 36,3 | 8730 | 1920 | 1648 | 562 | 1086 |
| 5 | Ընդամենը | Նոսրացման հատումներ | 50,2 | 3020 | 709 | 593 | 112 | 481 |
| | | Անցումային հատումներ | 290,9 | 67040 | 16784 | 14283 | 4253 | 10030 |
| | | Ամբողջը | 341,1 | 70060 | 17493 | 14876 | 4365 | 10511 |

Աղյուսակ 33. Անփոփազիր խնամքի հատումների հաշվարկային ծավալների ըստ հատման եղանակների և հատվածների

| 3 | Զաջուտի | Սոճի | 2 | 27 | 0,3 | 10Ս | Հվ-ալ 10 | 1955 | 2 | 0,4 | 45 | | |
| | | | 3 | 28 | 1,2 | 10Ս | Հվ-10 | 1920 | 2 | 0,5 | 50 | | |
| | | | 5 | 31 | 1,0 | 10Ս | Հվ-ալ 10 | 1925 | 2 | 0,6 | 45 | | |
| | | | 6 | 8 | 4,0 | 10Ս | Հս-ամ 20 | 1930 | 3 | 0,6 | 45 | | |
| | | | 11 | 29 | 3,8 | 10ս+թ+հց | Ամ-25 | 1990 | 3 | 0,6 | 65 | | |
| | | | 15 | 25 | 1,6 | 8ս2թխ+խճ+կչ | Ամ-20 | 2130 | 3 | 0,6 | 45 | | |
| | | Ընդամենը | | | 11,9 | | | | | | | | |
| | | Թխկի, հացենի | 13 | 13 | 10,6 | 5թխ3հց2թղ | Հս-ամ 20 | 1940 | 2 | 0,6 | 35 | | |
| | | | 13 | 17 | 0,8 | 10 հց+թխ+թղ+տճ | Հս-20 | 1945 | 1 | 0,7 | 35 | | |
| | | | 13 | 19 | 0,7 | 10հց+թխ+թղ | Հս-ալ 15 | 1955 | 1 | 0,6 | 35 | | |
| | | | 13 | 30 | 2,2 | 5թխ5հց+թղ | Հս-ամ 25 | 2020 | 3 | 0,6 | 35 | | |
| | | | 14 | 1 | 0,9 | 7հց2թղ1խճ | Ամ-20 | 1850 | 1 | 0,6 | 45 | | |
| | | | 14 | 30 | 1,5 | 5հց2թխ2խճ1տճ | Ամ-25 | 1990 | 3 | 0,6 | 35 | | |
| | | | 15 | 10 | 0,8 | 6հց2թխ2թղ | Ամ-25 | 2080 | 3 | 0,4 | 35 | | |
| | | | 16 | 7 | 1,0 | 8թխ2հց | Ամ-20 | 2070 | 3 | 0,6 | 35 | | |
| | | 16 | 13 | 0,5 | 8հց1թխ1տճ | Հս-ամ 30 | 1940 | 3 | 0,6 | 35 | | | |
| Ընդամենը | | | 19,0 | | | | | | | | | | |
| Ընդամենը անտառապետությունում | | | | | 30,9 | | | | | | | | |
| 4 | Լրբիկի | Սոճի | 2 | 63 | 0,4 | 4ս6թխ | Հս-10 | 2060 | 3 | 0,5 | 45 | | |

| Հ/հ | Անտառապետության անվանումը | Գլխավոր ծառատեսակը | Քառուկուսի | Հատված | Մակերեսը, հա | Ծառուտի կազմը | Լանջի կողմնադիրությունը և թեքությունը | ԾՄԲ | Բոնիտեղը | Լրիվությունը | Տարիքը |
|-----|------------------------------|---------------------------------------|------------|--------|--------------|-------------------|---|------|----------|--------------|--------|
| | | | 3 | 8 | 1,3 | 4ս6թխ+հգ+թղ | Հս-10 | 1955 | 3 | 0,7 | 45 |
| | | | 3 | 48 | 2,0 | 10ս+թխ+հս | Հս-15 | 2060 | 2 | 0,7 | 55 |
| | | | 3 | 52 | 6,3 | 9ս1թխ+թղ+հգ | Հս-ամ 15 | 2100 | 2 | 0,6 | 50 |
| | | | 4 | 6 | 0,9 | 7ս3թխ+հգ | Ամ-5 | 2005 | 4 | 0,6 | 45 |
| | | | 4 | 13 | 3,4 | 10ս+թխ+հգ | Հս-ամ 5 | 2060 | 2 | 0,6 | 55 |
| | | | 4 | 19 | 1,0 | 10Ս | Հս-5 | 2065 | 2 | 0,6 | 65 |
| | | | 4 | 34 | 3,5 | 7ս3թխ+հգ | Հս-ամ 10 | 2095 | 2 | 0,6 | 60 |
| | | | 5 | 45 | 1,9 | 10ս+թխ+հգ | Հս-ալ 5 | 2090 | 3 | 0,5 | 55 |
| | | | 6 | 1 | 0,7 | 10ս+թխ+հգ | Հս-ամ 5 | 2060 | 2 | 0,5 | 55 |
| | | | 6 | 5 | 1,6 | 8ս2լ | Հս-ամ 5 | 2065 | 2 | 0,6 | 60 |
| | | | 6 | 24 | 0,6 | 10ս+հգ | Հս-ամ 5 | 2090 | 2 | 0,5 | 65 |
| | | Ընդամենը | | | 23,6 | | | | | | |
| | | Թխկի, հացենի | 1 | 22 | 0,5 | 6թխ3հգ1թղ+ս | Հս- 5 | 1945 | 4 | 0,6 | 35 |
| | | | 1 | 32 | 0,5 | 10թխ+հգ+ս | Հս-ամ 5 | 1965 | 4 | 0,7 | 35 |
| | | | 2 | 34 | 0,6 | 8հգ2խձ | Հս-ամ 5 | 2010 | 4 | 0,5 | 35 |
| | | | 2 | 44 | 0,9 | 6հգ4թխ | Հս-ամ 5 | 2020 | 4 | 0,5 | 35 |
| | | | 2 | 45 | 0,6 | 6հգ4թխ+թղ | Հս-ամ 5 | 2015 | 4 | 0,5 | 35 |
| | | | 2 | 52 | 0,7 | 5հգ5թխ+թղ | Հս-5 | 2025 | 4 | 0,6 | 35 |
| | | | 2 | 60 | 2,7 | 6թխ4հգ+թղ+ս | Հս-ամ 10 | 2050 | 4 | 0,6 | 35 |
| | | | 3 | 20 | 1,2 | 7թխ1հգ1խձ1տձ | Հս-ամ 10 | 2000 | 4 | 0,6 | 35 |
| | | | 3 | 30 | 4,8 | 10թխ+թղ, առ ծառ Ս | Հս-ամ 10 | 2035 | 3 | 0,7 | 35 |
| | | | 3 | 41 | 0,7 | 10թխ+հգ | Հս-ամ 15 | 2045 | 3 | 0,6 | 35 |
| | | | 5 | 20 | 1,4 | 10թխ+հգ, առ ծառ Ս | Հս-ամ 5 | 2060 | 4 | 0,6 | 35 |
| | | Ընդամենը | | | 14,6 | | | | | | |
| | | Խնձորենի, տանձենի | 1 | 23 | 0,6 | 8խձ2սլ | Հս-ամ 5 | 1945 | 4 | 0,3 | 35 |
| | | | 2 | 6 | 0,7 | 6տձ4խձ | Հս-ամ 5 | 1950 | 4 | 0,6 | 35 |
| | | | 2 | 14 | 0,9 | 5տձ4խձ1հգ | Հս-ամ 10 | 1970 | 4 | 0,5 | 35 |
| | | | 2 | 23 | 6,5 | 7խձ3տձ | Հս-ամ 5 | 2000 | 4 | 0,7 | 35 |
| | | | 2 | 25 | 0,6 | 7խձ3տձ | Հս-ամ 5 | 1985 | 4 | 0,7 | 35 |
| | | | 2 | 47 | 0,6 | 6խձ4տձ | Հս-ամ 10 | 2010 | 4 | 0,5 | 35 |
| | | | 2 | 48 | 0,7 | 5խձ5տձ+նշ | Հս-ամ 10 | 2015 | 4 | 0,5 | 35 |
| | | Ընդամենը | | | 10,6 | | | | | | |
| | | Ընդամենը անտառապետությունում | | | 48,8 | | | | | | |
| | | Ընդամենը անտառոտնտեսությունում | | | 127,6 | | | | | | |
| | | Ըստ տեսակների | | | | | | | | | |
| | | Սոճի | | | 81,4 | | | | | | |
| | | Թխկի, հացենի | | | 35,6 | | | | | | |
| | | Խնձորենի, տանձենի | | | 10,6 | | | | | | |

9.5 Նախատեսվող միջոցառումների արդյունքում անտառային տարածքների արդյունավետության բարձրացում

Ստուգիչ ժամանակաշրջանում անտառային հողերի արտադրողականության բարձրացման նպատակով անտառաշինությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները:

- Անտառներմնային բազաների հիմնում սելեկցիոն հիմքի վրա,
- Անտառային մշակույթների հիմնում,
- Ցածր լրիվության ծառուտների արտադրողականության բարձրացում,
- Անտառավերականգնման համալիր միջոցառումներ,
- Խնամքի հատումների իրականացում,
- Անտառպահպանական և անտառպաշտպանական աշխատանքների բարելավում,
- Ընտրովի սանիտարական հատումներ:

Սելեկցիոն հիմքի վրա անտառներմնային բազաների հիմնումը նախատեսվում է բարձր ցանքսային հատկություններով և արժեքավոր ժառանգական հատկանիշներով օժտված սերմերի ստացման համար:

Բարձրարժեք և բարձր արտադրողական անտառային տեսակներով հիմնման միջոցով ընդլայնվում է անտառածածկ մակերեսը, վերականգնվում են հատված և քայքայված անտառները, ծառուտները ձևավորվում են ցանկալի ուղղությամբ, նպաստվում է կենսաբազմազանության հաստատմանը:

Խնամքի հատումները օժանդակում են ծառուտների նպատակային ձևավորմանը, մասնավորապես տեսակային կազմի բարելավմանը, որակական և տարածքային տեղաբաշխմանը, անտառի հողապաշտպան, ջրապաշտպան, սանիտարա-հիգիենիկ, էսթետիկական հատկությունների բարելավմանը և անտառների արդյունավետության բարձրացմանը: Ընտրողական սանիտարական հատումները հնարավորություն են ընձեռում բարելավելու անտառի սանիտարական վիճակը, պահպանելու անտառածածկ մակերեսը ստուգիչ շրջանում, բարելավելու տեսակային կազմը և ստանալու ծառուտների լրացուցիչ աճ:

Համաձայն կառավարման պլանի նախագծի, նախատեսվում է 2023-32թթ. շրջանում միջոցառումներ իրականացնել հետևյալ ծավալներով (աղյուսակ 50):

Աղյուսակ 50. 2023-32թթ. ընթացքում նախատեսված միջոցառումներ

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Մակերեսը, հա |
|----------|--|---------------|
| 1 | Անտառային մշակույթների հիմնում ոչ անտառածածկ տարածքներում | 280,9 |
| 1.1 | Բացատներում և պարապուտ տարածքներում | 185,3 |
| 1.2 | Նոսրուտներում խրամատների և փոսերի միջոցով | 95,6 |
| 2 | Անտառավերականգնման միջոցառումներ | 62,0 |
| 2.1 | Նոսրուտներում հարթակներով | 56,0 |
| 2 .2 | Ցածր լրիվության ծառուտներում | 6,0 |
| 3 | Չմիակցված սաղարթով անտառմշակույթներում լրացում | 22,2 |
| 4 | Ցանկապատման միջոցով 36000 գծմ | 800,0 |
| | Ընդամենը | 1165,1 |

2023-32թթ. ժամանակաշրջանի անտառային մշակույթների արտադրողականության որոշման համար մշակույթները պայմանականորեն հավասարեցված են ծառուտների I հասակային դասին, ընդ որում ասեղնատերևավոր ծառատեսակների միջին աճը հաշվարկված է II հասակային դասի ծառուտների միջին աճի 40%-ի չափով, իսկ տերևավոր ծառատեսակներինը՝ II հասակային աճի 60%-ի չափով:

Անտառի գույքագրման և գնահատման արդյունքներով I հասակային դասի 1հա-ի միջին աճը ասեղնատերևավոր ծառատեսակների համար 1,51մ³ է, իսկ տերևավոր տեսակների մոտ 0,83մ³ (աղյուսակ 51):

Աղյուսակ 51. 2023-32թթ. ժամանակաշրջանում հիմնման նախատեսված անտառմշակույթների աճի ցուցանիշները

| Հ/հ | Միջոցառման անվանումը | Չափի միավորը | Մակերեսը, հա | 1հա-ի լրացուցիչ միջին աճը, մ ³ | Սպասվելիք լրացուցիչ աճը նախագծվող տարածքում, մ ³ |
|-----------------|---|--------------|--------------|---|---|
| 1 | 2023-32թթ. հիմնման նախատեսված մշակույթներ | հա | 280,9 | | |
| 1.1 | Ասեղնատերևավոր | հա | 175,2 | 1,51 | 264,55 |
| 1.2 | Լայնատերևավոր | հա | 105,7 | 0,83 | 87,73 |
| Ընդամենը | | | | | 352,28 |

Զմիակցված սաղարթով անտառմշակույթներում լրացման արդյունքում լրացուցիչ աճը կկազմի $22,2 \times 0,83 = 18,43$ մ³:

Անտառվերականգնման միջոցառումների արդյունքում լրացուցիչ աճը կկազմի $1106,0 \times 0,2$ (մ³) հա (պայմանականորեն) = 221,2 մ³: Այսպիսով, նախատեսվող միջոցառումների արդյունքում սպասվելիք լրացուցիչ տարեկան աճը կկազմի 591,91 մ³:

Կառավարման պլանի նախագծում նախատեսվող համալիր միջոցառումների արդյունքում, անտառտնտեսության անտառային հողերում տեղի կունենա անտառածածկ տարածքի տեսակարար կշռի ավելացում և ծառուտի կազմի բարելավում:

Անտառածածկ մակերեսի ավելացումը նախատեսվում է անտառային բացատներում, պարապուտ տարածքներում և նոսրուտներում անտառմշակույթների հիմնման, չմիակցված սաղարթով անտառմշակույթներում լրացման, ինչպես նաև անտառվերականգնման միջոցառումների հաշվին: Ինչպես երևում է աղյուսակ 53-ից ստուգիչ ժամանակաշրջանում (2032թ.) 2023թ. համեմատությամբ կանխատեսվում է անտառածածկ մակերեսի ավելացում 148,7 հա, որից 138,7 հա-ը անտառմշակույթների տեսքով, իսկ 10 հա-ը հիմնականում սոճու և կաղամախու բնական վերականգնմամբ: Հաշվարկը կատարվել է ընդունելով, որ անտառվերականգնման ծավալներն իրականացվելու են 10 տարվա հավասար

բաշխվածությամբ, որի դեպքում առաջին երեք տարիներին բացատներում, պարապուտ տարածքներում և նոսրուտներում հիմնված անտառմշակույթներն ու անտառվերականգնման միջոցառումների տարածքները, ինչպես նաև չմիակցված անտառմշակույթները՝ բավարար խնամքի և պահպանության պայմաններում կփոխադրվեն անտառաձածկ մակերես: Ոչ անտառաձածկ մակերեսի նվազումը 2032թ. 346,9 հա-ով բացատրվում է բացատներում, պարապուտ տարածքներում և նոսրուտներում անտառապատման, նոսրուտներում անտառվերականգնման միջոցառումներով, ինչպես նաև վերը նշված բնական վերականգնմամբ:

Նախատեսվող միջոցառումների արդյունքում էական փոփոխություն է ակնկալվում նաև ծառուտների տեսակային կազմում: Հիմնական անտառկազմող ծառատեսակների որակական կազմը զգալիորեն փոխվելու է ի հաշիվ ոչ անտառաձածկ տարածքների և ցածր արտադրողականության ու լրիվության (0,3) ծառուտների անտառապատման և անտառվերականգնման միջոցառումների: Սոճու գերակշռությամբ ծառուտների մակերեսների ավելացումը 2023թ. համեմատությամբ 2032թ. 58,7հա բացատրվում է անտառային բացատներում և նոսրուտներում սոճու բուսակների այլ տեսակների հետ խառը անտառմշակույթների հիմնման միջոցառումների իրականացմամբ, ինչպես նաև առանձին փոքր տարածքներում բնական վերականգնմամբ: Կաղնու գերակշռությամբ ծառուտների 2023 թվականի համեմատությամբ 2032թ. ավելացումը ընդամենը 3,0 հեկտարով բացատրվում է անտառվերականգնման միջոցառմամբ՝ նոսրուտներում և ցածր լրիվության ծառուտներում հարթակներում կաղնի սերմերի ցանքսի իրականացմամբ: Հացենի, թխկի, կեչի և թեղի գերակշռությամբ ծառուտների մակերեսների ավելացումները հիմնականում բացատրվում է անտառային բացատներում և պարապուտներում սոճու հետ որպես ուղեկցող տեսակներ նշված ծառատեսակների հիմնմամբ: Ոչ անտառաձածկ տարածքներում, համապատասխան տնկիների տնկմամբ, կանխատեսվում է անտառային տանձենու և խնձորենու ծառուտների մակերեսների ավելացումը 2032թ. ընդհանուր 26հա:

Աղյուսակ 52. Տեղեկագիր անտառտնտեսության հողատեսքերում նախատեսվող փոփոխությունների

| Հ/հ | Հողատեսքի անվանումը | Չափի միավորը, հա | 01.01.2023թ. | 01.01.2032թ. | Փոփոխությունը, 01.01.2023թ. համեմատությամբ |
|--------|-------------------------------------|------------------|--------------|--------------|--|
| 1 | Անտառային հողեր, ընդամենը | հա | 2948,6 | 2948,6 | 2948,6 |
| 1.1. | Անտառաձածկ, ընդամենը | հա | 1038,1 | 1186,8 | +148,7 |
| 1.1.1. | Բնական ծագման անտառներ | հա | 153,0 | 163,0 | +10,0 |
| 1.1.2. | Անտառմշակույթներ | հա | 885,1 | 1023,8 | +138,7 |
| 1.2. | Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ | հա | 37,6 | 235,8 | -37,6 +235,8 |

| Հ/հ | Հողատեսքի անվանումը | Չափմիավորը, հա | 01.01.2023թ. | 01.01.2032թ. | Փոփոխությունը: 01.01.2023թ. համեմատությամբ |
|--------|--------------------------------------|----------------|--------------|--------------|--|
| 1.3. | Ոչ անտառածածկ, ընդամենը | հա | 1872,9 | 1526,0 | -346,9 |
| 1.3.1. | Նոսրուտներ | հա | 338,0 | 181,4 | -156,6 |
| 1.3.2. | Բացատ և պարապուտ | հա | 1534,9 | 1344,6 | -190,3 |
| 2. | Ոչ անտառային հողեր, ընդամենը | հա | 1572,4 | 1572,4 | 1572,4 |
| 3. | Անտառոտնտեսության ընդհանուր մակերեսը | հա | 4521,0 | 4521,0 | 4521,0 |

Աղյուսակ 53. Անտառածածկ մակերեսի տեսակային կազմի փոփոխությունն ըստ գերակշռող ծառատեսակների

| Հ/հ | Գերակշռող ծառատեսակը | Չափման միավորը | 2023թ. փաստացի | Կանխատեսվում է | |
|----------------|----------------------|----------------|----------------|----------------|-------------------------------|
| | | | | 2032թ. | Փոփոխությունը 2023թ. նկատմամբ |
| 1 | Սոճի | հա | 684,0 | 742,7 | +58,7 |
| 2 | Կաղնի | հա | 6,7 | 9,7 | +3,0 |
| 3 | Հացենի | հա | 43,4 | 66,4 | +23,0 |
| 4 | Թխկի | հա | 104,9 | 127,9 | +23,0 |
| 5 | Կեչի | հա | - | 3,0 | +3,0 |
| 6 | Ակացիա ս | հա | 1,4 | 1,4 | - |
| 7 | Թեղի | | 5,3 | 15,3 | +10,0 |
| 8 | Բարդի | հա | 2,2 | 2,2 | - |
| 9 | Կաղամախի | հա | 144,5 | 146,5 | +2,0 |
| 10 | Տանձենի | հա | 10,2 | 23,2 | +13,0 |
| 11 | Խնձորենի | հա | 17,9 | 30,9 | +13,0 |
| 12 | Ակացիա դ | հա | 17,6 | 17,6 | - |
| Ամբողջը | | հա | 1038,1 | 1186,8 | +148,7 |

Բաժին 10. ԱՆՏԱՌԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

10.1. Անտառապահպանության խնդիրներն ու պահաբաժինների առանձնացումը

Պահպանության հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել անտառային և այլ էկոհամակարգերի ու պաշարների չհամակարգված օգտագործումը, նվազեցնել հրդեհների ռիսկերը, ինչպես նաև անտառվերականգնման միջոցառումներով վերականգնել դեգրադացված անտառային տարածքները: Պահպանության գործողություններում ներառվում են՝

Պահպանության գործողություններում ներառվում են՝

- դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնում, ինչն անհրաժեշտ է վտանգված տեսակների վիճակի բարելավման, ինչպես նաև անտառային հատվածների միասնականության և ամբողջականության ապահովման (ֆրագմենտացիայի նվազեցման) համար,

- բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների (ԲԲԱԱ) առանձնացում և համապատասխան կառավարում: ԲԲԱԱ-ների կառավարման գործողությունները պետք է ուղղված լինեն հայտնաբերված արժեքների պահպանմանը և վերականգնմանը,

- ինքնակամ հատումների ծավալների կրճատման նպատակով համալիր ծրագրի մշակում և իրականացում,

- համայնքների կողմից օգտագործվող արոտավայրերի և խոտհարքերի կայուն կառավարման սխեմաների մշակում՝ բացառելով անտառվերականգնման ենթակա անտառներում անասունների մուտքը, իսկ խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներն են) կատարվող գործողությունները չպետք է բացասաբար անդրադառնան սերմնային ինքնավերականգնման վրա, իսկ համեմատաբար բարձր թեքությունների վրա գտնվող արոտավայրերի օգտագործումը չհանգեցնի էրոզիոն պրոցեսների ակտիվացմանը: Բնակավայրերին մոտ գտնվող վերականգնման ենթակա տարածքների ցանկապատում՝ ընտանի կենդանիների մուտքն արգելելու նպատակով:

Վերջին 4 տարիներին անտառի գարնանային և աշնանային ստուգումների ժամանակ հայտնաբերվել է ինքնակամ հատված ծառեր. 2018թ. սոճենու 6յուղեր 0,25մ³, 2019թ. սոճենու չորացած ծառեր 4 հատ 0,35մ³ ընդհանուր պաշարով, 2020թ. խախտումներ չեն արձանագրվել, իսկ 2021թ. հայտնաբերվել է ապօրինի հատված 377 սոճի և 1 թեղի՝ ընդհանուր 28մ³ պաշարով: 2018, 2020 և 2021թթ. գրանցվել են հրդեհներ 8,8հա տարածքի վրա, որոնք ժամանակին մարվել են և բնապահպանական վնաս չեն պատճառել:

Անտառների պահպանության ուժեղացման, բնականոն պահպանման, վիճակի բարելավման և կայուն կառավարման իրականացման նպատակով անտառտնտեսության տարածքը բաժանվել է 23 պահաբաժինների (աղյուսակ 54, քարտեզ 26):

Ամենամեծ պահաբաժնի մակերեսը 522հա է Ջաջուռի անտառպետություն, 2-րդ պահաբաժին), ամենափոքրինը՝ 5հա (Գյումրիի անտառպետություն, 3-րդ պահաբաժին), պահաբաժինների միջին մակերեսը՝ 63հա: Պահաբաժինների սահմաններն ու մակերեսները սահմանվել է հաշվի առնելով բնական պայմանները, բնակավայրերից հեռավորությունը և պատշաճ հսկողության իրականացման հնարավորությունները: Հսկողության տեսանկյունից առավել խոցելի՝ բանուկ ճանապարհներին նախատեսվում է տեղադրել մշտական և շարժական ուղեփակոցներ:

Աղյուսակ 54. Գյումրիի անտառտնտեսության պահաբաժինները

| Հ/հ | Անտառպետության անվանումը | Պահաբաժնի համարը | Պահաբաժնում ներառված քառակուսիների համարները | Պահաբաժնի ընդհանուր մակերեսը, հա |
|-----------------|--------------------------|------------------|--|----------------------------------|
| 1 | Գյումրիի | 1 | 6;7 | 108 |
| | | 2 | 8 | 61 |
| | | 3 | 9 | 5 |
| | | 4 | 10;11;12;13;14;15 | 329 |
| | | 5 | 16;17;18 | 194 |
| | | 6 | 1;2;3;4;5 | 345 |
| | | Ընդամենը | | |
| 2 | Աշոցքի | 1 | 1;5;7;8;9;10 | 250 |
| | | 2 | 2 | 49 |
| | | 3 | 3;4 | 94 |
| | | 4 | 6 | 94 |
| | | 5 | 11 | 129 |
| | | 6 | 12;13;14;15;16 | 258 |
| | | 7 | 17;18;19;20;21;22 | 195 |
| Ընդամենը | | | 1069 | |
| 3 | Ջաջուռի | 1 | 1;2;3;4;5;6 | 318 |
| | | 2 | 7;8;9;10;11 | 522 |
| | | 3 | 13;14;15;16 | 253 |
| | | 4 | 12;17;18;19;20 | 275 |
| Ընդամենը | | | 1368 | |
| 4 | Արթիկի | 1 | 1;2 | 164 |
| | | 2 | 3 | 134 |
| | | 3 | 4;5 | 147 |
| | | 4 | 6;7 | 168 |
| | | 5 | 10;11;12 | 264 |
| | | 6 | 8;9 | 165 |
| Ընդամենը | | | 1042 | |

10.2 Ճանապարհային ցանց

Շիրակի մարզը, որտեղ տեղաբաշխված են Գյումրիի անտառտնտեսության անտառները, հանրապետության գլխավոր կոմունիկացիոն ուղիներին միացված է Երևան-Գյումրի-Վրաստանի սահման Մ-1 (M1) և Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի Հանրապետության սահման Մ-7 (M7) միջպետական, ինչպես նաև Գյումրի-Կապս-Ամասիա Հ-32 (H32), Վարդաղբյուր-Տաշիր Հ-31 (H31) և Հոռոմ-Արթիկ-Ալազյազ Հ-21 (H21) հանրապետական և մի շարք տեղական նշանակության ավտոճանապարհներով:

Անտառտնտեսական ճանապարհները բնութագրող հիմնական տարրերն են.

- Օգտագործման գոտի - հողաշերտի այն հատվածը, որի վրա կառուցված է ճանապարհը: Հողային շերտի լայնությունը կախված է ճանապարհի կարգից.

1-ին կարգ - 6,5մ և ավելի

2-րդ կարգ - 4,5-6,4 մ

3-րդ կարգ - 4,4մ և պակաս:

- Անցումային գոտի, որտեղով կատարվում է երթևեկությունը,

1-ին կարգ - 5,5մ և ավելի լայնություն

2-րդ կարգ - 3,5-5,4մ լայնություն

3-րդ կարգ - անցումային մասի լայնությունը հաշվի չի առնվում:

- Ջրատար առվակներ (կյուվետներ) - ջրահեռացման խողովակներ կառուցվում և տեղադրվում են ճանապարհի երկու կողմից և լայնությամբ մակերեսային և գրունտային ջրերի հեռացման համար, որոնց բացակայությունը ճանապարհների վատթարացման հիմնական պատճառն է:

- Հողային պաստառ – կողային առուների միջև ընկած հողաշերտն է, որի վրա կառուցվում է ճանապարհի երթևեկելի մասը: Խճով, բետոնով, ասֆալտ-բետոնով կամ որևէ այլ ամուր շինությունով կառուցվածներն ամուր պատվածքով ճանապարհներ են: Շատ հաճախ անտառմիջյան ճանապարհները լինում են բնահողային:

Անտառտնտեսությունում անտառային ճանապարհները ծառայում են ինչպես անտառտնտեսական, այնպես էլ հակահրդեհային նպատակների համար և դժվար է դրանք տարանջատել:

Ճանապարհները հիմնականում փափուկ (բնահողային) գրունտով են, սեզոնային օգտագործման, թեև մի մասում պարբերաբար կատարվում է մասնակի վերանորոգում ամբողջ տարի օգտագործման նպատակով, սակայն ջրհեռացման կյուվետների, խողովակների և խճածածկի բացակայության հետևանքով ճանապարհների վիճակն անմխիթար է:

Անտառտնտեսության տարածքները հիմնականում կտրտված են, որոնք իրար են կապվում 508կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհային ցանցով, նույն թվում՝ միջպետական նշանակության 90կմ, հանրապետական նշանակության 49կմ, տեղական նշանակության 124կմ և գրունտային շուրջ 245կմ, որոնք ունեն ինչպես


անտառտնտեսական այնպես էլ հակահրդեհային նշանակություն (աղյուսակ 55, քարտեզ 27):

Անտառկառավարման 10 տարիների համար նախատեսվում է անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում և կառուցում ընդհանուր մինչև 25կմ:

Աղյուսակ 55. Անտառտնտեսության տարածքներն իրար կապող պտղանապարհները

| Հ/հ | Ավտոճանապարհի տեսակը | Ավտոճանապարհի երկարությունը, կմ |
|----------|---|---------------------------------|
| 1 | Միջպետական նշանակության | 90 |
| 2 | Հանրապետական նշանակության | 49 |
| 3 | Տեղական նշանակության | 124 |
| 4 | Անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության | 245 |
| 5 | Ընդամենը անտառտնտեսությունում | 508 |

Քարտեզ 27. Անտառտնտեսության և հարակից տարածքների ճանապարհները



10.3. Պահպանություն անտառային հրդեհներից

Անտառային հրդեհները լինում են գետնատարած, երբ այրվում է թափուկը, խաշամը, մամռային և խոտային ծածկույթը, շատ հաճախ նաև ենթանտառը, մատղաշը, իսկ սովորաբար ծառերը քիչ են վնասվում:

Շատ վտանգավոր է սաղարթային հրդեհը, երբ խաշամի, թափուկի հետ միասին այրվում է ծառերի սաղարթը, որի դեպքում այն ընթանում է թռիչքաձև:

Ելնելով եղանակային պայմաններից տարբերակվում են.

- արտակարգ հրդեհավտանգ - երբ դիտվում է երկարատև տաք, չոր եղանակ և օդի միջին ջերմաստիճանը 20°-ից բարձր է, իսկ հարաբերական խոնավությունը 40%-ից ցածր,

- ուժեղ հրդեհավտանգ - այն վայրերը, որտեղ երկար ժամանակ դիտվում է չոր եղանակ, երբեմն թույլ տեղումներով, իսկ հարաբերական խոնավությունը 40-60% է,

- թույլ հրդեհավտանգ - երբ հաճախակի անձրևներ են տեղում և անտառային թաղիքը խոնավ է,

- ոչ հրդեհավտանգ, երբ երկարատև անձրևներ են և հարաբերական խոնավությունը 80%-ից բարձր:

Անտառների հրդեհավտանգությունը բնորոշվում է անտառի տիպով, ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններով:

Անտառի գույքագրման ընթացքում յուրաքանչյուր քառակուսու համար որոշվել է հրդեհավտանգության դասն ըստ հատվածների, տվյալները մշակել են համակարգչային ծրագրով և քարտեզագրվել (աղյուսակ 56, քարտեզ 28):

Անտառտնտեսության տարածքում հրդեհավտանգության միջին դասը 2,8 է՝ Գյումրիի անտառապետությունում 2,7, Աշոցքի անտառապետությունում՝ 2,4, Ջաջուռի և Արթիկի անտառապետություններում՝ 3,1:

Անտառտնտեսությունում 1-ին՝ արտակարգ բարձր հրդեհավտանգության դասի տարածքները կազմում են ամբողջ տարածքի 16,0%-ը (721,6հա), 2-րդ՝ բարձր հրդեհավտանգության դասը 32,6% (1476,2հա), 3-րդ՝ միջին հրդեհավտանգության դասը՝ 9,9% (449,2հա), 4-րդ ցածր և 5-րդ ոչ հրդեհավտանգ դասերը համապատասխանաբար 32,2% (1454,9հա) և 9,3% (419,1հա):

Անտառտնտեսությունում և հարակից տարածքներում վերջին 4 տարիների ընթացքում հրդեհներ գրանցվել են 2018թ. 7,5 հա, 2020թ.՝ 0,5 հա և 2021թ. 0,8 հա տարածքների վրա, որոնք ժամանակին մարվել են և բնապահպանական վնաս չի գրանցվել:

Աղյուսակ 56. Տեղեկագիր անտառային հողերի տեղաբաշխման ըստ հրդեհավտանգության դասերի

| Անտառապետություն | Հրդեհավտանգության դասը, հա | | | | | Ընդամենը | Միջին դասը |
|------------------|----------------------------|-------|-------|-------|-------|----------|------------|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | | |
| Գյումրի | 77,8 | 411,5 | 222,5 | 265,9 | 64,3 | 1042 | 2,66 |
| Աշոցք | 301,4 | 311,0 | 186,8 | 127,2 | 142,6 | 1069 | 2,45 |
| Ջաջուռ | 185,4 | 479,0 | 35,3 | 464,2 | 204,1 | 1368 | 2,56 |


| Անտառապետություն | Հրդեհավտանգության դասը, հա | | | | | Ընդամենը | Միջին դասը |
|------------------|----------------------------|---------------|--------------|---------------|--------------|-------------|-------------|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | | |
| Արթիկ | 157,0 | 274,7 | 4,6 | 597,6 | 8,1 | 1042 | 2,43 |
| Ընդամենը | 721,6 | 1476,2 | 449,2 | 1454,9 | 419,1 | 4521 | 2,53 |
| % | 16,0 | 32,6 | 9,9 | 32,2 | 9,3 | 100 | - |

Անտառտնտեսության կառավարման պլանի տասնամյա գործողությունների պլանում նախատեսվել են նախագգուշացնող ցուցատախտակների տեղադրում, հանգստի և ծխելու տեղերի առանձնացում, ջրավազանների կառուցում, կրակմարիչների ձեռք բերում, հակահրդեհային ճանապարհների և ճեղքվածքների վերանորոգում և կառուցում, հանդիպումներ հարակից համայնքներում՝ հակահրդեհային իրազեկության բարձրացման և հակահրդեհային միջոցառումների իրականացման թեմաներով և այլն: Անհրաժեշտ է զարգացնել անտառային հրդեհներին արագ արձագանքման կարողությունները:

Աղյուսակ 57. Տեղեկագիր հակահրդեհային միջոցառումների

| Հ/հ | Միջոցառումներ | Չափի միավորը | Նախատեսվում է |
|------------|--|--------------|---------------|
| 1 | Նախագգուշական միջոցառումներ | | |
| 1.1 | Խորհրդակցություններ և իրազեկումներ համայնքներում, դպրոցներում | հանդիպում | 15 |
| 1.2 | Մշտական ցուցատախտակներ | հատ | 10 |
| 1.3 | Հանգստի և ծխելու տեղերի առանձնացում | հատ | 15 |
| 2 | Հակահրդեհային կառուցումներ | | |
| 2.1 | Հակահրդեհային ճեղքվածքների վերանորոգում և կառուցում | կմ | 8 |
| 2.2 | Հանքայնացված շերտերի կառուցում | կմ | 3 |
| 2.3 | Ջրավազանների կառուցում | հատ | 4 |
| 2.4 | Հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում/կառուցում | կմ | 25 |
| 3 | Հակահրդեհային սարքավորումների ձեռքբերում | | |
| 3.1 | Ամենագնաց ավտոմեքենա | հատ | 1 |
| 3.2 | Կվադրոցիկլ | հատ | 4 |
| 3.3 | Կրակմարիչներ | հատ | 25 |
| 3.4 | Օժանդակ սարքավորումներ | լրակազմ | 8 |
| 4 | Կրակմարող կամավոր խմբերի կազմավորում | խումբ | 4 |

Քարտեզ 28. Անտառտնտեսության տարածքն ըստ հրդեհավտանգության դասերի



Բաժին 11. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Անտառտնտեսության կառավարման նպատակն է ապահովել համապատասխան մարդկային ռեսուրսներ և ստեղծել տեխնիկական հզորություններ կառավարման համար, ինչպես նաև հայթայթել ֆինանսավորման նոր աղբյուրներ՝ անտառտնտեսության կանոնադրական նպատակների իրականացման համար լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

«Գյումրիի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրենի ենթակայությամբ առաջարկվում է ստեղծել մոնիթորինգի և գիտության միավոր (1 աշխատակից) և էկոլոգոսաշրջության միավոր (1 աշխատակից): Նրանք պետք է անցնեն հատուկ մասնագիտական վերապատրաստում և իրականացնեն անտառտնտեսության համապատասխան գործառույթները:

Տնօրենի ենթակայությամբ հասարակայնության հետ կապերի պատասխանատուն պետք է համակարգի անտառտնտեսության իրազեկության և էկոլոգիայի աշխատանքները:

Տնօրենի ենթակայությամբ միջոցների համալրման պատասխանատուն պետք է իրականացնի ֆինանսավորման նոր աղբյուրների հայթայթման գործառույթը:

Անտառտնտեսության տնօրենը և հիմնական գործառույթներն իրականացնող պատասխանատուները պետք է սերտորեն համագործակցեն Անտառային կոմիտեի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համապատասխան բաժինների հետ և ստանան անհրաժեշտ աջակցությունը:

Անտառտնտեսության գործառույթների կազմակերպման և պատշաճ իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան մարդկային և տեխնիկական հզորություններ: Մասնավորապես անհրաժեշտ է անձնակազմի կարճաժամկետ և երկարաժամկետ վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում՝ անտառների և կենսաբազմազանության պահպանության և մոնիթորինգի, անտառի պաշտպանության, էկոլոգոսաշրջության զարգացման, ֆինանսական միջոցների համալրման և այլ ուղղություններով:

11.1. Անտառի և կենսաբազմազանության պահպանություն

Անտառների և կենսաբազմազանության պահպանությունն ուղղված է լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովմանը, լեռնային անտառային էկոհամակարգերի և դրանց բնորոշ հազվագյուտ և արժեքավոր բույսերի ու կենդանիների պահպանությանն ու վերարտադրությանը:

11.2. Մոնիթորինգ և գիտական ուսումնասիրություններ

Անտառտնտեսության տարածքում մոնիթորինգը և գիտական ուսումնասիրությունները կիրականացնի «Գյումրիի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրենի ենթակայությամբ ստեղծված մոնիթորինգի և գիտության

միավորը՝ Անտառային կոմիտեի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համապատասխան պատասխանատուների հետ համատեղ: Այն պետք է սերտորեն համագործակցի գիտական և ուսումնական հաստատությունների (ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, համալսարաններ) և ՀԿ-ների հետ: Անհրաժեշտ է գտնել և ներգրավել այն հաստատությունները և հետազոտողներին, որոնք հետաքրքրված են հատկապես անտառտնտեսության տարածքում որոշակի տեսակների, էկոհամակարգերի վերաբերյալ թիրախային ուսումնասիրություններ իրականացնելու հարցում: Մոնիթորինգի դաշտային աշխատանքների իրականացմանն անհրաժեշտ է ներգրավել կամավորների՝ ՀԿ-ներ, դպրոցներ, համալսարանների ուսանողներ և այլն:

Անտառտնտեսության անձնակազմը պետք է աջակցի գիտնականներին, հետազոտողներին, կամավորներին՝ մոնիթորինգի և գիտական ուսումնասիրությունների դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում:

11.2.1 Մոնիթորինգի ծրագիր

Կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգի ներդրման հիմնական նպակակն է կանխատեսել բնական և մարդածին ազդեցությունների հետևանքով առաջ եկած գործընթացների զարգացումը և կատարել կանխատեսումներ դրանց հետագա ընթացքի վերաբերյալ: Ստացված մոնիթորինգային տվյալները պետք է օգտագործվեն անտառտնտեսության տարածքում իրականացվող կառավարման գործողություններում համապատասխան փոփոխություններ և շտկումներ կատարելու համար՝ ուղղված էկոհամակարգերի, բնական միջավայրերի և տեսակների պահպանությանը և բնականոն զարգացմանը:

Կենսաբազմազանության մոնիթորինգի խնդիրներն են.

- բացահայտել կենսաբանական բազմազանության տեսակային կազմի, տարածվածության, քանակական ցուցանիշների, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակը և միտումները,

- բացահայտել յուրաքանչյուր էկոհամակարգի և դրա բաղադրիչների վրա մարդածին գործոնների ազդեցությունը,

- գնահատել և կանխատեսել էկոհամակարգերի բաղադրիչների՝ կենսաբազմազանության և բնական ռեսուրսների քանակական և որակական փոփոխությունների ընթացքը:

Անհրաժեշտ է մշակել մոնիթորինգի ծրագիր, որը կներառի ինդիկատոր տեսակների ընտրություն՝ էկոհամակարգերի վիճակի միտումները բացահայտելու համար, մոնիթորինգային արձանագրությունների մշակում, դիտակետերի և փորձահրապարակների որոշում և այլն: Անհրաժեշտ է ներդնել և վարել մոնիթորինգի տվյալների բազա և համակարգչային ծրագիր:

Անտառտնտեսության տարածքում մոնիթորինգի ենթակա հիմնական խոշոր կաթնասուններն են գորշ արջը (*Ursus arctos*), մոխրագույն գայլը (*Canis lupus*),

այծյամը (*Capreolus capreolus*) և վայրի խոզը (*Sus scrofa*): Մոնիթորինգի ենթակա թռչնատեսակներից կներառվեն գիշատիչները և այլ կարևոր տեսակներ:

Ջրոսաշրջության մոնիթորինգը պետք է ներառի անտառտնտեսության տարածքներ զբոսաշրջիկների այցելության արդյունքում բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում և ճիշտ կառավարում, ինչպես նաև մատուցվող ծառայության որակի գնահատում: Մասնավորապես, մոնիթորինգը պետք է անդրադառնա զբոսաշրջության ծրագրի շրջանակներում իրականացվող գործողություններին, որոնք հնարավոր վնաս կարող են հասցնել էկոհամակարգերի ամբողջականությանը: Անհրաժեշտ է ստեղծել զբոսաշրջության տեղեկատվական բազա աշխարհագրական տեղեկատվական համակարգով:

Անհրաժեշտ է ստեղծել մոնիթորինգ իրականացնող անձնակազմի և տեխնիկական հզորությունների շարունակական վերապատրաստում, վերազինում: Անհրաժեշտ է կազմակերպել գործնական դասընթացներ անտառտնտեսության համապատասխան մասնագետների և անտառապահների համար:

11.2.2 Գիտական ուսումնասիրություններ

Գիտական ուսումնասիրությունները նպատակաուղղված են հիմնական գործառույթների՝ կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ու պատմամշակութային և բնության ժառանգության պահպանության արդյունավետ իրականացմանը:

Գիտահետազոտական աշխատանքների արդյունքում ստացված տեղեկատվությունը կիրառվում է բնապահպանական միջոցառումների պլանավորման, այդ թվում էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանության ու վերականգնման, և դրանց արդյունավետության գնահատման համար, պահպանվող համակարգերի և օբյեկտների վիճակի գնահատման և կանխատեսման, մոնիթորինգի իրականացման, էկոլոգիական հարցերի լուսաբանման, տուրիզմի և ռեկրեացիայի, ինչպես նաև իրականացվող տնտեսական գործունեության ազդեցության գնահատման համար:

Գիտական ուսումնասիրություններն անհրաժեշտ է իրականացնել կազմակերպության համապատասխան մասնագետների միջոցով: Նրանք պետք է համագործակցեն գիտնականների և հետազոտողների հետ՝ աջակցելով նրանց ու տրամադրելով տեխնիկական օգնություն դաշտային աշխատանքներում: Գիտական և հետազոտական աշխատանքները պետք է իրականացվեն անտառների կառավարման համար կարևոր ոլորտների բացահայտմամբ և առաջնայնությունների սահմանմամբ՝ համագործակցելով համապատասխան մասնագետների հետ:

Ելնելով վերոհիշյալից, 2023-2031թթ-ի գիտական ուսումնասիրությունների ծրագրում առաջարկվում է ներառել.

- Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների դաշտային ուսումնասիրություններ (գույքագրման իրականացում, թվաքանակի հաշվառման և պոպուլյացիաների գնահատման աշխատանքներ)՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել վտանգված տեսակների հայտնաբերմանը,

- կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծում/վարում և պահպանման ու հարստացման նպատակով արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմում,

- հազվագյուտ և վտանգված տեսակներից կազմված էկոհամակարգերի (ծառուտների) և դրանց ինքնավերականգնման ու ինքնակարգավորման հնարավորությունների բարձրացման ուսումնասիրություններ և դրանց վիճակի բարելավման լրացուցիչ միջոցառումների նախատեսում,

- կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների խոցելիության և հարմարողականության բարձրացման ուսումնասիրություններ և կոնկրետ միջոցառումների նախատեսում,

- ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրություններ և բնական էկոհամակարգերի վրա դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների նախատեսում,

- անտառային էկոհամակարգերի կողմից տրամադրվող էկոհամակարգային ծառայությունների ուսումնասիրություններ, ներառյալ օգտակար բուսատեսակների պաշարների, ածխածնի կուտակման և այլ ուսումնասիրությունները:

Աղյուսակ 58. Պահպանության և մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ միջոցներ

| Հ/հ | Սարքավորում, գույք | Քանակը |
|-----|--|--------|
| 1 | Ամենագնաց մեքենա | 1 |
| 2 | Ձիեր և հավելյալ միջոցներ (2-ական յուրաքանչյուր անտառպետության համար) | 8 |
| 3 | Մշտական ուղեփակոցներ | 4 |
| 4 | Շարժական ուղեփակոցներ | 8 |
| 5 | GNSS ազդանշանի ընդունիչ սարքեր | 5 |
| 6 | Ֆոտո/վիդեո նկարահանման սարք | 2 |
| 7 | Ֆոտոթակարդ | 10 |
| 8 | Անօդաչու թռչող սարք (դրոն) | 1 |
| 9 | Հեռադիտակ | 23 |
| 10 | Գիշերային հսկման հեռադիտակ | 4 |
| 11 | Տեսահսկման համակարգեր՝ տեսախցիկներ | 4 |
| 12 | Ամառային համազգեստ | 30 |
| 13 | Ձմեռային համազգեստ | 30 |
| 14 | Անտառապահների սարքավորումների հավաքածու (բահ, | 23 |

| Հ/հ | Սարքավորում, գույք | Քանակը |
|-----|--|--------|
| | դանակ, լապտեր, ուսապարկ, առաջին օգնության պարագաներ և այլն) | |
| 15 | Գրասենյակային սարքավորումներ (համակարգիչ, տպիչ, սկաներ և այլն) | 2 |

Բաժին 12. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գյումրիի անտառտնտեսությունում 2018 և 2021 թվականներին պաշտոնական հաշվետվությամբ բնափայտային արտադրանքի ընդհանուր ծավալը կազմել է 65,21խտ.խմ, գումարային արտահայտությամբ՝ 684,16 հազար դրամ, նույն թվում հատումներից՝ վառելափայտը 54,3խտ.խմ, 414,43հազար դրամ, շինափայտը 8,84 խտ.խմ, 260,85 հազար դրամ, թափուկը՝ 2,07 խտ.խմ, 8,88 հազար դրամ:

Անտառպաշտպանական և անտառպահպանական աշխատանքների ծավալները կառավարման պլանի պատրաստմանը նախորդող տարում կազմել է 2053,82 հազար դրամ, իսկ անտառմշակության աշխատանքներինը՝ նախորդող 2 տարում՝ 3142,59 հազար դրամ:

Աղյուսակ 59. Գյումրիի անտառտնտեսության հաստիքային ցուցակ առ 01.12.2022թ.

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավորի քանակը | Պաշտոնային դրույքի չափը | Աշխատավարձի ֆոնդը ամսական, դրամ |
|-----|-----------------------------------|---------------------------|-------------------------|---------------------------------|
| 1 | Տնօրեն | 1 | 330,000 | 330,000 |
| 2 | Ավագ անտառապետ | 1 | 210,000 | 210,000 |
| 3 | Տնօրենի տեղակալ պահպանության գծով | 1 | 190,000 | 190,000 |
| 4 | Տնտեսագետ | 1 | 160,000 | 160,000 |
| 5 | Գործավար, կադրերի տեսուչ | 1 | 115,000 | 115,000 |
| 6 | Անտառային կուլտուրաների ինժեներ | 1 | 120,000 | 120,000 |
| 7 | Անտառպահպանության ինժեներ | 1 | 130,000 | 130,000 |
| 8 | Անտառային տեխնիկ | 2 | 115,000 | 230,000 |
| 9 | Վարորդ | 1 | 105,000 | 105,000 |
| 10 | Աշոցքի անտառապետ | 1 | 140,000 | 140,000 |
| 11 | անտառապահ | 7 | 125,000 | 875,000 |
| 12 | Գյումրիի անտառապետ | 1 | 140,000 | 140,000 |
| 13 | անտառապահ | 6 | 125,000 | 750,000 |
| 14 | Ջաջուղի անտառապետ | 1 | 140,000 | 140,000 |
| 15 | անտառապահ | 4 | 125,000 | 500,000 |
| 16 | Արթիկի անտառապետ | 1 | 140,000 | 140,000 |
| 17 | անտառապահ | 6 | 125,000 | 750,000 |

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավորի քանակը | Պաշտոնային դրույքի չափը | Աշխատավարձի ֆոնդը ամսական, դրամ |
|-----|-------------------|---------------------------|-------------------------|---------------------------------|
| | Ընդամենը | 37 | | 5,025,000 |

Աղյուսակ 60. Ամփոփագիր Գյումրիի անտառտնտեսության բնափայտային արտադրանքների ծավալների

| Հ/հ | Արտադրանքի տեսականին | Տարեթիվը | | | | | |
|----------|--------------------------|--------------|---------------|-------------|---------------|--------------|---------------|
| | | 2018 | | 2021 | | Ընդամենը | |
| | | ծավալը խմ | արժեքը հազ.դր | ծավալը խմ | արժեքը հազ.դր | ծավալը խմ | արժեքը հազ.դր |
| 1 | Վառելափայտ, նույն թվում՝ | 30,60 | 241,60 | 23,70 | 172,83 | 54,30 | 414,43 |
| 1.1 | Կանգունից | 30,60 | 241,60 | 23,70 | 172,83 | 54,30 | 414,43 |
| 1.2 | Թափուկից | - | - | - | - | - | - |
| 2 | Շինափայտ նույն թվում՝ | 2,91 | 73,00 | 5,93 | 187,85 | 8,84 | 260,85 |
| 2.1 | Հատումներից | 2,91 | 73,00 | 5,93 | 187,85 | 8,84 | 260,85 |
| 2.2 | Թափուկից | - | - | - | - | - | - |
| 3 | Ընդամենը | 33,51 | 314,60 | 31,7 | 369,56 | 65,21 | 684,16 |

Աղյուսակ 61. Տեղեկագիր 2020-21 թվականներին իրականացված հիմնական աշխատանքների և ծախսերի ծավալների

| Գործունեության և ծախսերի անվանումը | Ծախսերը, հազար դրամ | |
|--|---------------------|---------|
| | 2020թ. | 2021 թ. |
| Անտառտնտեսական աշխատանքներ | - | - |
| Անտառմշակության աշխատանքներ | 2206,7 | 935,89 |
| Անտառպաշտպանական և անտառպահպանական աշխատանքներ | - | 2053,82 |
| Ընդհանուր արտադրական ծախսեր | - | 278,48 |
| <i>Անտառային եկամուտ, ընդամենը հազ. դրամ, որից</i> | | 369,56 |
| • Բնափայտի արտադրությունից | - | 369,56 |
| • Սղոցանյութի արտադրությունից | - | - |
| • Անտառի կողմնարդյունքից | - | - |
| Պետբյուջեից ֆինանսավորում, հազ. դրամ | 8244,98 | 7626,44 |

Բաժին 13. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13.1. Եզրակացություն նախորդ անտառտնտեսվարման վերաբերյալ

Անտառտնտեսության ընդհանուր մակերեսը 1983 թվականի անտառշինական տվյալի համեմատությամբ 2022թ. ավելացումը 396 հեկտարով բացատրվում է Շիրակի մարզի համայնքների հողային ֆոնդի կադաստրային քարտեզների և անտառտնտեսության ընթացիկ գույքագրմամբ անտառային հողատեսքերի ու սահմանների ճշգրտման հանգամանքով, բացի այդ աշխարհագրական տեղեկատվական համակարգերի հիման վրա իրականացված քարտեզագրումը թույլ է տվել ստանալ առավել ճշգրիտ տվյալներ:

Արդեն իսկ նշվել է, որ անտառտնտեսությունում վերջին տասնամյակներում չեն իրականացվել անտառի վիճակի վերաբերյալ ուսումնասիրություններ, որը թույլ կտար առավել հանգամանալից վերլուծել նախորդ տարիների անտառտնտեսվարման արդյունքները, այդուհանդերձ 2022 թվականի անտառների գույքագրման և գնահատման արդյունքներով կարող ենք փաստել, որ անտառի պահպանությունն իրականացվել է բավարար չափով, բացակայում է զանգվածային հատումները, ոչ մեծ քանակության ինքնակամ հատումները հիմնականում արձանագրված են:

Անտառին զգալի վնաս պատճառող հրդեհներ չեն գրանցվել, վերջին 4 տարիներին ընդհանուր 8,8հա տարածքներ անցել են հրդեհով, սակայն էական վնաս չի պատճառվել:

Անտառօգտագործման տեսանկյունից առկա են լուրջ բացթողումներ, հատկապես ժամանակին չեն իրականացվել ծառուտների աճի և արտադրողականության բարձրացման տեսանկյունից խնամքի հատումների շատ կարևոր լուսավորման և մաքրման հատումների փուլը (մատղաշի խնամք) ինչն էլ բացասաբար է ազդել որոշ ծառուտների ընդհանուր վիճակի վրա:

Անտառհիմնման և անտառվերականգնման աշխատանքերը թէև իրականացվել են ոչ բավարար ծավալներով, սակայն հիմնված անտառմշակույթների վիճակը, հաշվի առնելով նաև կլիմայական ցուցանիշների անտառաճման տեսանկյունից անցանկալի փոփոխությունները, հուսադրող է՝ անբավարար է գնահատվել ընդհանուր անտառմշակույթների 22,2%–ը:

13.2. Առաջարկություններ

1. Անտառների վերականգնման նպատակով նախատեսված տարածքներում անտառվերականգնման համալիր միջոցառումների իրականացում:
2. Սոճու անտառմշակույթների հիմնման ժամանակ, հաշվի առնելով կլիմայի փոփոխության նկատմամբ դիմադրողականության և հարմարողականության բարձրացման կարևորությունը, նախատեսել սոճու հետ լայնատերևավոր

տեսակներով խառը կազմով մշակույթների հիմնում, ինչը կբարձրացնի կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարողականությունը, միաժամանակ կնպաստի հնարավոր հրդեհների մարման աշխատանքներին: Ինչպես նաև հնարավորության դեպքում կազմակերպել նոր հիմնված տնկարկների ոռոգում:

3. Իրականացնել խնամքի հատումներ, պարտադիր նաև երիտասարդ ծառուտներում, ինչպես նաև ցցաչոր, քամատապալ ու ձնակոտոր ծառերի հեռացում

4. Անտառային տարածքների գույքագրման և գնահատման արդյունքներով համայնքների կադաստրային քարտեզների հետ բացահայտված անհամապատասխանությունները և ճշտված քարտեզները սահմանված կարգով ներկայացնել՝ համապատասխան գերատեսչություններում ամրագրելու նպատակով:

5. Առանձնակի ուշադրություն դարձնել հակահրդեհային միջոցառումների իրականացմանը, հատկապես նախագգուշական, հրդեհաշիջման համապատասխան գործիք-սարքավորումների ձեռք բերմանը և ջրի ամբարտակների կառուցմանը:

6. Անտառմշակույթների հիմնում իրականացնել՝

- I-IV բոնիտետների 1 հա մակերեսից ավելի բացատներում, 1հա-ից պակասը հիմնականում վերագրել լանդշաֆտային փոքր բացատներին և թողնել ինքնավերականգնման,
- նոսրուտներում, 1հա-ից պակասը թողնել ինքնավերականգնման,
- անտառվերականգնման միջոցառումներ (հարթակների պատրաստում և կաղնու սերմերի ցանք) իրականացնել ոչ մեծ թեքություններ ունեցող նոսրուտներում, ինչպես նաև ցածր լրիվության ծառուտներում:
- անտառվերականգնման միջոցառումներ նախատեսվող հատկապես համայնքամերձ տարածքները հնարավորության դեպքում մեկուսացնել՝ անասունների արածացումը բացառելու նպատակով: Ցանկապատումը կատարել մետաղյա փշալարով, ինչպես նաև, օգտվելով տեղանքի աշխարհագրական դիրքի ընձեռնած հնարավորությունից, նաև տեխնիկական հատկությունները կորցրած բնափայտով և ջախով:

7. Անտառտնտեսության տարածքում գտնվող «Դողդոջուն կաղամախու ծառուտներ» կենսաբանական հուշարձանի անձնագրավորում՝ համաձայն ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի: